

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ



«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն Փակ բաժնետիրական ընկերություն¹

Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն

Կազմակերպարավական ձևը

ՀՀ, 0023, ք.Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա

Հեռ՝ (+374 12) 55 55 55

Էլ. Փոստ՝ info@finca.am

Ինտերնետային կայք՝ www.finca.am

«Դայմենշն» ՓԲԸ

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն²

Կազմակերպարավական ձևը

ՀՀ, ք. Երևան, 0019, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք

Հեռ՝ +374 10 545670

Էլ.-փոստ՝ info@dimension.am

Ինտերնետային կայք՝ www.dimension.am

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ
ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Երևան 2025

¹ Այսուհետ «ՖԻՆՔԱ» ՓԲԸ տերմինը կօգտագործվի նաև որպես Թողարկող:

² Այսուհետ «Դայմենշն» փակ բաժնետիրական ընկերություն տերմինը կօգտագործվի նաև որպես Տեղաբաշխող:

Արժեթղթերի դասը՝	Անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Արժեկտրոնային եկամտաբերություն՝	
Շրջանառության ժամկետը՝	
Տեղաբաշխման ձևը՝	ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման արժույթը՝	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	մինչև 1,738,000,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր երեսունութե միլիոն) ՀՀ դրամ, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալը՝ առանձին փուլերով (տրանշերով):
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	5
----------------------------------	----------

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
7

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ	8
1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	14
1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	19
1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձ.....	22
1.5. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը	22
1.6. Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ.....	18
1.7. Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները	18
1.8. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը.....	26
1.9. Այլ էական տեղեկություններ.....	26
1.10. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները	26

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

2.1. Ռիսկային գործոններ.....	28
2.2. Հիմնական տեղեկատվություն	29
2.3. Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ.....	30
2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները	37
2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	43
2.6. Լրացուցիչ տեղեկատվություն	44

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
38

3.1. Անկախ աուդիտորները	44
3.2. Ռիսկային գործոններ.....	45
3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին	53
3.4. Բիզնեսի նկարագիրը.....	56
3.5. Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը	61
3.6. Հիմնական միջոցները	62
3.7. Զարգացման վերջին միտումները.....	60
3.8. Շահույթի կանխատեսումը	64
3.9. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	66
3.10. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը	72
3.11. Կառավարման մարմինների գործունեությունը	84
3.12. Հսկող անձինք	86
3.13. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	86
3.14. Լրացուցիչ տեղեկատվություն	87
3.15. Էական պայմանագրերը.....	89
3.16. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	89
3.17. Այլ տեղեկատվություն	89

ԲԱԺԻՆ 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	92
ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը.....	92
ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկման պայմաններ.....	93
ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական հաշվետվություններ.....	102



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ծրագրային ազդագրի բովանդակությունը»:




Ստորագրող անձինք՝

Զարլաշտ Վարդակ (անուն, ազգանուն)	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի նախագահ (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Նիվեդիտա Նիտյանանդ (անուն, ազգանուն)	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ (պաշտոն)		12.05.2025 (ամսաթիվ)
Աննի Փեթրոյան Մալիամի (անուն, ազգանուն)	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռիչարդ Մարնի (անուն, զգանուն)	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ (պաշտոն)	Richard Marney (ստորագրություն)	12.05.2025 (ամսաթիվ)
Գևորգ Տեր- Հովհաննիսյան (անուն, զգանուն)	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ (պաշտոն)		12.05.2025 (ամսաթիվ)
Սթիվեն Մայքլ Հասս (անուն, ազգանուն)	Գլխավոր տնօրեն/Վարչության նախագահ (պաշտոն)		12.05.2025 (ամսաթիվ)




ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆԲԱ ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Անուշ Պետրոսյան (անուն, ազգանուն)	Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2025</u> (ամսաթիվ)
Վարդան Հարոյան (անուն, ազգանուն)	Գլխավոր կոմերցիոն տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	 (ամսաթիվ)
Սուրեն Մարգարյան (անուն, ազգանուն)	Գլխավոր գործառնական տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2025</u> (ամսաթիվ)
Հարություն Չաղրյան (անուն, ազգանուն)	Իրավաբանական վարչության ղեկավար (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2025</u> (ամսաթիվ)
Գայանե Արզումանյան (անուն, ազգանուն)	«Դայմենշն» ՓԲԸ Գլխավոր Տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2025</u> (ամսաթիվ)

Ստորագրությունների իսկությունը հաստատում եմ՝

Սթիվեն Մայքլ Հասս (անուն, ազգանուն)	Գլխավոր տնօրեն/Վարչության նախագահ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>12.05.2025</u> (ամսաթիվ)
---	--	--	--------------------------------



ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ «ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԹՈՂԱՐԿՈՂ ԿԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՁԴԱԳՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԱՁԴԱԳԻՐ) ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՁԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով Թողարկողի և/կամ «Դայմենշն» ՓԲԸ (այսուհետ՝ Տեղաբաշխող) ինտերնետային կայքերում՝ www.finca.am, www.dimension.am:

2022 – 2024 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրն են հանդիսանում Ընկերության աուդիտ արված տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Տեղաբաշխողը չի հավաստում Թողարկողի վերաբերյալ Ազդագրում ներկայացված տեղեկությունների ճշտությունը, չի տալիս որևէ երաշխիք և չի ստանձնում պատասխանատվություն նշված տեղեկություններում սխալների, թերությունների կամ ապակողմնորոշիչ տվյալների հայտնաբերման դեպքում:

Սույն ազդագրում ներկայացված տեղեկատվությունը, բացառությամբ տարեկան ֆինանսական հաշվետվությունների, անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ***Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝***

հայերեն՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ «ФИНКА» УНИВЕРСАЛЬНАЯ КРЕДИТНАЯ ОРГАНИЗАЦИЯ Закрытое
Акционерное Общество.

անգլերեն՝ “FINCA” UNIVERSAL CREDIT ORGANIZATION Closed Joint-Stock
Company.

Թողարկողի կրճապ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ռուսերեն՝ «ФИНКА» УКО ЗАО

անգլերեն՝ “FINCA” UCO CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2ա, գրանցման համարը՝ 13:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2ա:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 12) 55 55 55

էլ. փոստ՝ info@finca.am,

ինտերնետային կայք՝ www.finca.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Կազմակերպության Գանձապետ Արևիկ Հովհաննիսյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+37412) 555555 (1400), էլ. փոստ՝ arevik.hovhannisyan@finca.am:

1.1.1. Կազմակերպության համառոտ նկարագիրը

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2006 թվականի մարտի 28-ին՝ որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական:

Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության առաքելությունն է հիմնավոր լուծումների միջոցով հաղթահարել աղքատությունը՝ օգնելով մարդկանց ստեղծել ակտիվներ, նոր աշխատատեղեր և բարելավել իրենց ապրելակերպը:

Կազմակերպության նպատակն է լինել ոչ ավանդական համայնքային ֆինանսական հաստատություն, որը շահեկանորեն ու ամենայն պատասխանատվությամբ մատուցում է նորարական և արդյունավետ ֆինանսական ծառայություններ՝ հասանելի դարձնելով կայուն, սոցիալապես պատասխանատու ֆինանսական ծառայությունները կարիքավոր անհատներին ու համայնքներին՝ նշված խմբերին հնարավորություն ընձեռելով ներդրում կատարել ապագայի մեջ:

Կազմակերպության հիմնական նպատակն է ցածր եկամուտ ունեցող բնակչությանը հնարավորություն տալ բարելավել իրենց կյանքը և զարգացնել իրենց բիզնեսը՝ ավելի հարմար և արագ վարկատեսակներ առաջարկելու միջոցով: Այդ իսկ պատճառով Կազմակերպությունը կարևորում է ֆինանսական ծառայությունների թվայնացումը և վերջին տարիների ընթացքում զարգացրել է իր առցանց ծառայությունները և նախատեսում է նաև ներդնել մոբայլ հավելված: Թվայնացման միջոցով ներդրվել է որոշումների ընդունման և վարկերի տրամադրման ավտոմատացված համակարգ՝ ռիսկի վրա հիմնված գնագոյացումով:

Կազմակերպության հիմնական նպատակն է նաև իր հաճախորդների համար հանդիսանալ որպես բիզնես գործընկեր, այլ ոչ թե զուտ վարկատու և աջակցել հաճախորդներին ոչ ֆինանսական ծառայություններ մատուցելու միջոցով (ուսուցում և սեմինարներ):

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 490,596 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կազմակերպության միակ բաժնետեր է հանդիսանում «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ» կազմակերպությունը:

1.1.2. Բիզնեսի համառոտ նկարագիրը

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը: Գործունեությունը սկսելուց ի վեր Կազմակերպությունն իր բնույթով հանդիսանում է ունիվերսալ վարկային կազմակերպություն, մասնավորապես, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց, որպես գործակալ կնքում է ԱՊՊԱ և ապահովագրական այլ պայմանագրեր: 2024թ Կազմակերպությունը ներկայացրեց նոր վարկատեսակ մշակված հատուկ կանանց համար: Իր կողմից մատուցվող ծառայություններն ամբողջականացնելու նպատակով Կազմակերպությունը սկսած 2013 թվականից մատուցում է նաև արտարժույթի փոխանակման ծառայություններ:

Վարկավորման գործընթացը Կազմակերպությունն իրականացնում է ինչպես սեփական կապիտալի, այնպես էլ ներգրավված միջոցների հաշվին:

Հաճախորդների սպասարկման գործընթացն առավել հարմարավետ դարձնելու համար, Կազմակերպությունն անընդհատ բարելավվում է վարկավորման գործընթացները՝ առաջարկելով ժամանակակից (թվայնացված) ծառայություններ: Այսպես՝

- 2019 թվականի սկզբից Կազմակերպությունն իր հաճախորդներին առաջարկում է Թաբլետ վարկավորման գործընթացը, որը հնարավորություն է տալիս առանց հաճախորդի մասնաճյուղ այցելության վերցնել հայտը և կատարել վերլուծություն:
- 2020 թվականին Կազմակերպությունը ներդրեց վարկավորման նոր ծրագիր, որը մի քանի անգամ արագացրեց վարկավորման գործընթացը:
- 2024 թվականի վերջում Կազմակերպությունը շուկային ներկայացավ հեռախոսային Հավելվածով:

2020 թվականից Կազմակերպությունը սկսեց վերանայել իր կողմից առաջարկվող հիմնական ծառայությունների սակագները՝ հաճախորդներին առաջարկելով ծառայությունների անհատական պայմաններ (risk-based price): Վերջինս Կազմակերպությանը հնարավորություն տվեց առաջարկել մրցակցային պայմաններ և հետևաբար ամրապնդել իր դիրքը շուկայում:

2022 թվականի հուլիսից Կազմակերպությունը իր հաճախորդներին առաջարկում է Էվոկաբանկի հետ թողարկված համատեղ քարտ (co-branded card), որի միջոցով հաճախորդները վարկերը ստանում են անկանխիկ եղանակով:

2022 թվականին Կազմակերպությունը ներդրեց «Հիփոթեքային վարկ» վարկատեսակը, ինչի շնորհիվ ընդլայնվեց Կազմակերպության հաճախորդների շրջանակը:

2022 թվականի օգոստոսի 23-ից «Գյուղատնտեսական արժեշղթա» վարկային ծրագրի շրջանակներում ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ն ներկայացրել է գյուղատնտեսական վարկատեսակը, որն ուղղված է գյուղատնտեսական մթերքների վերամշակողների և մատակարարների ծախսերի ֆինանսավորմանը:

2022 թվականի սեպտեմբերի 01-ից սկսած Ազգային Հիփոթեքային Ընկերություն ՎՎԿ ՓԲԸ-ի ծրագրի շրջանակներում ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ն տրամադրում է բնակելի անշարժ գույքի ձեռքբերման և կառուցապատման, ինչպես նաև վերանորոգման նպատակով հիփոթեքային վարկեր:

2023 թվականին ՖԻՆՔԱ ՈՒՎԿ-ն ներկայացրել է թեթև քեշ վարկատեսակը, որը հնարավորություն է տալիս հաճախորդին միանգամից իմանալ վարկի հաստատման մասին և արագ ստանալ հաստատված գումարը:

2023թ.-ին ՖԻՆՔԱ Հայաստանի և ամերիկյան հայտին MCE Social Capital ներդրումային ընկերության միջև համագործակցության շրջանակներում ՖԻՆՔԱ Հայաստանը 1,5 մլն դոլարի ֆինանսավորում է ստացել՝ նպատակ ունենալով հավատարիմ մնալ աղքատության հաղթահարման իր առաքելությանը. այն է՝ ստեղծել աշխատատեղեր, աջակցել անապահով ընտանիքներին և բարելավել կյանքի որակն իր ֆինանսական ծառայությունների միջոցով, ինչպես մարզային, այնպես էլ քաղաքային բնակավայրերում:

Ֆինանսական գործառնությունները Կազմակերպության կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ կանխիկ և անկանխիկ եղանակներով:

Կազմակերպությունը միջնաժամկետ և երկարաժամկետ դրամական միջոցներ ներգրավելու նպատակով համագործակցում է այնպիսի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Բեյէֆհարբյու բանկը» (KfW Bankengruppe),

Enabling Capital-ը, Agents for Impact, KIVA REFUGEE INVESTMENT FUND LLC, MCE Social Capital, DWM և այլ:

Հիմնադրման օրվանից Կազմակերպությունը համագործակցել է նաև մի շարք հեղինակավոր միկրոֆինանսավորման զարգացման հիմնադրամների հետ, ինչպես, օրինակ, «responsAbility Investments AG», «Symbiotics», «Blue Orchard», «Triple Jump», «DWM», «BANK IM BISTUM ESSEN eG (BIB)», IFC, EBRD, ADB և այլն»:

2024թ.-ի դեկտեմբերին ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ն շուկային ներկայացավ հեռախոսային Հավելվածով, որի միջոցներով հաճախորդները կարող են օգտվել Ընկերության ծառայություններից, ինչպես նաև տեղեկություններ ստանալ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ՝ առանց ՖԻՆՔԱ-ի մասնաճյուղեր այցելելու: Հավելվածի ներդրման միջոցով ՖԻՆՔԱ ՈՒՎԿ-ն բարձրացրել է վարկավորման գործընթացի արդյունավետությունը, որն էլ իր հերթին նպաստել է վարկավորման ծախսերի նվազմանը, մեծացել է հաճախորդների ներգարավվածությունը և ընդլայնվել է ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի մրցակցունակությունը վարկային շուկայում:

2024թ.-ի ընթացքում ՖԻՆՔԱ ՈՒՎԿ-ն շարունակել է սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացումը՝ կարևորելով ֆինանսական կրթության դերը իր յուրաքանչյուր հաճախորդի կյանքի որակի բարելավման գործում: Դրանցից են Ֆինանսական գրագիտության դասընթացներ, հաճախորդների փորձառության ամսվա շրջանակներում բորքահավքի աջակցման միջոցառումներ, «Կանայք գյուղատնտեսությունում» նախագիծը՝ նվիրված կանանց աջակցմանը ու հզորացմանը և այլ ծրագրեր:

Կազմակերպությունը միջնաժամկետ և երկարաժամկետ դրամական միջոցներ ներգրավելու նպատակով համագործակցում է այնպիսի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Բեյէֆ Դաբլյու բանկը» (KfW Bankengruppe), KIVA REFUGEE INVESTMENT FUND-ը, Enabling Capital-ը, Agents for Impact, MCE Social Capital-ը, DWM-ը և այլ: 2024 թվականի ընթացքում Կազմակերպությունը մոտ 13.5 մլն ԱՄՆ դոլարի միջոցներ է ներգրավել այնպիսի միջազգային գործընկերներից, ինչպիսիք են Enabling Capital-ը, Agents For Impact-ը, KIVA REFUGEE INVESTMENT FUND-ը, DWM-ը (նոր գործընկեր): Ներգրաված միջոցներն ուղղվել են փոքր և միջին բիզնեսների ֆինանսավորմանը, իսկ KIVA REFUGEE INVESTMENT FUND-ից ստացված միջոցները ուղղվել են հիմնականում տեղահանված վարկառուների աջակցմանը և ֆինանսավորմանը:

«ՖԻՆՔԱ»-ն 2018թ.-ին դարձավ առաջին կազմակերպությունը Հայաստանում, որին շնորհվեց «Հաճախորդների պաշտպանության» միջազգային Smart հավաստագիր, իսկ 2025թ.-ի առաջին եռամսյակում ՖԻՆՔԱ Հայաստանը արժանացել է MFR-ի՝ հաճախորդների պաշտպանության հավաստագրման ամենաբարձր ՈՍԿԵ մակարդակի հավաստագրի:

Կազմակերպությունն ունի 32 մասնաճյուղ և վարկավորում է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում: Մասնաճյուղերի ցանկը, հասցեներով ներկայացված է 3.3.1 մասում:

1.1.3 Ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը

Համաձայն 2024թ.–ի աուդիտի ենթարկված հաշվետվությունների, Կազմակերպությունը գեներացրել է 843 մլն. ՀՀ դրամի զուտ շահույթ, որի արդյունքում կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին մեծությանը) կազմել է 12.93%, ակտիվների շահութաբերությունը՝ 3.01%: Լևերիջի գործակիցը (ընդհանուր պարտավորությունների հարաբերությունն ընդհանուր կապիտալին) կազմել է 3.20:

Կազմակերպության ակտիվները 31.12.2024թ.–ի դրությամբ նախորդ տարվա համեմատ աճել են 1.47%-ով կամ մոտ 407.2 մլն ՀՀ դրամով, իսկ պարտավորությունները՝ 0.12%-ով կամ 25.3 մլն ՀՀ դրամով: Դիտարկվող ժամանակահատվածում Կազմակերպության վարկային պորտֆելը գրանցել է 5.79%-ի կամ 1.2 միլիարդ ՀՀ դրամի աճ:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.


հազ. ՀՀ դրամ

	31.12.2024թ.	2023թ.	2022թ.
Ակտիվներ, այդ թվում՝	28,187,989	27,780,800	22,869,191
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	26,098,151	26,284,648	20,481,734
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	22,280,438	21,060,430	18,917,944
Շահույթ կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	728	-	-
Ներդրումային արժեթղթեր	1,618,788	1,663,483	202,073
Պահանջներ բանկերի նկատմամբ	2,198,197	3,560,735	1,361,717
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում	92.59%	94.61%	89.56%

1.1.4 Կազմակերպության կազմակերպչական կառուցվածքը

Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.

Հավելված 1 «ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ տնօրենների խորհրդի 21/02/2024 № 11 / 2024 արձանագրության/ որոշման

«ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Կազմակերպական կառուցվածք


*Կանաչ վանդակները կազմակերպական կառուցվածքի փոփոխություններն են, ղեղին վանդակը խորհրդի նոր ենթակմիտն է
 ** Ենթադրյալ թվային պրոդուկտները
 *** ՆՈՐ- ճվային տրանսֆորմացիայի ենթակմիտն

FMH - FOR INTERNAL USE ONLY

1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Ընդհանուր առմամբ, պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես թողարկող կազմակերպության գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի և պարտատոմսերի հետ կապված ռիսկերի հետ:

1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Կազմակերպությունը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժույթային, գործընկերոջ (Counterparty Risk), գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը: Կազմակերպությունը ռիսկերի կառավարման հարցում առաջնորդվում է ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենսի կողմից մշակված «Դուստր Կազմակերպությունների Քաղաքականությունների Ձեռնարկ»-ով և ներքին մշակված իրավական ակտերով:

Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները, որոնք թողարկողից անկախ են: Նման ռիսկերից զերծ մնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով Թողարկողը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը: Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները գնահատելու համար ներդրողները կարող են օգտվել Թողարկողի ինտերնետային կայքում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններից՝ www.finca.am:

Թողարկողի կողմից որպես առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Վարկային ռիսկը Կազմակերպության վարկառուների, փոխառուների և վերջինիս նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողմից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չկատարելու հավանականությունն է, ինչը կարող է վնաս հասցնել Կազմակերպության կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը Թողարկողի կարևորագույն խնդիրներից է:

ՖՀՄՍ համաձայն հաշվարկված կազմակերպության վարկային պորտֆելը 31.12.2024թ-ի դրությամբ կազմում է 22.28 մլրդ դրամ, որի կազմում 90+ օր ժամկետանցություն ունեցող (չաշխատող) վարկերի կշիռը կազմում է 5.3%: Կապիտալի համարժեքության նորմատիվային

ցուցանիշների գծով կազմակերպությունը գտնվում է նվազագույն սահմանաչափից էականորեն բարձր դիրքերում՝ 31.12.2024թ-ի դրությամբ Առաջին մակարդակի հիմնական հիմնական կապիտալ/ՌԿԱ հարաբերակցությունը կազմում է 46.1%, Ընդհանուր կապիտալ/ՌԿԱ հարաբերակցությունը՝ 47.1%:

Իրացվելիության ռիսկը, երբ Կազմակերպության ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Կազմակերպության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:

Ընկերության իրացվելիության ռիսկի մասին տեղեկատվության մասին երկայացված է ստորև 31.12.2024թ-ի դրությամբ.

Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն	18%
Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն	242.5%

Իրացվելիության ռիսկ	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 3 ամիս	3 ամսից 1 տարի		Ընդամենը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
			1 տարի	1-5 տարի	
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ					
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2.51%	106,286	-	-	106,286
Պահանջներ բանկերի նկատմամբ	3.68%	804,604	1,393,593	-	2,198,197
Ներդրումային արժեթղթեր	7.15%	1,618,788	-	-	1,618,788
Հաճախորդներին տրված վարկեր	26.10%	3,277,635	7,353,646	11,649,157	22,280,438
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ		5,807,313	8,747,239	11,649,157	26,203,709
Ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ					
		1,195,214	-	-	1,195,214
		56,954	-	-	56,954
Այլ ֆինանսական ակտիվներ					
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ		1,252,168	0	0	1,252,168
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ		7,059,481	8,747,239	11,649,157	27,455,877
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ					
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ					
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	7.76%	1,597,984	-	-	1,597,984
	9.08%	800,048.31	4,757,925	8,208,170	13,766,143
Այլ փոխառու միջոցներ	11.47%	1,491,265.62	1,510,318	1,949,536	4,951,120
Թողարկված պարտքային արժեթղթեր	13.32%	46,094.53	102,843	231,364	380,302
Վարձակալության գծով պարտավորություն					
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		3,935,393	6,371,087	10,389,070	20,695,549
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ					
Այլ փոխառու միջոցներ					
Ընդամենը փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		-	-	-	-
Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ					
Այլ ֆինանսական պարտավորություններ					
		526,230	-	-	526,230
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		526,230	-	-	526,230
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		4,461,623	6,371,087	10,389,070	21,221,779
Տոկոսադրույքի զգայունության տարբերություն					
		1,871,921	2,376,152	1,260,088	
Տոկոսադրույքի զգայունության կուտակային տարբերություն		1,871,921	4,248,073	5,508,161	
Ածանցյալ ֆինանսական գործիքներ					
		728	-	-	728
Համախառն՝ արտարժույթի սվոփեր (Ակտիվներ)					

Համախառն՝ արտարժույթի սվոփեր (Պարտավորություն)	52	-	-	52
Իրացվելիության տարբերություն	2,598,535	2,376,152	1,260,088	
Իրացվելիության կուտակային տարբերություն	2,598,535	4,974,687	6,234,775	

Տոկոսադրույքի ռիսկը, երբ շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, տոկոսային եկամուտների և արդյունքում նաև կապիտալի վրա:

Տոկոսադրույքի ռիսկի մասին տեղեկատվությունը 31.12.2024թ-ի դրությամբ ներկայացված է ստորև:

Արժույթ	Բազիսային կետերի ավելացում 2024թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2024թ.	Կապիտալի զգայունություն 2024թ.
ՀՀ դրամ	3.18%	-	(702,300)

Արժույթ	Բազիսային կետերի նվազում 2024թ.	Չուտ տոկոսային եկամտի զգայունություն 2024թ.	Կապիտալի զգայունություն 2024թ.
ՀՀ դրամ	3.18%	-	1,006,300

Արտարժույթային ռիսկը, որը սահմանվում է որպես փոխարժեքի փոփոխության հետևանքով Կազմակերպության ֆինանսական արդյունքների և կապիտալի վրա ունեցած բացասական ազդեցության ռիսկ:

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Կազմակերպության վրա 31.12.2024թ-ի դրությամբ դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում

Արժույթ	Արտարժութային դիրք
USD	-0.2%
EUR	0.7%
RUB	0.6%
Այլ	0.1%

Գործընկերոջ ռիսկի սահմանաչափին իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ: Կախված ռիսկի ծագման աղբյուրից՝ գործընկերոջ ռիսկը կարելի է տրոհել ռիսկերի հետևյալ տեսակների՝ մայր գումարի կորստի ռիսկ, փոխարինման ռիսկ, առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ, թողարկողի ռիսկ:

Ընդհանուր փնտրեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Կազմակերպության կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես՝ վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Թողարկողը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը:

Գործառնական ռիսկը, որը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է կորուստ բերել Թողարկողի կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև Թողարկողի համբավը:

1.2.2. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Կազմակերպությունը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանն՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժույթային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռքբերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է որդեգրած ռազմավարությանը համաձայն: Կազմակերպության գործունեությունը մշտապես գտնվում է Կազմակերպության տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով

Կազմակերպության կողմից առաջարկվող ծառայությունները և դրանց սակագները շուկայի պահանջներին:

31.12.2024թ.-ի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են 1.47%-ով կամ 407.2 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 28.19 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2023թ.-ի վերջի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա նկատմամբ աճել էին 4.9 մլրդ ՀՀ դրամով կամ 21.48%-ով՝ կազմելով՝ 27.78 մլրդ ՀՀ դրամ:

31.12.2024թ.-ի դրությամբ Կազմակերպության պարտավորությունների ծավալը կազմել է 21.48 մլրդ ՀՀ դրամ աճելով 0.12%-ով կամ 25.3 մլն ՀՀ դրամով, իսկ 2023թ. վերջի դրությամբ Կազմակերպության պարտավորությունները նախորդ տարվա նկատմամբ աճել են 4.4 մլրդ ՀՀ դրամով կամ 26.00%-ով:

Կազմակերպության ընդհանուր կապիտալը 31.12.2024թ.-ի դրությամբ նախորդ տարվա համեմատ աճել է 381.9 մլն ՀՀ դրամով կամ 6.03%-ով և կազմել 6.7 մլրդ ՀՀ դրամ: Կազմակերպության ընդհանուր կապիտալը 31.12.2023թ.-ի դրությամբ նախորդ տարվա նկատմամբ աճել է 484 մլն դրամով կամ 8.30%-ով՝ կազմելով 6.3 մլրդ ՀՀ դրամ:

2024 թվականի ընթացքում Կազմակերպությունը գեներացրել է 843 մլն ՀՀ դրամի զուտ շահույթ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կազմել է 485 մլն ՀՀ դրամ: Կապիտալի և ակտիվների շահութաբերության ցուցանիշները 2024 թվականին կազմել են համապատասխանաբար՝ 12.93% և 3.01%:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը 31.12.2024 թ.-ի դրությամբ կազմել է 4,905,960,000 ՀՀ դրամ, որը բաղկացած է 490,596 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2024թ. դեկտեմբերի 31-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագրի գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները ներկայացված են ստրոն:

Ընդհանուր պարտավորությունները նվազել են 6%-ով կազմելով 20.2 մլրդ ՀՀ դրամ 2025թ.-ի 1-ին եռամսյակի դրությամբ համեմատած 2024թ.-ի հետ: Զուտ շահույթը նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը նվազել է 52.68%-ով կազմելով 111 հազ. ՀՀ դրամ 2025թ.-ի 1-ին եռամսյակի դրությամբ համեմատած 2024թ.-ի հետ:

Ազդագրի ԿԲ գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Կազմակերպության դեմ չկան և չեն սպասվում դատական հայցեր, որոնք կարող են նյութական, բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ Կազմակերպության զարգացման հեռանկարների վրա:

Կազմակերպությունը համապատասխանում է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունների պայմանագրերով ստանձնած բոլոր ֆինանսական նորմատիվներին:

Կազմակերպության ղեկավարությունը մշտապես իր ուշադրության ներքո է պահում նաև Կազմակերպության կազմակերպական կառուցվածքը արդիական և ժամանակակից բիզնեսի

վարման կանոններին համապատասխանեցնելու խնդիրը, որի հետևանքով հնարավոր են Թողարկողի կազմակերպական կառուցվածքի փոփոխություններ, որոնք միտված կլինեն Կազմակերպության գործունեության բարելավմանը և արդյունավետության ու շահութաբերության բարձրացմանը:

հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	2024 (աուդիտ անցած)	2023 (աուդիտ անցած)	2022 (աուդիտ անցած)
Ակտիվներ	28,187,989	27,780,800	22,869,191
Պարտավորություններ	21,477,717	21,452,414	17,025,804
Կապիտալ	6,710,272	6,328,386	5,843,387

հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	2024 (աուդիտ անցած)	2023 (աուդիտ անցած)	2022 (աուդիտ անցած)
Զուտ տոկոսային եկամուտ	3,399,416	3,216,019	3,278,138
Գործառնական եկամուտ	4,149,361	3,429,590	2,728,744
Զուտ շահույթ/վնաս	842,637	484,999	6,979

Հիմնական տնտեսական նորմատիվներ 31/12/2024թ. դրությամբ

Նորմատիվներ (հազ. դրամ)	Փաստացի մեծությունը	ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	4,905,960	150,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	6,460,509	1,000,000	Խախտում առկա չէ
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	29.4%	12.0%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	0.9%	25.0%	Խախտում առկա չէ
Ն51 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	0.0%	10.0%	Խախտում առկա չէ
Ն52 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից	0.0%	5.0%	Խախտում առկա չէ

շեղումը			
---------	--	--	--

1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձ

Կազմակերպության 2022-2023թթ. Ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է **«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ**-ն, որի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0015, Գ.Լուսավորիչի 9, Երևան Պլազա Բիզնես Կենտրոն, հեռ.՝ (+374 10) 500-964:

2024թ. Ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է **«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ**-ն, որի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0069, Դավիթ Անհաղթի փող., 23/6 շենք, 5-րդ հարկ, տարածք 7, հեռ.՝ (+374 60) 528-899: Ինտերնետային կայք՝ <http://www.bdoarmenia.am>, **«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ**-ն հանդիսանում է **«ԲԻ-ԴԻ-Օ Ինտերնեշնլի»** անդամ:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: 2022-2024թթ. աուդիտորական ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ներկայացված են կից Հավելվածներում: Վերջին 5 տարիների ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը

Թողարկողի կանոնադրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները՝

- ✓ **Բաժնետերերի ժողով,**
- ✓ **Տնօրենների խորհուրդ,**
- ✓ **Վարչություն,**
- ✓ **Գլխավոր տնօրեն:**

Կազմակերպության Բաժնետերերի ժողովը կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Կազմակերպության Տնօրենների խորհուրդն ընտրվում է Բաժնետերերի որոշմամբ՝ Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Վարչությունը և Գլխավոր տնօրենը

կառավարում են Վարկային կազմակերպության առօրյա ընթացիկ գործունեությունը:
 Կազմակերպության Տնօրենների խորհուրդը բաղկացած է հինգ անդամներից.

	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1.	Զարլաշտ Վարդակ	Խորհրդի նախագահ	ավելի քան 25 տարի
2.	Ռիչարդ Մարնի	Խորհրդի անդամ	ավելի քան 50 տարի
3.	Աննի Փեթրոյան Մալիամի	Խորհրդի անդամ	ավելի քան 25 տարի
4.	Նիվեդիտա Նիտյանանդ	Խորհրդի անդամ	ավելի քան 19 տարի
5.	Գևորգ Տեր-Հովհաննիսյան	Խորհրդի անդամ	ավելի քան 23 տարի

Կազմակերպության Վարչությունը բաղկացած է հինգ անդամներից.

	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1.	Սթիվեն Մայքլ Հասս	Վարչության նախագահ, Գլխավոր տնօրենի,	ավելի քան 32 տարի
2.	Անուշ Պետրոսյան	Վարչության անդամ, Գլխավոր ֆինանսական տնօրեն և գլխավոր հաշվապահ	ավելի քան 26 տարի
3.	Վարդան Հարոյան	Գլխավոր կոմերցիոն տնօրեն	ավելի քան 15 տարի
4.	Հարություն Զադրյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության ղեկավար	ավելի քան 15 տարի
5.	Սուրեն Մարգարյան	Գլխավոր գործառնական տնօրեն	ավելի քան 20 տարի

Կազմակերպության աշխատակիցների թիվը նշված ժամանակաշրջանների վերջի դրությամբ
 կազմել է.

	2024թ .	2023 թ.	2022 թ.	2021 թ.
Աշխատակիցների ցուցակային թվաքանակը	332	328	356	371

2011թ. նոյեմբերի 1-ից «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ միակ բաժնետերն է հանդիսանում «ՖԻՆՔԱ
 Մայքրոֆայնենս Կոոպերատիվ» ՅՈՒ. Էյ նիդերլանդական կազմակերպությունը: Վերջինս ստեղծվել
 է Նիդերլանդներում «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Հոլդինգ Քոմփանի» ՍՊԸ և «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ»
 ՍՊԸ կողմից: «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հայտարարված և տեղաբաշխված բաժնետոմսերը կազմել
 են 490,596՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կազմակերպության

կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960,000 ՀՀ դրամ:

1.6. Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2017 թվականից ի վեր կատարել է պարտատոմսերի 19 թողարկում, որոնցից 5-ը 31.03.2025թ. դրությամբ գտնվում են շրջանառության մեջ:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾԱՎԱԼԸ

31.12.2024թ. դրությամբ

Արժեթուղթ	Շրջանառության մեջ առկա ծավալ	Արժույթը	Արժեկտրոնի եկամտաբերություն	Շրջանառության ժամկետ	Մարման ամսաթիվ
AMFNCAB2IER1	1,217,400,000	ՀՀ դրամ	11.50%	36 ամիս	12.02.2028
AMFNCAB2HER3	850,000,000	ՀՀ դրամ	11.75%	36 ամիս	27.11.2026
AMFNCAB2GER5	1,100,000,000	ՀՀ դրամ	12.00%	30 ամիս	12.12.2026
AMFNCAB2EER0	800,000,000	ՀՀ դրամ	13%	24 ամիս	30.05.2025
AMFNCAB2FER7	1,791,900	ԱՄՆ դոլար	7.50%	24 ամիս	30.05.2025

1.7. Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները

Պարտատոմսերի տեսակը՝	անվանական արժեկտրոնային
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Պարտատոմսերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը՝	ոչ փոխարկելի
Պարտատոմսերի թողարկման արժույթը՝	ՀՀ դրամ
Պարտատոմսերի	մինչև 1,738,000,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր երեսունուրե միլիոն) ՀՀ դրամ, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ

Թողարկման ծավալը՝	Թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալը՝ առանձին փուլերով (տրանշերով):
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը՝	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը՝	
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝	
Պարտատոմսերի տրոսադրույքը՝	
Պարտատոմսերի շրջանառության ձևը՝	

Կազմակերպության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն օգտագործվելու են վարկային պորտֆելի աճը ֆինանսավորելու նպատակով:

Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ենթակա են որոշման «ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի կողմից, յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ: Թողարկման վերջնական պայմանները հրապարակվելու են Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.finca.am և www.dimension.am:

1.8. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով՝ Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ բացառությամբ Շուկա ստեղծողի և տեղաբաշխողի կողմից ձեռքբերման ենթակա պարտատոմսերի: Թողարկողի և Տեղաբաշխողի կողմից սահմանվում է պոտենցիալ Շուկա ստեղծողի և Տեղաբաշխողի կողմից ձեռքբերման ենթակա պարտատոմսերի ծավալ:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ հրապարակվելու են Թողարկողի, ինչպես նաև Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ համապատասխանաբար՝ www.finca.am, www.dimension.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

1.9. Այլ էական տեղեկություններ

Թողարկողի ֆինանսական հաշվետվությունները հասանելի են Թողարկողի պաշտոնական կայքում՝ www.finca.am, ինչպես նաև Ազգագրին կից Հավելվածներում:

1.10. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2024 (աուդիտ անցած)	2023 (աուդիտ անցած)	2022 (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	842,637	484,999	6,979
Սեփական կապիտալի միջին մեծություն	6,519,329	6,085,887	5,839,898
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	12.93%	7.97%	0.12%

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	842,637	484,999	6,979
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	27,984,395	25,324,996	21,781,773
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	3.01%	1.92%	0.03%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	842,637	484,999	6,979
Գործառնական եկամուտ	4,149,361	3,429,590	2,728,744
Զուտ շահույթի մարժա (NPM), %	20.31%	14.14%	0.26%
Գործառնական եկամուտ	4,149,361	3,429,590	2,728,744
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	27,984,395	25,324,996	21,781,773
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	14.83%	13.54%	12.53%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	27,984,395	25,324,996	21,781,773
Սեփական կապիտալի միջին մեծություն	6,519,329	6,085,887	5,839,897
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	4.29	4.16	3.73
Զուտ տոկոսային եկամուտ	3,399,416	3,216,019	3,278,138
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	26,191,399	23,383,191	19,365,672
Զուտ փոկոսային մարժա (NIM)	12.98%	13.75%	16.93%
Տոկոսային և կոմիսիոն եկամուտ	5,290,191	4,949,266	4,347,202
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	26,191,399	23,383,191	19,365,672
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	20.20%	21.17%	22.45%
Տոկոսային ծախսեր	1,890,775	1,722,143	1,229,400
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	20,847,914	20,805,666	16,057,490
Ծախսարարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են փոկոսային ծախսեր, %	9.07%	8.28%	7.66%

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	842,637	484,999	6,979
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	490,596	490,596	490,596
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	1.72	0.99	0.01
ՍՊՐԵԴ	11.13%	12.89%	14.89%

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ռիսկային գործոններ

Արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Թողարկողի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:

2.1.1. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Կազմակերպությունը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող

է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանը՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Պարտատոմսերին առնչվող հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել հետևյալները.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Վերջինս կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռքբերման գինը:

Կազմակերպությունը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով, այն է՝ շուկա ստեղծողի (market maker) միջոցով ապահովել պարտատոմսերի իրացվելիությունը: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով:

Արտարժույթային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Ուստի, այս իմաստով արտարժույթային ռիսկ կարող են կրել այն ներդրողները, ովքեր իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով ստիպված կլինեն իրենց ֆինանսական միջոցները փոխարկել այլ արժույթներից ՀՀ դրամի:

Տոկոսադրույքի ռիսկը: Տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Թողարկողի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող ընդհանուր իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

2.2. Հիմնական տեղեկատվություն

2.2.1. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Կազմակերպության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն օգտագործվելու են վարկային պորտֆելի աճը ֆինանսավորելու նպատակով: Վարկային պորտֆելի աճին աջակցելու նպատակով կազմակերպությունը 2024թ.-ի ընթացքում մշակել և ներդրել է նոր վարկատեսակներ:

Կազմակերպության կողմից հետևողականորեն իրականացվում է ֆինանսավորման աղբյուրների տարատեսականացման (դիվերսիֆիկացիա) գործուն քաղաքականություն, որի նպատակն է ապահովել մեկ ֆինանսավորողի կամ մի քանի ֆինանսավորողների խմբի ռիսկի նվազեցումը, հաշվեկշռի երկարաժամկետ պարտավորությունների մասի ֆինանսավորման կայուն ենթակառուցվածքների ստեղծումն ու գործարար հարաբերությունների զարգացումը:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնում ենք, որ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

2.3. Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ

«ՖԻՆ-ՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ պարտատոմսերն անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից:

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.14 կետի պահանջները «ՖԻՆ-ՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2025թ. փետրվարի 26-ին դիմում է ներկայացրել ՀՀ ԿԲ՝ ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու համար բավարարում ստանալու նպատակով:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԲ 30.04.2025թ Թիվ 13.3.01-22/1525 գրությունը պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու վերաբերյալ «ՖԻՆ-ՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ դիմումը համարվում է բավարարված:

2.3.1. Պարտատոմսերի պայմանները

Պարտատոմսերի տեսակը	Անվանական արժեկտրոնային
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի
Պարտատոմսերի թողարկման արժույթը	ՀՀ դրամ
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը	մինչև 1,738,000,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր երեսունութ միլիոն) ՀՀ դրամ, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալը՝ առանձին փուլերով (տրանշերով):
Պարտատոմսերի քանակը	
Թողարկման և տեղաբաշխման օրը	
Տեղաբաշխման ձևը	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆ-ԲԱ» ՈւՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը	
Արժեկտրոնի եկամտաբերությունը	
Պարտատոմսերի ռեեստրը	Պարտատոմսերի ռեեստրը ենթակա է վարման «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից:
Պարտատոմսերի ապահովվածությունը	Առաջարկվող պարտատոմսերն ապահովված չեն:
Տեղաբաշխող	Համաձայն Թողարկողի և «Դայմենշն» ՓԲԸ-ի (տեղաբաշխող) միջև 11.03.2025թ. կնքված արժեթղթերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին պայմանագրի:
Շուկա Ստեղծող	Ընկերությունը նախատեսում է օգտվել Շուկա ստեղծողի ծառայություններից:
Պարտատոմսերի տեղաբաշխումը	Պարտատոմսերը տեղաբաշխվում են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման

կանոններով» սահմանված կարգով: Աճուրդի տևողության, ինչպես նաև աճուրդի անցկացման այլ մանրամասները յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվեն «ՖԻՆ-ՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով

Թողարկումը	Համաձայն պարտատոմսերի թողարկման վերաբերյալ Թողարկողի Տնօրենների Խորհրդի կողմից 16.04.2025թ. - ին ընդունված թիվ 19/2025 որոշման:
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆ-ՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Արժեկտրոնների հաշվարկման օրերը	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆ-ՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով
Օրերի հաշվարկման պայմանականությունը	<p>փաստացի/փաստացի</p> <p>DCS=Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1</p> <p>DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1</p> <p>DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2</p> <p>որտեղ՝</p> <p>D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է.</p> <p>D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է</p> <p>D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:</p>
Արժեկտրոնի կուտակումը	

$$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$$

որտեղ

AI - կուտակված տոկոս,

FV - պարտատոմսերի անվանական արժեք,

C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարում Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրվանից,

Պարտատոմսերի գինը

Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$DP = \frac{C}{f} \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC -գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարում

N -հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

C - միավոր պարտատոմսի տարեկան արժեկտրոնը

y - մինչև մարում եկամտաբերություն,

i - արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից,

FV- պարտատոմսի անվանական արժեք:

Պարտատոմսերի եկամտաբերությունը	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆԲԱ» ՈւՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Պարտատոմսերի մարման օրը	Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆԲԱ» ՈւՎԿ ՓԲԸ Խորհրդի առանձին որոշումներով
Արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումը	ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով, արժեկտրոնի հաշվարկման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 18:00-ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Թողարկողը արժեկտրոնի վճարման/

պարտատոմսերի մարման կատարման օրը հանձնարարական է տալիս իր սպասարկող բանկին՝ համապատասխան վճարումները փոխանցելու Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածքում գործող բանկերում բացված բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ)։ Թողարկողը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Թողարկողը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը։ Այս դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ։

Պարտատոմսերի մարման կատարում	Պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում։ Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են։
Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում	Տեղաբաշխումից հետո արժեթղթերի առուվաճառքը երկրորդային շուկայում կարող է իրականացվել բացառապես կարգավորվող շուկայում։
Ցուցակումը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով։ Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի։

2.3.2. Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Կազմակերպության առաջարկվող պարտատոմսերի մարումների և Կազմակերպության կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա։ Այսինքն, Կազմակերպությունը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերն ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ։ Կազմակերպության սնանկության դեպքում Կազմակերպության գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ։ Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների

և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգի:

Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները՝ կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Կազմակերպության պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

2.3.3. Տեղեկություններ պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքների վերաբերյալ

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

- ✓ ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը,
- ✓ իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ,
- ✓ թողարկման օրվանից հաշված արժեկտրոնների վճարման պարբերականությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
- ✓ պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
- ✓ Թողարկողի կողմից Պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից:
- ✓ օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
- ✓ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք:
- ✓ Օրենքով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Օրենքով և իրավական ակտերով սահմանված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների սահմանափակումներ չկան:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՄԲ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՅՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴԴԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ունենալ սեփական (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռքբերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման նպատակով:

Կազմակերպության պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից՝ ուղղակիորեն կամ վերջինիս հաշվի օպերատորների միջոցով:

ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Թողարկողի անվանական պարտատոմսերի թողարկման մասին վերջինիս խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

2.3.4. Իրավասու մարմնի որոշումը նոր թողարկման մասին

«ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվելու են համաձայն Կազմակերպության Տնօրենների խորհրդի 2025թ. ապրիլի 16-ին «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» N19/2025 որոշման, վերջինով սահմանվել է թողարկել և տեղաբաշխել մինչև 1,738,000,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր երեսունույթ միլիոն) ՀՀ դրամ, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալը՝ առանձին փուլերով (տրանշերով):

Թողարկվող դրամային պարտատոմսերի անվանական արժեքը սահմանվել է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

Միաժամանակ, սահմանվել է, որ տեղաբաշխումը պետք է իրականացվի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով:

Կազմակերպության Տնօրենների խորհրդի որոշմամբ սահմանվել է, որ «ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում՝ բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու հայտի՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կողմից մերժման դեպքի, որի պարագայում տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և պարտատոմսերի դիմաց վճարված, ինչպես նաև հաշվեգրված արժեկտրոնների գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:

2.3.5. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Կարևոր ծանուցում

Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ իր կողմից թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարելիս ներդրողները արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման վերաբերյալ սույն բաժնում ներկայացված տեղեկատվությունը չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և հիմնվեն վերջինիս վրա, ուստի խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման կամ փոփոխության արդյունքում ներդրողների ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

✓ **Շահութահարկ** (իրավաբանական անձանց դեպքում),

✓ **Եկամտային հարկ** (Ֆիզիկական անձանց դեպքում):

Պարտատոմսերից կարելի է եկամուտ ստանալ հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը)

2. Կապիտալի հավելած (ձեռքբերման պահից հետո պարտատոմսի գնի աճը, հաշվարկվում է որպես մինչև մարման օրը պարտատոմսի վաճառքի և գնման գնի դրական տարբերություն)

Շահութահարկ

Շահութահարկ վճարողներ են համարվում ՀՀ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Այս պահին շահութահարկի դրույքը 18 տոկոս է:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի համար կազմում է 10 տոկոս: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ.-ի մարտի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող Ֆոնդային բորսայում մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամտի, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք ՀՀ գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել են մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Այս պահին եկամտային հարկի դրույքաչափը 10 տոկոս է: Թողարկողի պարտատոմսերում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ.-ի մարտի 1-ից ՀՀ-ում գործող Ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից ստացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է 2 տարուց: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք ՀՀ գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել են մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

Վերոնշյալ հարկային արտոնությունները չի տարածվում Ընկերության պարտատոմսերի վրա: Ընկերության պարտատոմսերը այս պահին չեն ընկում վերոնշյալ արտոնության տակ և եթե օրենքի փոփոխություն լինի Ընկերությունը լրացուցիչ կտեղեկացնի դրա վերաբերյալ:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

- ✦ Ազդագրի շրջանակում առաջարկը կարող է իրականացվել Ազդագրի հրապարակմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում՝ պայմանով, որ առկա է ՀՀ ԿԲ թույլտվությունը:
- ✦ մինչև 1,738,000,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր երեսունուրթ միլիոն) ՀՀ դրամ, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալը՝ առանձին փուլերով (տրանշերով):
- ✦ Թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը կազմելու է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
- ✦ Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները կսահմանվեն Կազմակերպության Տնօրենների խորհրդի առանձին որոշումներով: Այդ մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.finca.am, www.dimension.am:
- ✦ Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով՝ Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ բացառությամբ Շուկա ստեղծողի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի: Ընդ որում՝ տեղաբաշխման աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:
- ✦ Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ պաշտոնական կայքում՝ www.amx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել (օգտվել առաջարկից) Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:
- ✦ Բորսայի տարբեր մասնակիցներ կարող են սահմանել աճուրդին մասնակցելու (առաջարկից օգտվելու) տարբեր գործընթացներ, պարտատոմսերի դիմաց վճարումներ կատարելու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերը ստանալու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերի վերաբերյալ քաղվածք ստանալու ձևեր, ներդրողների հայտերի բավարարման արդյունքների մասին իրազեկման կարգեր և ձևեր, ինչպես նաև սահմանել տարբեր սակագներ: Այդ իսկ պատճառով, Կազմակերպությունը չի կարող սպառիչ տեղեկություններ հրապարակել նշված հարցերի վերաբերյալ և հորդորում է Բորսայի անդամ չհանդիսացող պոտենցիալ ներդրողներին ուսումնասիրել Բորսայի անդամների կողմից առաջարկվող պայմանները իրենց համար լավագույն տարբերակ գտնելու համար:
- ✦ Պարտատոմսերի թողարկման օրը՝ Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆԵԼԱ» ՈւՎԿ ՓԲԸ Տնօրենների խորհրդի առանձին որոշումներով:

- ✚ Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ժամանակ Կազմակերպության և Տեղաբաշխողի կողմից սահմանվում է պոտենցիալ Շուկա ստեղծողի և Տեղաբաշխողի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալ:
- ✚ Պարտատոմսերի տեղաբաշխման օրը, իսկ մի քանի օր լինելու դեպքում տեղաբաշխման սկզբի և ավարտի օրերը, Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «ՖԻՆ-ՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ Տնօրենների խորհրդի առանձին որոշումներով:
- ✚ Տեղաբաշխման օրվանից/տեղաբաշխումը մի քանի օր լինելու դեպքում՝ տեղաբաշխման սկզբից/ առնվազն 3 աշխատանքային օր առաջ Կազմակերպությունն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Կազմակերպությունը նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով:
- ✚ Գնորդները պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով գնման մրցակցային հայտեր են ներկայացնում տեղաբաշխման համակարգ՝ տեղաբաշխման օրվա/օրերի/ ժամը 11⁰⁰-ից մինչև 13³⁰-ը: Գնորդներն իրավունք ունեն հետ կանչել կամ փոփոխել իրենց կողմից ներկայացված հայտերը և նոր հայտեր մուտքագրել մինչև 13³⁰-ը: Տեղաբաշխողի կողմից աճուրդի անցկացումը, որի ընթացքում տեղի է ունենում արժեթղթերով առքուվաճառքի գործարքների կնքման գործընթացը, տևում է մինչև տեղաբաշխման օրվա ժամը 15⁰⁰-ն:
- ✚ Գնման մրցակցային հայտով գործարքները կնքվում են այն գներով, որոնք նշված են գնման հայտերում՝ ըստ գների նվազման հաջորդականության: Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:
- ✚ Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդն իրականացվելու է դրամական միջոցների և պարտատոմսերի նախնական դեպոնացմամբ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված կարգով: Տեղաբաշխման ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված դրամական միջոցների սահմաններում, իսկ տեղաբաշխողը՝ նախապես դեպոնացված արժեթղթերի սահմաններում: Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում գնորդները կարող են կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումներ և ապադեպոնացումներ՝ Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» և ըստ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված ընթացակարգերի:
- ✚ Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված մրցակցային հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի համար սահմանափակում չկա: Գնորդը կարող է տեսնել միայն իր կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը:
- ✚ Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է չեղյալ համարվել Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ով և «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված ընթացակարգերով և դեպքերում:

- ✦ Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում:
- ✦ Տեղաբաշխման ավարտից հետո Բորսան «Տեղեկատվության բացահայտման կանոններին» համապատասխան կազմակերպում է տեղաբաշխման արդյունքների հրապարակումն իր պաշտոնական կայքում:
- ✦ Թողարկողն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.finca.am, տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է աճուրդի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկայացնելով առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված գինը (եկամտաբերությունը) և այլն:
- ✦ Թողարկողի պարտատոմսերի դիմաց սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորների կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

✦ **Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը**

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն չի նախատեսվում Թողարկողի խորհրդի կողմից: Տեղաբաշխման ժամանակ հայտ–հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին ետ վերադարձման գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

✦ **Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը**

Հայտի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտերը համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը: Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտերը պատշաճ կերպով առաքելուց, Թողարկողի կողմից հայտի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

✦ **Նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել ձեռքբերման (բաժանորդագրության) հայտերում:**

Թողարկման ընթացքում կարող են լինել Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ, եթե նման որոշում կայացվի Թողարկողի խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.4.2. Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 1 (մեկ) ժամվա ընթացքում Բորսայի իրավասու ստորաբաժանումը Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ին համապատասխան ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականները և ուղարկում Բորսայի համապատասխան անդամին: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկանում են Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

2.4.3. Առաջարկի գինը

Տեղաբաշխման համակարգում գրանցվելուց հետո տեղաբաշխման մասնակիցները տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից տեղաբաշխման համակարգ են մուտքագրում պարտատոմսերի գնման հայտերը:

Պարտատոմսերի լրիվ գինը տեղաբաշխման առաջին օրվանից սկսած, հաշվարկվում է 2.3 կետում նշված բանաձևի հիման վրա: Ներդրողները աճուրդը կազմակերպողին ներկայացվող հայտում նշում են ձեռք բերվող պարտատոմսերի պահանջվող եկամտաբերությունը/գինը և պարտատոմսերի այն ծավալը, որը ներդրողը պատրաստ է ձեռք բերել հայտում ներկայացված եկամտաբերությամբ/գնով: Հայտերի բավարարման կտրման գնի վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար կներառվի պարտատոմսերի տեղաբաշխման վերաբերյալ հրապարակվող համապատասխան տրանշով թողարկվող պարտատոմսերի վերջնական պայմանների և հայտարարության մեջ:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում (www.amx.am):

Արժեթղթերի հաշիվները բացվում և սպասարկվում են ՀԿԴ հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է ՀԿԴ պաշտոնական ինտերնետային կայքում (www.cda.am):

Բորսայի անդամ հանդիսացող ներդրողներից տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվում են միջնորդավճարներ Բորսայի Սակագների մասին կանոններով սահմանված չափերով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց կողմից ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվող միջնորդավճարների մասին կարող են տեղեկանալ Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին:

2.4.4. Տեղաբաշխումը

2.4.4.1. Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Ծրագրային ազդագրի հրապարակման պահին Թողարկողը որևէ տեղաբաշխողի հետ երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու վերաբերյալ կնքված պայմանագիր չունի: Սակայն, տեղաբաշխման առանձին թողարկումների համար Թողարկողը կարող է ներգրավել երաշխավորված տեղաբաշխում իրականացնողների: Այդ պարագայում, տեղաբաշխողներին վերաբերող տեղեկատվությունը (այդ թվում՝ անվանումները, գտնվելու վայրերը, երաշխավորված ծավալը և այլն) ենթակա է ներկայացման Թողարկման վերջնական պայմաններով:

2.4.4.2. Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր «Դայմենշն» փակ բաժնետիրական ներդրումային ընկերության հետ (գրանցված ԿԲ-ի կողմից, գրանցման համար 14, լիցենզիա 0014, գրանցման հասցե՝ ՀՀ, գ. Երևան, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք), հեռ.՝ +(374 10) 54 56 70, էլ. փոստ՝ info@dimension.am, պաշտոնական ինտերնետային կայք՝ www.dimension.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի դեպքում պարտատոմսերի տեղաբաշխման պարտատոմսերի ծավալը, քանակը, պարտատոմսերի տեղաբաշխման կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի իրավունքներն ու պարտականությունները, Թողարկողի և Տեղաբաշխողի պատասխանատվությունը կսահմանվեն վերջիններիս միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրերով:

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ժամանակ ընտրվում է Շուկա ստեղծող ընկերություն: Շուկա ստեղծող ընկերության և Տեղաբաշխողի կողմից սահմանվում է պոտենցիալ Շուկա ստեղծողի կողմից ձեռքբերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալ, որը Շուկա ստեղծողի կողմից ձեռք է բերվում անվանական արժեքով:

Համաձայն կնքված պայմանագրի՝ «Դայմենշն» ՓԲԸ-ն պարտավորվել է լավագույն ջանքերի գործադրմամբ, գնել Թողարկողի կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի թողարկման ծավալի 2.5%-ի չափով: Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխում սկսվելու է առանց տեղաբաշխողի և շուկա ստեղծողի կողմից գնված ծավալների:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.amx.am: Տեղաբաշխումից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի առքուվաճառքի գործարք կնքելու համար ներդրողները պետք է դիմեն կա՛մ ներդրումային ընկերություններին, կա՛մ բրոքերային ծառայություն մատուցող բանկերին:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք պետք է ունենան արժեթղթերի հաշիվներ,

որոնք բացվում և սպասարկվում են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ (www.cda.am):

Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը, պարտավոր է նաև որևէ բանկում իր անվամբ բացել դրամային բանկային հաշիվ, և այդ հաշվի վերաբերյալ տվյալները ներկայացնել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին՝ պարտատոմսերում կատարված ներդրումների մարման և արժեկտրոնային եկամուտների ստացման համար:

2.4.4.3. Տեղաբաշխման պայմանները

Համաձայն Թողարկողի և Տեղաբաշխողի միջև կնքված արժեթղթերի չերաշխավորված պայմանագրի Տեղաբաշխման վճարը կազմում է տեղաբաշխված ծավալի 0.45 տոկոսը:

Բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու ժամանակ ներդրողը պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր ներդրումային ծառայություն մատուցող անձի միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի ներդրումային ծառայություն մատուցող անձի հետ:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (այսուհետ նաև **Դեպոզիտարիայի ենթապահառու**)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ.՝ +374 60 615 555, +374 10 543 321):

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը սահմանված կարգով դիմում է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ՝

պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի հայտը հնարավոր է չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Կազմակերպության Տնօրենների խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

Թողարկողը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Թողարկողի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի «Շուկա ստեղծողի կանոններ»-ով: Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

2.6. Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման և մշակման համար որպես խորհրդատու հանդես է եկել «Դայմենշն» ՓԲԸ-ն: Ներկայացված տեղեկատվությունն անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

Կազմակերպությանը և Կազմակերպության կողմից տեղաբաշխված պարտատոմսերին վարկանշող կազմակերպությունների կողմից որևէ վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Անկախ աուդիտորները

Կազմակերպության 2022-2023թթ. Ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է **«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն**, որի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0015, Գ.Լուսավորիչի 9, Երևան Պլազա Բիզնես Կենտրոն, հեռ.՝ (+374 10) 500-964: Ինտերնետային կայք՝ www.grantthornton.am, «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ:

2024թ. Ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է **«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ**-ն, որի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 00, Դավիթ Անհաղթի փող., 23/6 շենք, 5-րդ հարկ, տարածք 7, հեռ.՝ (+374 60) 528-899 : Ինտերնետային կայք՝ <http://www.bdoarmenia.am>, **«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ**-ն հանդիսանում է **«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ Ինտերնեշնլի»** անդամ:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: 2022-2024թթ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ներկայացված են կից Հավելվածներում: Վերջին 5 տարիների ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

3.2 Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործառնությունների, ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

Ելնելով նշվածից՝ Թողարկողը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը.

Վարկային ռիսկ: Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք Կազմակերպությանը կարող են կորուստներ պատճառել:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Թողարկողը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը: Ստորև ներկայացված է Կազմակերպության տրամադրած վարկերի որակական վերլուծությունը, 31.12.2024թ. դրությամբ և նախորդ 3 տարիների համար:

Հաճախորդներին տրված վարկեր

հազ. ՀՀ դրամ

	31.12.2024 (աուդիտ անցած)	31.12.2023 (աուդիտ անցած)	2022 (աուդիտ անցած)
--	---------------------------------	---------------------------------	---------------------------

Ոչ ժամկետանց	21,846,340	20,635,878	18,237,834
ժամկետանց՝			
-1-30 օր ժամկետանց	300,109	250,394	214,639
-31-60 օր ժամկետանց	109,154	154,120	140,643
-61-90 օր ժամկետանց	153,650	70,303	63,140
-90 օրից ավել ժամկետանց	1,255,490	1,274,786	3,170,405
Ընդամենը ժամկետանց վարկեր	1,818,402	1,749,603	3,588,827
Ըդամենը համախառն վարկեր	23,664,742	22,385,481	21,826,661
Հնարավոր կորուստների պահուստ	(1,384,304)	(1,325,051)	(2,908,717)
Ընդամենը զուտ վարկեր	22,280,438	21,060,430	18,917,944
Խնդրահարույց վարկեր/Վարկային պորտֆել	7.68%	7.82%	16.44%

Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, վարկային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսավորման կազմակերպությունների ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Կազմակերպությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Ռիսկերի կառավարումը և մոնիթորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային կոմիտեների և Կազմակերպության Տնօրենների խորհրդի կողմից: Առօրյա ռիսկերի կառավարումն իրականացվում է վարկային ռիսկերի բաժնի, հետգործառնական և ներքին վերահսկողության բաժինների կողմից:

Վարկային պորտֆելի որակի կառավարման նպատակով սահմանված է նաև որոշում կայացնող մարմինների սահմանաչափերի հստակ համակարգ, վարկերի և վարկունակության նվազագույն պահանջների վերանայման և թեստավորման սկզբունքներ:

Կազմակերպության վարկային քաղաքականությունը սահմանված է ներքին քաղաքականություններում և ընթացակարգերում, որտեղ հստակ սահմանված են բոլոր առնչվող պահանջները համապատասխան վերահսկողական մեխանիզմների հետ մեկտեղ, ներառյալ վարկի տրամադրումը, չվճարված վարկերի մոնիտորինգը, ժամկետանց վարկերի հետ աշխատելու գործընթացը և այլն:

Վարկային կոմիտեն վերլուծող մարմին է, որը պատասխանատու է վարկային հայտերում ամփոփված տեղեկատվությունը վերլուծելու և վարկային ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար: Վարկային կոմիտեն Կազմակերպության ներսում անկախ մարմին է, որը լիազորված է կայացնելու վերջնական որոշում վարկային հայտը ֆինանսավորելու կամ մերժելու վերաբերյալ:

Կազմակերպությունը բաշխում է վարկային ռիսկի մակարդակը՝ սահմանափակելով մեկ վարկառուի գծով կամ վարկառուների խմբի գծով: Վարկային ռիսկի սահմանաչափերն ըստ վարկառուի և ըստ վարկատեսակի հաստատում է Տնօրենների խորհուրդը և Կազմակերպության Գործադիր մարմինը: Փաստացի ռիսկերի համապատասխանությունը սահմանաչափերին հսկվում է օրական կտրվածքով՝ Կազմակերպության կողմից սահմանված վարկային սահմանաչափերի և վարկունակության ուղեցույցների չխախտվելու համար:

Ըստ նպատակահարմարության, և վարկերի մեծ մասի դեպքերում, Կազմակերպությունն ընդունում է գրավ կամ անձնական երաշխավորություն: Վարկերի զգալի մասն անհատական են, որտեղ որպես ապահովության միջոց հանդես են գալիս երաշխավորությունները: Այսպիսի ռիսկերը մոնիթորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

Կազմակերպությունը սկզբունքորեն կիրառում է ռիսկերի կառավարման միևնույն քաղաքականությունը հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար:

Կազմակերպությունում մշակվել է վարկառուի գնահատման կենտրոնացված մոտեցում՝ փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությունը գնահատելու և դրանց վարկավորման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով: Այդ մոտեցումը ենթադրում է ստանդարտ վարկատեսակների հաստատում գլխամասային գրասենյակի կողմից՝ ելնելով վարկառուների արդյունավետության հիմնական ցուցանիշներից՝ վարկային պատմությունից, ֆինանսական վիճակից, վարկառուների հետ հարաբերություններից, կառավարման որակից, նպատակային օգտագործումից, գրավից և այլն: Կախված շուկայում տիրող իրավիճակից վարկավորման մոտեցումները կարող են փոփոխվել՝ դառնալով ավելի լիբերալ կամ ավելի կոնսերվատիվ:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության հաճախորդներին տրամադրված վարկերի դասակարգման և վարկային ռիսկի կառավարման համար վնասների և կորուստների պահուստին կատարվող հատկացումների վերաբերյալ տեղեկատվությունը 31.12.2024թ. դրությամբ:

Ռիսկի դասերը	Վարկեր							
	Քանակ		Գումար/հազ.դր./		Տրված վարկերի գծով պահուստ			
					մնացորդը/հազ.դր./		%	
1	2		3		4		5	
	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ
փուլ 1	25,222	354	20,220,855	1,315,907	(601,212)	(21,350)	-3.0%	-1.6%
փուլ 2	795	34	521,695	148,299	(76,972)	(16,925)	-14.8%	-11.4%
փուլ 3	1,915	81	1,331,717	120,269	(613,809)	(54,036)	-46.1%	-42.8%
Ընդամենը	27,932	469	22,074,267	1,590,475	(1,291,993)	(92,311)	-5.9%	-5.8%

Ընկերությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Դրա հիման վրա՝ Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 խմբերում:

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Ընկերությունը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը չունեն ժամկետանց օրեր:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված են մինչև 90 օր ժամկետանց օրեր ունեցող վարկերը:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 3-ում գտնվում են հիմնականում 90 օր և ավել ժամկետանց օրեր ունեցող վարկերը:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնասներ կրելու ռիսկը:

Կազմակերպության իրացվելիությունը գտնվում է տնօրինության ուշադրության կենտրոնում, մասնավորապես՝ Կազմակերպությունում գործում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով, որը վերահսկում է Կազմակերպության իրացվելիության ռիսկերը ժամկետայնության վերլուծության միջոցով: Միաժամանակ իրացվելիության ռիսկի կառավարման շրջանակում իրականացվում են խիստ սթրես թեստերի մշակում և կիրառում, իրացվելիության սահմանաչափերի և գործակիցների պահպանում, վաղ զգուշացման ցուցիչների վերահսկողություն, մշակվել է արտակարգ իրավիճակների ֆինանսավորման պլան: Ընթացիկ իրացվելիության աջակցման և դրամական հոսքերի օպտիմալացման նպատակով ընթացիկ իրացվելիությունը կառավարվում է գանձապետի կողմից, ով վարում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների պորտֆելը:

Կազմակերպության իրացվելիության աղբյուրները դիվերսիֆիկացված են և իրենց մեջ ներառում են երկարաժամկետ և միջնաժամկետ վարկեր միջազգային ֆինանսական ֆոնդերից, դրամական միջոցների կարճաժամկետ ներգրավումներ ՀՀ բանկերից և իրավաբանական անձանցից, պարտատոմսերի թողարկումից ձևավորված միջոցներ: Կազմակերպությունը իր իրացվելիության գործիքակազմում ունի նաև վերականգնվող վարկային գծեր, որոնք ոչ միայն հանդիսանում են իրացվելիության ստացման արագ աղբյուր, այլև հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ և առավել քիչ ծախսերով կառավարել ընթացիկ իրացվելիությունը:

Կազմակերպությունը ներկայումս բանակցություններ է վարում մի քանի միջազգային ներդրումային ֆոնդերի հետ ֆինանսավորման ներգրավման նպատակով: Միաժամանակ, Կազմակերպությունը միացել է ԳՀՀ-ի և KFW բանկի մի շարք վարկային ծրագրերի, որը ոչ միայն

նպաստել է իրացվելության դիրքերի ամրապնդմանը, այլև նպաստել է Կազմակերպության շուկայական դիրքի ամրապնդմանը:

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, որն էլ իր հերթին կարող է ազդել Կազմակերպության զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Կազմակերպության ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև այն նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Կազմակերպությունը կառավարում է իրական արժեքով տոկոսադրույքի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով պոտենցիալ կորուստները, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից: Կազմակերպության ղեկավարությունն իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ֆինանսական գործունեության մոնիթորինգ, գնահատում է Կազմակերպության իրական արժեքով տոկոսադրույքի փոփոխությունների զգայունությունը և դրա ազդեցությունը Կազմակերպության շահութաբերության վրա:

Կազմակերպության ռիսկերի կառավարման սկզբունքներից ելնելով սահմանափակվում են տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ ճեղքվածքի մեծությունը, արժեթղթերի պորտֆելի մեծությունը, կենտրոնացվածությունը և ժամկետայնությունը:

Արտարժույթային ռիսկ: Արտարժույթային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Կազմակերպությունը կիրառում է արտարժույթային ռիսկի կառավարման հետևյալ սկզբունքները.

☞ Կազմակերպությունը ձգտում է միանգամից փակել արտարժույթային դիրքերը և զերծ մնալ սպեկուլյատիվ գործառնություններից:

☞ Կազմակերպությունն արտարժույթային շուկաներում չի բացում սպեկուլյատիվ դիրքեր: Ածանցյալ գործիքները կարող են օգտագործվել միայն հեջավորման նպատակով՝ փակելու դիրքը:

☞ Կազմակերպությունը ձգտում է համապատասխանեցնել ակտիվների և պարտավորությունների արժույթներն ինչպես գումարներով, այնպես էլ ժամկետներով՝ պաշտպանված լինելու համար փոխարժեքային տատանումներից:

☞ Կազմակերպությունը վերահսկում է արտարժույթային դիրքն օրական կտրվածքով:

Կազմակերպության Գանձապետարանը ու Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը վերահսկում են արտարժույթի ռիսկը՝ կառավարելով արժույթային բաց դիրքն ԱՄՆ դոլարի արժեզրկման և այլ մակրոտնտեսական ցուցանիշների գնահատումների հիման վրա, ինչը Կազմակերպությանը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել վնասներն ազգային արժույթի նկատմամբ փոխարժեքի զգալի տատանումներից: Գանձապետն իրականացնում է Կազմակերպության արժույթային բաց դիրքի ամենօրյա մոնիթորինգ: Ընդհանուր

առմամբ Կազմակերպությունը ունակ է կլանել ՀՀ դրամի էական արժեզրկման ռիսկը առանց հիմնական տնտեսական նորմատիվները վտանգելու և իրացվելիության լուրջ խնդիրների:

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Կազմակերպության վրա 31.12.2024թ-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	420,622	800,488	80,390	1,301,501
Պահանջներ բանկերի նկատմամբ	0	2,198,197	0	2,198,197
Ներդրումային արժեթղթեր	0	1,618,788		1,618,788
Հաճախորդներին տրված վարկեր	20,782,273	1,498,165	0	22,280,438
Ներդրումային արժեթղթեր	17,349	41,456	0	58,805
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	21,220,244	6,157,094	80,390	27,457,728
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	1,597,984	0	0	1,597,984
Այլ փոխառու միջոցներ	6,868,246	6,897,897	0	13,766,143
Այլ ֆինանսական պարտավորություններ	399,413	14,286	40,109	453,808
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,236,069	715,050	-	4,951,119
Վարձակալության գծով պարտավորություն	380,302	0	-	380,302
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	13,482,014	7,627,233	40,109	21,149,356
Հաշվեկշռային բաց դիրք	7,738,230	-1,470,139	40,281	6,308,372
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Համախառն՝ արտարժույթի սվոփեր	-1,545,908	1,546,584	0	676
Բաց դիրք	6,192,322	76,445	40,281	6,309,048

Գործընկերոջ ռիսկ: Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող

է կրել: Կազմակերպությունը գործընկերոջ ռիսկը կառավարում է համաձայն Դուստր կազմակերպության ընդհանուր քաղաքականություն» ձեռնարկի Հավելված 5-ի՝ «ԱՊԿԿ քաղաքականության» սկզբունքների համաձայն: Կազմակերպությունը ձգտում է նվազեցնել գործընկերոջ ռիսկը՝

Սահմանափակելով գործընկերների ցանկը կառավարելի քանակով:

↪ Կիրառելով գործընկերների հաստատման հիմնավոր գործընթաց մինչև ցանկացած նոր գործընկերոջ հետ որևէ գործառնության կնքումը: Հաստատման գործընթացը ներառում է բազմակողմանի գնահատում՝ ապահովելու գործընկերոջ հաստատման գործընթացի համապատասխանությունը Դուստր կազմակերպության ընդհանուր քաղաքականության ձեռնարկին:

↪ Սահմանափակելով Կազմակերպության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ:

Սահմանաչափերի ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կողմից:

Ընդհանուր փոփոխության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա: Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Կազմակերպության վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Կազմակերպության հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Կազմակերպության գործունեության վրա: Դա կարտահայտվի Կազմակերպության կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Կազմակերպությունում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում են տնտեսության վիճակի հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների վերլուծություններ: Նման վերլուծությունները և սցենարները քննարկվում են ԱՊԿԿ-ի ընթացքում, որն իրականացվում է ամիսը մեկ կամ երկու անգամ: Նման հաճախականությունը հնարավորություն է տալիս արագ արձագանքել շուկայում սպասվող կամ տեղի ունեցող փոփոխություններին և մշակել գործունեության պլան փոփոխված իրավիճակին համապատասխան:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպությունների ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա: Կազմակերպությունը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում: ՀՀ-ում վարկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են նաև արտերկրի վարկային կազմակերպությունների դուստր կառույցները, որոնք ունեն հզոր ֆինանսական կարողություններ և անկայուն իրավիճակներում ֆինանսական ներարկումներ ստանալու մեծ հնարավորություններ, առաջավոր և փորձարկված տեխնոլոգիաներ, որի շնորհիվ նրանք ունեն պոտենցիալ առավելություններ ստանալու հավակնություն: Կազմակերպությունը, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու առումով, հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է վարկավորման ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող սպասարկումների որակը և մատչելիությունը:

Կադրերի հոսունության ռիսկ, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Կազմակերպության վնասներ կրելու հավանականությունը: Բարձրորակ մասնագետների առկայությունը Կազմակերպության աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի պատճառով՝ առաջանում է նաև կադրերի հոսունության ռիսկ, որի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով Կազմակերպության ղեկավարությունը նպատակային և հետևողական միջոցառումներ է իրականացնում աշխատողների որակավորման բարձրացման, նյութական խրախուսման և սոցիալական ապահովման խնդիրների բարելավման ուղղությամբ: Մասնավորապես, աշխատողների որակավորման բարձրացման նպատակով Կազմակերպությունը ստեղծել է ներքին աշխատակիցների օգտագործման համար նախատեսված առցանց դասընթացների հարթակ, իսկ ՖԻՆՔԱ Զարգացման Ակադեմիայի միջոցով կազմակերպում են միջին օղակի ղեկավարների վերապատրաստման համար դասընթացներ:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառնական ռիսկերը, գործառնական ռիսկերը կարող են վնասել Կազմակերպության հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգող հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Կազմակերպությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիթորինգի և դրանց հակազդման միջոցով: Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

Կազմակերպությունում գործառնական ռիսկը կառավարվում է այդ գործառնակի համար նախատեսված ստորաբաժանման՝ «Ներքին վերահսկողության» բաժնի կողմից: Գործառնական ռիսկերի կառավարման համար մշակված են և պարբերաբար վերանայվում են բազում հսկողական մեխանիզմներ, ինչպիսիք են՝ ռիսկային դեպքերի վերաբերյալ ազդակներ հաղորդող հատուկ մշակված 17 հաշվետվությունները գործընթացների մշակման, գրանցման և հաստատման

գործառույթների բաժանումը տարբեր աշխատակիցների միջև, ամենամյա այցելությունները մասնաճյուղեր և տվյալ տարածաշրջանի հաճախորդներին:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Կազմակերպությունը պատրաստ է իրականացնել այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով ապահովել ծրագրավորված ակտիվապասիվային և եկամտային ցուցանիշների կատարումը:

3.2. Տեղեկատվություն Թողարկողի մասին

3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝ «ФИНКА» УНИВЕРСАЛЬНАЯ КРЕДИТНАЯ ОРГАНИЗАЦИЯ Закрытое Акционерное Общество.
անգլերեն՝ “FINCA” UNIVERSAL CREDIT ORGANIZATON Closed Joint-Stock Company.

Թողարկողի կրճապ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ
ռուսերեն՝ «ФИНКА» УКО ЗАО
անգլերեն՝ “FINCA” UCO CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2ա, գրանցման համարը՝ 13:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2ա:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 12) 55 55 55
էլ. փոստ՝ info@finca.am,
ինտերնետային կայք՝ www.finca.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Կազմակերպությունը հիմնադրվել է ՀՀ օրենսդրության շրջանակներում 2006թ. մարտի 28-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ ԿԲ

խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական: Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության ստեղծումը նպատակ էր հետապնդում տրամադրել միկրոֆինանսական ծառայությունների լայն տեսականի՝ նպատակ ունենալով կրճատել աղքատությունը, բարձրացնել զբաղվածության մակարդակը, խթանել ձեռներեցությունն ու Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական համախմբումը, ինչպես նաև ստանալ շահույթ, որը հիմնականում պետք է ուղղվի այդ նպատակների իրագործմանը:

Կազմակերպությունն ունի 31 մասնաճյուղ և վարկավորում է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում:

Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

31.12.2024թ. դրությամբ Կազմակերպությունն ունի 32 մասնաճյուղ, որոնց ցանկը և գործունեության հասցեները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

	Մասնաճյուղի անվանում	Հասցե
1.	Ագաթանգեղոս մասնաճյուղ	ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2 ա
2.	Կոմիտաս մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի պող. 50/51
3.	Աշտարակ մասնաճյուղ	ք. Աշտարակ, Սիսակյան փ. 14/48բ
4.	Թալին մասնաճյուղ	ք. Թալին, Սպանդարյան 9/1
5.	Արարատ մասնաճյուղ	ք. Արարատ, Աղբյուր Սերոբ փ. 10
6.	Արտաշատ մասնաճյուղ	ք. Արտաշատ, Շահումյան փ. 33
7.	Մասիս մասնաճյուղ	ք. Մասիս, Հանրապետության փ. 5/1
8.	Վեդի մասնաճյուղ	ք. Վեդի, Արարատյան փ. 54/6
9.	Արմավիր մասնաճյուղ	ք. Արմավիր, Երևանյան փ. 33/3
10.	Էջմիածին մասնաճյուղ	ք. Էջմիածին, Խորենացու փ. 8
11.	Գավառ մասնաճյուղ	ք. Գավառ, Կենտրոնական փ. 4
12.	Մարտունի մասնաճյուղ	ք. Մարտունի, Մյասնիկյան փ. 8

13.	Վարդենիս մասնաճյուղ	ք. Վարդենիս, Հ. Անդրեասյան փ. 6/5
14.	Ալավերդի մասնաճյուղ	ք. Ալավերդի, Թումանյան փ. 51/2
15.	Սպիտակ մասնաճյուղ	ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փ. 4
16.	Ստեփանավան մասնաճյուղ	ք. Ստեփանավան, Սուրբ-Նշանի փ. 12բ
17.	Վանաձոր 1 մասնաճյուղ	ք. Վանաձոր, Տիգրան Մեծ պող. 47ա
18.	Աբովյան մասնաճյուղ	ք. Աբովյան, Հատիս փ 1/28
19.	Հրազդան մասնաճյուղ	ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Օգոստոսի-23-ի փ., թիվ 22
20.	Արթիկ մասնաճյուղ	ք. Արթիկ, Անկախության փ. 29/1
21.	Աշոցք մասնաճյուղ	ՀՀ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, 2-րդ փ., 1-ին նրբ., 6 ռեստորան
22.	Գյումրի մասնաճյուղ	ք. Գյումրի, Տիգրան Մեծ 1/3
23.	Մարալիկ մասնաճյուղ	ք. Մարալիկ, Հ. Շահինյան փ. 16
24.	Գորիս մասնաճյուղ	ք. Գորիս, Մաշտոցի փ. 5
25.	Կապան մասնաճյուղ	ք. Կապան, Շահումյան փ.2/1,62 առևտրի սրահ
26.	Մեղրի մասնաճյուղ	ք. Մեղրի, Փարամազ փ. 4/6
27.	Եղեգնաձոր մասնաճյուղ	ք. Եղեգնաձոր, Անդրանիկի փ. 10/1
28.	Բերդ մասնաճյուղ	ք. Բերդ, Մաշտոցի փ. 26/8
29.	Իջևան մասնաճյուղ	ք. Իջևան, Վալանսի փ. 6/2
30.	Նոյեմբերյան մասնաճյուղ	ք. Նոյեմբերյան, Բարեկամության փ. 2
31.	Ապարան մասնաճյուղ	ք. Ապարան, Բաղրամյան փ. 44/3
32.	Եղվարդ մասնաճյուղ	ք. Եղվարդ, Չարենցի 13

Կազմակերպությունը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

3.3.2. Ներդրումները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև Ազդագրի ներկայացման պահը կազմակերպության կողմից էական ներդրումներ չեն կատարվել:

Կազմակերպության կառավարման մարմինները չեն ստանձնել որևէ պարտավորություն ապագայում էական ներդրումներ իրականացնելու վերաբերյալ:

3.3. Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեությունը

Թողարկողն իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և իր Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ: Կազմակերպությունը կարող է իրավաբանական անձանցից, իր մասնակիցներից, անհատ ձեռնարկատերերից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ:

Կազմակերպության գործունեության հիմնական ուղղվածությունը վարկերի տրամադրումն է, որոնք էլ ձգտում է հասանելի դարձնել տնտեսության տարբեր հատվածների, ինչպես նաև հասարակության լայն շրջանակների համար: Կազմակերպությունը, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Ավելին, որպես պատասխանատու վարկատու, Կազմակերպությունը դեռ 2018 թվականի սկզբից նախաձեռնել էր «Հաճախորդների պաշտպանության սերտիֆիկատ»-ի (SMART Certificate) ստացումը, և որպես սերտիֆիկացում իրականացնող կազմակերպություն ընտրել էր MicroFinanza Raiting LLC (այսուհետ՝ MFR) իտալական ծագմամբ կազմակերպությունը: MFR ներկայացուցիչը 2018թ. ընթացքում այցելել է Հայաստան: Այցերի նպատակն էր անցկացնել անկախ ուսումնասիրություն և գնահատում: Արդյունքում 2018թ. դեկտեմբերին Կազմակերպությանը շնորհվել է Smart հավաստագիր առ այն, որ ընկերությունը լիովին համապատասխանում է հաճախորդների պաշտպանությանն ուղղված բարձր պահանջներին, որոնք սահմանվել են միկրոֆինանսավորման ոլորտում հաճախորդների պաշտպանությունը սատարող միջազգային նախաձեռնության կողմից: Իսկ 2025թ առաջիկ եռամսյակում ՖԻՆՔԱ Հայաստանը արժանացավ MFR-ի՝ հաճախորդների պաշտպանության հավաստագրման ամենաբարձր ՈՍԿԵ մակարդակի հավաստագրի: Սա նշանակում է, որ ՖԻՆՔԱ Հայաստանը համապատասխանում է հաճախորդների պաշտպանության ամենախիստ միջազգային չափանիշներին և ապահովում է թափանցիկ, պատասխանատու ու բարենպաստ ֆինանսական ծառայություններ: 2013 թվականի հոկտեմբերից Կազմակերպությունը հաճախորդներին մատուցում է տարադրամի փոխանակման ծառայություն, ինչը Կազմակերպության հաճախորդներին և համայնքների բնակիչներին առավել հարմարավետ և բազմատեսակ սպասարկման հնարավորություն է տալիս:


Հաճախորդների սպասարկման գործընթացն առավել հարմարավետ դարձնելու համար, Կազմակերպությունն անընդհատ բարելավվում է վարկավորման գործընթացները՝ առաջարկելով ժամանակակից (թվայնացված) ծառայություններ: Այսպես՝

- 2019 թվականի սկզբից Կազմակերպությունն իր հաճախորդներին առաջարկում է Թաքլետ վարկավորման գործընթացը, որը հնարավորություն է տալիս առանց հաճախորդի մասնաճյուղ այցելության վերցնել հայտը և կատարել վերլուծություն:
- 2020 թվականին Կազմակերպությունը ներդրեց վարկավորման նոր ծրագիր, որը մի քանի անգամ արագացրեց վարկավորման գործընթացը:
- 2020 թվականից Կազմակերպությունը սկսեց վերանայել իր կողմից առաջարկվող հիմնական ծառայությունների սակագները՝ հաճախորդներին առաջարկելով ծառայությունների անհատական պայմաններ (risk-based price): Դա Կազմակերպությանը հնարավորություն տվեց առաջարկել մրցակցային պայմաններ և հետևաբար ամրապնդել իր դիրքը շուկայում:
- 2022 թվականի հուլիսից Կազմակերպությունը իր հաճախորդներին առաջարկում է Էվոկաբանկի հետ թողարկված համատեղ քարտ (co-branded card), որի միջոցով հաճախորդները վարկերը ստանում են անկանխիկ եղանակով:
- 2022 թվականին Կազմակերպությունը ներդրեց «Հիփոթեքային վարկ» վարկատեսակը, ինչի շնորհիվ ընդլայնվեց Կազմակերպության հաճախորդների շրջանակը: Ֆինանսական գործառնությունները Կազմակերպության կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ կանխիկ և անկանխիկ եղանակներով:
- 2023թ.-ին ՖԻՆՔԱ Հայաստանի և ամերիկյան հայտին MCE Social Capital ներդրումային ընկերության միջև համագործակցության շրջանակներում ՖԻՆՔԱ Հայաստանը 1,5 մլն դոլարի ֆինանսավորում է ստացել՝ նպատակ ունենալով հավատարիմ մնալ աղքատության հաղթահարման իր առաքելությանը. այն է՝ ստեղծել աշխատատեղեր, աջակցել անապահով ընտանիքներին և բարելավել կյանքի որակն իր ֆինանսական ծառայությունների միջոցով, ինչպես մարզային, այնպես էլ քաղաքային բնակավայրերում:
- 2024թ 4-րդ եռամսյակում ՖԻՆՔԱ Հայաստանի և ամերիկյան հայտին Developing World Markets ներդրումային ընկերության միջև կնքվել է 4 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր: Ընկերության հետ համագործակցությունը հնարավորություն կընձեռի ՖԻՆՔԱ Հայաստանին 2025թ.-ի սկզբից ընդլայնել վարկային ֆինանսավորումը՝ Հայաստանում միկրո և զարգացող բիզնեսների աջակցման ուղղություններով, ինչպես նաև հաճախորդների կարողությունների զարգացման ծրագրերով: Ֆինքա Հայաստան կազմակերպության գործունեության հիմնաքարն է Հայաստանում՝ մասնավորապես գյուղական համայնքներում, պատասխանատու և հասանելի միկրովարկավորման ծրագրերի մշակումն ու զարգացումն:
- 2024թ դեկտեմբերին ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ն շուկային ներկայացավ հեռախոսային Հավելվածով, որի միջոցներով հաճախորդները կարող են օգտվել Ընկերության ծառայություններից, ինչպես նաև տեղեկություններ ստանալ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ՝ առանց ՖԻՆՔԱ-ի մասնաճյուղեր այցելելու: Հավելվածի ներդրման միջոցով ՖԻՆՔԱ ՈՒՎԿ-ն բարձրացրել է վարկավորման գործընթացի արդյունավետությունը, որն էլ իր հերթին նպաստել է վարկավորման ծախսերի նվազմանը, մեծացել է հաճախորդների ներգրավվածությունը և ընդլայնվել է ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի մրցակցունակությունը վարկային շուկայում:

- 2024թ ընթացքում ՖԻՆՔԱ ՈՒՎԿ-ն շարունակել է սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացումը՝ կարևորելով ֆինանսական կրթության դերը իր յուրաքանչյուր հաճախորդի կյանքի որակի բարելավման գործում: Դրանցից են Ֆինանսական գրագիտության դասընթացներ, հաճախորդների փորձառության ամսվա շրջանակներում բորքահավքի աջակցման միջոցառումներ, «Կանայք գյուղատնտեսությունում» նախագիծը՝ նվիրված կանանց աջակցմանը ու հզորացմանը և այլ ծրագրեր:

Կազմակերպության հաշվեկշռի կառուցվածքի դինամիկան ներկայացվում է ստորև.

Հաշվեկշռի վերլուծություն




Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի և փոխառությունների ծավալների դինամիկան ներկայացվում է ստորև.

Հաճախորդներին տրված վարկերի դինամիկան

Հազ. ՀՀ դրամ

Հաճախորդներին տրամադրված վարկեր



Կազմակերպության կողմից տրամադրվող վարկերը ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել 4 խմբի տեսքով՝ գյուղատնտեսական վարկեր, բիզնես վարկեր, սպառողական վարկեր և հիփոթեքային վարկեր:

Կազմակերպության կողմից հաճախորդներին տրված վարկերի ծավալներն ըստ վարկատեսակների 2021-31.12.2024թթ. դրությամբ ներկայացված են ստորև.


Հաճախորդներին տրված վարկերն ըստ վարկատեսակների

Հազ. ՀՀ դրամ

	31.12.2024	31.12.2023	31.12.2022
Անհատական գյուղատնտեսական վարկեր	13,377,151	12,361,570	10,221,842
Անհատական բիզնես վարկեր	4,924,437	5,478,677	6,884,323
Սպառողական վարկեր	3,664,110	188,301	1,773,308
Հիփոթեքային վարկեր	314,740	3,031,882	81,027
Խմբային վարկեր	-	-	-
Խմբային գյուղատնտեսական վարկեր	-	-	-
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	22,280,438	21,060,430	18,960,500

31.12.2024թ-ի դրությամբ Կազմակերպության հաճախորդների կառուցվածքը ըստ իրավաբանական կարգավիճակի ունեն հետևյալ պատկերը՝


Տրամադրված վարկերն ըստ հաճախորդների իրավաբանական կարգավիճակի



■ Ֆիզիկական անձ ■ Իրավաբանական անձ

31.12.2024թ-ի դրությամբ Կազմակերպության կողմից տրամադրված վարկերը ըստ արժույթի ունեն հետևյալ պատկերը՝

Տրամադրված վարկերն ըստ արժույթի



3.4.2. Հիմնական շուկաները

«Ք ֆինանսական շուկայում կազմակերպությունն առանձնանում է միկրոֆինանսական ծառայությունների լայն տեսականու մատուցմամբ՝ նպատակ հետապնդելով կրճատել աղքատությունը, բարձրացնել զբաղվածության մակարդակը, խթանել ձեռներեցությունն ու Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական համախմբումը:


Կազմակերպության վարկերը ըստ տնտեսության ոլորտի 2022 - 2024թթ. ժամանակահատվածում ունեն հետևյալ տեսքը՝

	<i>հազ. ՀՀ դրամ</i>		
	31.12.2024	31.12.2023	31.12.2022
Գյուղատնտեսություն	14,112,242	13,087,052	11,907,273
Առևտուր	2,683,256	3,261,819	3,771,410
Արդյունաբերություն	756,720	783,959	973,476
Տրանսպորտ	691,981	639,030	45,327
Շինարարություն	51,605	75,582	691,477
Ծառայություն	4,435,680	3,758,639	3,553,986
Հիփոթեք	325,018	190,934	81,694
Այլ	608,241	588,465	802,018
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	23,664,742	22,385,481	21,826,661
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(1,384,304)	(1,325,051)	(2,908,717)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	22,280,438	21,060,430	18,917,944

3.4. Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը Թողարկողի ներքին վարչակազմակերպչական կառուցվածքը հետևյալն է.

Հավելված 1 «ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ տնօրենների խորհրդի 21/02/2024 № 11 / 2024 արձանագրության/որոշման

«ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Կազմակերպչական կառուցվածք



* Կանաչ վանդակները կազմակերպչական կառուցվածքի փոփոխություններն են, ղեկին վանդակը խորհրդի նոր ենթակոմիտե է
 ** Ներառյալ թվային պրոդուկտները
 *** ՆՈՒՎ- նվազից տրանսֆորմացիայի ենթակոմիտե

FMH - FOR INTERNAL USE ONLY

3.5. Հիմնական միջոցները

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի հանրագումարը չի գերազանցում Կազմակերպության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 10%-ը: 31.12.2024 թվականի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 150,940 մլն ՀՀ դրամ, իսկ ոչ նյութական ակտիվներինը՝ 143 մլն ՀՀ դրամ:

1. Կազմակերպության ոչ նյութական ակտիվների կազմը և կառուցվածքը 31.12.2024թ դրությամբ:

հազ. ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր
Սկզբնական արժեք	286,457
Կուտակված մաշվածություն	(143,866)
Զուտ Հաշվեկշռային արժեք	142,591

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ առկա չեն:

2. Կազմակերպության հիմնական միջոցների կազմը և կառուցվածքը 31.12.2024թ դրությամբ:

հազ. ՀՀ դրամ

	Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Կապի և հաղորդակցման միջոցներ	Գրասենյակային գույք	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք	214,451	642,285	313,809	63,570	220,388	1,454,503
Կուտակված մաշվածություն	(194,748)	(533,896)	(299,509)	(63,122)	(212,286)	(1,303,561)
Զուտ Հաշվեկշռային արժեք	19,703¹	108,389	14,300	448	8,102	150,94²

Կազմակերպությունը նախատեսում է 2024թ ընթացքում իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաներին վերաբերող հիմնական միջոցների թարմացում:

3.6. Զարգացման վերջին միտումները

3.7.1. Արտաքին գործոնների վերլուծությունը

Կազմակերպությունը սեփական և հաճախորդների կարիքները բավարարելու համար գործունեություն է ծավալում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, ուստի Կազմակերպության գործունեության վրա իրենց ուրույն ազդեցությունն են թողնում և՛ հայրենական, և՛ միջազգային տնտեսությունում տեղի ունեցող իրադարձությունները: Այսպես, Կազմակերպության գործունեության վրա էական ազդեցություն են թողել՝

- Զարգացած երկրներում տնտեսության անկայունությունները,
- Տարածաշրջանում առկա քաղաքական և տնտեսական անկայունությունները
- միջազգային շուկաներում տոկոսադրույքների բարձրացումը
- ՀՀ քաղաքական բարձր ռիսկերը և շարունակվող անկայունությունը,
- Փոխնախարարական կապիտալի շուկայում բարձր մրցակցության պահպանումը:

Կազմակերպությունն անընդհատ իրականացրել է ակտիվների և պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարում, որպեսզի կարողանա չեզոքացնել վերը նշված երևույթների բացասական ազդեցությունը և հնարավորինս օգտվել ընձեռնված հնարավորություններից:

Տնտեսության ներքին և արտաքին հատվածներում ընթացող փոփոխություններով պայմանավորված՝ Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների սակագները պարբերաբար վերանայվում են՝ նպաստելով վերջիններիս մրցունակության բարձրացմանը և մատչելիության ապահովմանը:

3.7.2. Կազմակերպության հիմնական խնդիրները

Նախորդ պլանային ժամանակաշրջանում Կազմակերպությունը միտված է եղել առաջատար և մրցունակ տեղ գրավել ունիվերսալ վարկային կազմակերպությունների շարքում՝ նպատակ ունենալով՝

- պահպանել առաջատարի դիրքերը ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկավորման շուկայում,
- բարձրացնել վարկային պորտֆելի որակը և ապահովել ակտիվների և պարտավորությունների բավարար դիվերսիֆիկացում (ըստ տնտեսության ոլորտների, գործիքների և հաճախորդների),
- Կազմակերպության վերցրած հիմնական ռիսկերը պահել թույլատրելի մակարդակի վրա (չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում մշտապես պահել ցածր, արտարժույթային դիրքը հնարավորինս փակ պահել, նվազագույնի հասցնել գործառնական ռիսկերը և այլն),
- ավելի երկարաժամկետ հատվածում մեծացնել ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը,

- ֆինանսական արդյունքների (եկամուտների) դիվերսիֆիկացում,
- միջոցների և նպատակային հաճախորդների ներգրավում (ներգրավել ռազմավարական նշանակություն ունեցող հաճախորդների, ում հետ կձևավորվեն գործընկերային փոխհարաբերություններ),
- աշխատակիցների վերապատրաստում և մոտիվացիայի բարձրացում:
- գործընթացների թվայնացում՝ հաճախորդների սպասարկումը բարելավելու և կազմակերպության գործառույթների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Կազմակերպության գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ իմանալու համար ներդրողը կարող է ծանոթանալ Կազմակերպության տարեկան և միջանկյալ հաշվետվություններին, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի www.finca.am «Հաշվետվություններ» բաժնում:

3.7. Շահույթի կանխատեսումը

Առաջիկա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Կազմակերպությունը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- ✓ Կազմակերպության գործունեությունը նպատակամղել շահույթի, բաժնետիրական կապիտալի և ակտիվների եկամտաբերության աճին,
- ✓ Կազմակերպության ռեսուրսները տեղաբաշխել բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով Կազմակերպության ռիսկերը, պահպանելով վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները,
- ✓ ապահովել Կազմակերպության դինամիկ զարգացման համար անհրաժեշտ մասնաճյուղերի ստեղծում, տեխնիկատեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիականացում,
- ✓ ապահովել Կազմակերպության զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,
- ✓ Կազմակերպության գործունեության ապահովման ծախսեր:

2023 թվականի ընթացքում Կազմակերպությունը գեներացրել է 484,999 հազ. ՀՀ դրամ զուտ շահույթ, իսկ 2024 թվականի ընթացքում՝ 842,637 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ:



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆ-ՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Առաջիկա տարիների համար Կազմակերպության զուտ շահույթի կանխատեսված ցուցանիշներն են՝

մլն. ՀՀ դրամ

	2024 թ.	2025 թ.	2026 թ.	2027 թ.
Զուտ շահույթ	836	900	975	1050

Կազմակերպությունը, շահութաբերության վերոնշյալ մակարդակին հասնելու համար, թիրախավորում է հետևյալ ցուցանիշները.

- 1 օր ժամկետանց վարկային պորտֆելը (PAR 1) պլանային ցուցանիշը կազմում 8.30% 2025 թվականի վերջին և աստիճանաբար նվազելով հասնում 7.8%՝ 2027 թվականին:
- 30 օր ժամկետանց վարկային պորտֆելը (PAR 30) պլանային ցուցանիշը կազմում է 7.20%՝ 2025 թվականի վերջին, ապա աստիճանաբար նվազելով 2025 - 2027թթ. ընթացքում՝ կազմում է 6.74% 2027 թվականին:
- Վերակառուցված վարկերի մասնաբաժինը ՀՎՊ-ում նվազում է և հասնում 2.10%-ի 2025թ-ի դեկտեմբերին համեմատ 2024թ-ի դեկտեմբերի 5.40% ցուցանիշի:
- Դուրս գրված վարկային պորտֆելից վերականգնումները միջինում կազմում են դուրս գրված պորտֆելի 0.84% 2024-2026 թվականների ընթացքում:
- 2025 թվականի համար Կազմակերպությունը կանխատեսում է 60.7 մլն ԱՄՆ դոլարի, 2026 թվականի համար՝ 66.6 մլն ԱՄՆ դոլարի, 2027 թվականի համար՝ 72.7 մլն ԱՄՆ դոլարի և 2028 թվականի համար 79.5 մլն ԱՄՆ դոլարի վարկերի տրամադրում:
- Ըստ կանխատեսման ՀՎՊ կազմելու է 60.7 մլն ԱՄՆ դոլար 31.12.2025թ դրությամբ: 2025-2028 թվականների համար միջինում կանխատեսվում է տարեկան 9.4% վարկային պորտֆելի աճ:

Կազմակերպության կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- ✓ Կազմակերպության ներգրավող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,
- ✓ Կազմակերպության ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,
- ✓ Կազմակերպության տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական բազայի արդիականացմանն ուղղված ներդրումներ,
- ✓ Կազմակերպության անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,
- ✓ Կազմակերպության գործունեության ապահովման ծախսեր,
- ✓ Նոր ծառայությունների ներդրման ծախսեր:

Կազմակերպության կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն

հնարավորություն չունեն ազդելու Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- ✓ ներգրավվող միջոցների և վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ,
- ✓ արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ,
- ✓ անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կազմակերպության բնականոն գործունեությունը):


3.8. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.9.1. Կառավարման մարմինների կառուցվածքը, իրավասություններն ու պարտականությունները

Կազմակերպության կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները.

- ✓ **Բաժնետերերի ժողով,**
- ✓ **Տնօրենների խորհուրդ,**
- ✓ **Վարչություն,**
- ✓ **Գլխավոր տնօրեն:**

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



Կազմակերպության Կանոնադրությամբ Կազմակերպության կառավարման մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները.

Բաժնետերերի ժողովը (Ժողով)

Ժողովը Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Կազմակերպության Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշումներ կայացնելը,

գ) Կազմակերպության լուծարման մասին որոշումներ կայացնելը, լուծարման հանձնաժողով նշանակելը, լուծարման պլանի, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

դ) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ե) Թողարկված բաժնետոմսերի առավելագույն քանակի որոշումը,

զ) Հայտարարված բաժնետոմսերի քանակի, անվանական արժեքի, տեսակների, և այդ բաժնետոմսերի սեփականատերերին վերապահված իրավունքների որոշումը,

է) Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով Կազմակերպության Կանոնադրական կապիտալի ավելացումը,

ը) Կազմակերպության բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, ընդհանուր քանակի կրճատման նպատակով Կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Կազմակերպության կողմից ձեռքբերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

թ) Կազմակերպության Վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ժ) Կազմակերպության Գլխավոր տնօրենի և Վարչության անդամների վարձատրության չափի և պայմանների որոշումը,

ժա) Արտաքին աուդիտորի հաստատումը,

ժբ) Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության տարեկան արդյունքների հաստատումը,

ժգ) Բաժնետերերի ժողովի անցկացման կարգի որոշումը,

ժդ) Տնօրենների խորհրդի ներկայացմամբ՝ առաջին եռամսյակի, կիսամյակի, ֆինանսական տարվա առաջին ինը ամիսների արդյունքների հիման վրա շահութաբաժինների վճարման մասին որոշման կայացումը, ինչպես նաև դրանց գումարի, վճարման ձևի և ամսաթվի որոշումը,

ժե) Օրենքով սահմանված կարգով խոշոր գործարքների կնքման թույլատրումը,

ժգ) Օրենքով սահմանված դեպքերում Կազմակերպության թողարկած բաժնետոմսերի ձեռքբերման թույլատրումը,

ժէ) Տնօրենների խորհրդի ներկայացմամբ՝ բաժնետոմսերի համախմբման կամ բաժանման մասին որոշումը,

ժը) Կազմակերպության Վարչության կազմի հաստատումը,

ժթ) Հայաստանի օրենսդրությամբ ժողովին վերապահված այլ իրավասությունների իրականացումը:

Տնօրենների խորհուրդը (խորհուրդ)

Կազմակերպության Խորհուրդն իրականացնում է Կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը, կամ Կազմակերպության Կանոնադրության համաձայն կամ Տնօրենների խորհրդի որոշմամբ պատվիրակված են Վարչությանը կամ Վարչության նախագահին:

Խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

ա) Որոշել Կազմակերպության գործունեության հիմնական ոլորտները,

բ) Վերահսկել Կազմակերպության ղեկավար մարմինների գործունեությունը,

գ) Հաստատել Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,

դ) Գումարել տարեկան և արտահերթ ժողովներ, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

ե) Հաստատել ժողովների օրակարգը,

զ) Հաստատել ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը, ինչպես նաև լուծել բոլոր այն հարցերը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանն Օրենքի դրույթներին համապատասխան,

է) Օրենքի համաձայն առաջարկություններ ներկայացնել ժողովների քննարկմանը,

ը) Օրենքով սահմանված կարգով որոշել գույքի շուկայական արժեքը,

թ) Կազմակերպության Վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ առաջարկություններ նախապատրաստել ժողովի համար,

ժ) Սահմանել Վարկային կազմակերպության Արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափը,

ժա) Միջանկյալ և տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին ներկայացվելիք առաջարկություններ նախապատրաստել,

ժբ) Օգտագործել Կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամները,

ժգ) Հաստատել կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթեր և այլ ներքին կանոնակարգեր,

ժդ) Հաստատել Կազմակերպության ամենամյա ծախսերի նախահաշիվը և գործարար ծրագիրը,

ժե) Որոշումներ կայացնել Կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր ձեռք բերելու վերաբերյալ,

ժզ) Որոշումներ կայացնել Կազմակերպության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման, այդ թվում՝ հրապարակային տեղաբաշխման մասին

ժէ) Նշանակել Վարկային կազմակերպության Գլխավոր տնօրենի և Վարչության այլ անդամների, վաղաժամկետ դադարեցնել նրանց իրավասությունները,

ժը) Որոշում կայացնել դուստր ընկերությունների ստեղծման, դրանց կանոնադրական կապիտալում Կազմակերպության մասնակցության չափի մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որը ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով,

ժթ) Որոշում կայացնել Վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման մասին և հաստատել դրանց ներքին կանոնակարգերը,

ժի) Որոշում կայացնել այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցելու մասին, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում, որը ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով,

ի) Որոշում կայացնել հողինգային ընկերություններում, ֆինանսական և արդյունաբերական խմբերում, միավորումներում և առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցության մասին,

իա) Հաստատել ցանկացած պայմանագիր, ներառյալ՝ առանց սահմանափակման, Վարկային կազմակերպության գույքի օտարման պայմանագրեր, վարկային պայմանագիր, ծախսերի նախահաշիվով չնախատեսված՝ գումարի փոխանցում, չեկ, մուրհակ, վարկ, երաշխիք կամ հավաստագիր, կամ այլ ֆինանսական գործիք կամ գործառնություն, որը գերազանցում է 50,000 ԱՄՆ դոլարի համարժեքը տեղական արժույթով: Ընդ որում, 50,000 ԱՄՆ դոլարի սահմանափակման մեջ չեն մտնում Վարկային կազմակերպության բանկային հաշվից ծախսերի նախահաշիվով նախատեսված գործունեության կապակցությամբ կատարվող փոխանցումները, ինչպես նաև Վարկային կազմակերպության կողմից որպես հիմնական գործունեություն հաճախորդներին տրվող վարկերը և ՀՀ բանկերում դրված ավանդները, ինչպես նաև կարճաժամկետ (վեց ամիսը չգերազանցող) դրամական հոսքերի փոխադարձ ապահովմամբ կատարվող գործարքների (back to back transactions (ներառյալ սվոփ)), ռեպո, դրամական միջոցների գրավով ապահովված վարկեր գործառնությունների, բանկերից ստացվող վարկերի և դեպոզիտների, ֆինանսական կազմակերպություն չհամարվող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձանցից ստացվող փոխառությունների, արտարժույթի առքուվաճառքի և կանխիկացման գործարքները,

իբ) Օրենքով նախատեսված դեպքերում թույլատրել խոշոր գործարքների կնքումը,

իզ) Սահմանել և ըստ անհրաժեշտության փոփոխել վարկային քաղաքականության ուղղությունը և ներքին վերահսկողության կանոնները, այդ թվում՝ Կազմակերպության ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության ընթացակարգերը,

իդ) Լուծել այլ հարցեր, որոնք Խորհուրդն էական է համարում Վարկային կազմակերպության զարգացման համար, կամ որոնք նախատեսված են Օրենքով և Կազմակերպության Կանոնադրությամբ:

Վերը ներկայացված հարցերը պատկանում են Կազմակերպության տնօրենների Խորհրդի բացառիկ իրավասությանը և չեն կարող պատվիրակվել Վարչությանը՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Կազմակերպության Վարչությունը

Կազմակերպության ընթացիկ գործունեությունը ղեկավարվում է Կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից՝ Վարչության հետ միասին: Կազմակերպության Գլխավոր տնօրենը և Վարչությունը հաշվետու են Տնօրենների խորհրդին և Բաժնետերերի ժողովին:

Վարչությունը Կազմակերպության կոլեգիալ գործադիր մարմին է: Կազմակերպության կանոնադրության, միակ բաժնետիրոջ որոշմամբ և ՀՀ օրենսդրության համաձայն Գլխավոր տնօրենը, Ֆինանսական տնօրենը, Գործառնական տնօրենը, Գլխավոր հաշվապահը և իրավաբանական վարչության ղեկավարը հանդիսանում են Վարչության անդամներ: Վարչության կազմը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Տնօրենների խորհրդի որոշմամբ: Գլխավոր տնօրենը հանդիսանում է Վարչության նախագահը և պատասխանատու է Վարչությունը գործունեության համար:

Վարչությունը իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) Նախապատրաստում և Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,

բ) Նախապատրաստում և Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության ծախսերի ամենամյա նախահաշիվը և գործարար ծրագիրը,

գ) Իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը և բոլոր գործառնությունները, ներառյալ պայմանագրերի բանակցումը և կնքումը, որը սույն Կանոնադրությամբ պահանջվող դեպքերում ենթակա է հաստատման Բաժնետերերի ժողովի կամ Տնօրենների խորհրդի կողմից,

դ) Որոշումներ է կայացնում աշխատակազմի ընտրության, նշանակման և վերապատրաստման մասին, մշակում, հաստատում և անհրաժեշտության դեպքում Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի կառուցվածքը, խթանները և նյութական պարգևների ծրագրերը,

ե) Կազմակերպության ներքին կանոնակարգերը և մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների կանոնակարգերը ներկայացնում է Տնօրենների խորհրդի հաստատմանը,

զ) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության ծառայությունների նոր տեսակները և նոր գործառնությունների ու գործունեության իրականացման կարգը՝ սույն Կանոնադրությամբ նախատեսված շրջանակներում, ի նպաստ Կազմակերպության նպատակների իրագործման,

է) Սահմանում է Կազմակերպության կողմից վարկերի և փոխառությունների տրամադրման կարգն ու պայմանները, վարկային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների սակագները, ինչպես նաև վարկավորման ընթացակարգին վերաբերվող ներքին իրավական ակտերը, բացառությամբ Վարկային կազմակերպության առաքելության, Վարկային բաժնի կառուցվածքի, հաճախորդների ընտրության չափանիշների, վարկային ծառայողների, թիմի ղեկավարների և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների խրախուսական համակարգի, վարկերի վերակառուցման (վարկային գործող պայմանագրի պայմանների փոփոխության) կարգի, վարկային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների ընդհանուր բնութագրման, ներքին վերահսկողության հետ հարաբերությունների ընթացակարգերի, որոնք սահմանելու իրավասությունը հանդիսանում է Կազմակերպության Տնօրենների խորհրդի իրավասությունը:

ը) Ամենամյա հաշվետվություններ է պատրաստում Կազմակերպության գործարար գործունեության կարևորագույն ուղղությունների վերաբերյալ և դրանք ներկայացնում Տնօրենների խորհրդին,

թ) Որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեության այլ կարևոր հարցերի վերաբերյալ:

Վարչությունը կարող է իրականացնել Հայաստանի օրենսդրությամբ և Վարչության կանոնակարգով նախատեսված այլ գործառնություններ:

Կազմակերպության Գլխավոր տնօրենը

Գլխավոր տնօրենը Վարչության ղեկավարն է: Գլխավոր տնօրենը գործում է Կազմակերպության անունից առանց լիազորագրի, մասնավորապես.

ա) Տնօրինում է Կազմակերպության գույքը,

բ) Կազմակերպության անունից Կանոնադրության դրույթների համաձայն կնքում է գործարքներ և պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր,

գ) Ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական գերատեսչությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ հարաբերություններում,

դ) Տալիս է Կազմակերպության անունից գործելու լիազորագրեր,

ե) Արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ աշխատակիցներին և աշխատակազմի անդամներին և վերահսկում է դրանց կատարումը,



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

- զ) Աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Վարկային կազմակերպության աշխատակիցներին,
- է) Աշխատակիցների նկատմամբ կիրառում է Վարչության կողմից հաստատված խրախուսման և շահադրդման միջոցներ, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառում Կազմակերպության աշխատակիցների նկատմամբ,
- ը) Ապահովում է, որպեսզի Կազմակերպության ծախսերը չգերազանցեն հաստատված բյուջեն,
- թ) Իրականացնում է Հայաստանի օրենսդրությամբ և Վարչության Կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

3.9. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը

Տնօրենների խորհուրդ՝

1. Խորհրդի նախագահ՝ Զարլաշտ Վարդակ

Բնակության վայր	Լիսմիլ Սքուերը 43724, ք. Լիսբուրգ, Վիրջինիա, Միացյալ Նահանգներ
Իրավասությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցերի վերաբերյալ: Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Պարտականությունները	Որպես խորհրդի նախագահ համակարգում է վարկային կազմակերպության Խորհրդի աշխատանքները, գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է Բաժնետերերի ժողովները:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	<ol style="list-style-type: none"> 1. ՖԻՆՔԱ Հորդանան» տնօրենների խորհրդի նախագահ 2. «ՖԻՆՔԱ Աֆղանստան» տնօրենների խորհրդի նախագահ 3. «ՖԻՆՔԱ Պակիստան» տնօրենների խորհրդի անդամ 4. «ՖԻՆՔԱ Կոսովո» տնօրենների խորհրդի նախագահ 5. «ՖԻՆՔԱ Ադրբեջան» ՖԻՆՔԱ Ադրբեջանի տնօրենների խորհրդի անդամ/նախագահ

	6. «ՖԻՆՔԱ Տաջիկստան» ՖԻՆՔԱ Տաջիկստանի տնօրենների խորհրդի անդամ 7. «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» Փոխնախագահ և բաժնի տնօրեն (Աֆղանստան, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Հորդանան, Կոսովո և Տաջիկստան)
--	--

2. Խորհրդի անդամ՝ Աննի Փեթրոյան Մալիամի

Բնակության վայր	ՀՀ, ք. Երևան Վահագնի թաղամաս, տ. 34Ա
Իրավասությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալված գործունեությունը	ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) Գլխավոր տնօրենի խորհրդական

3. Խորհրդի անդամ՝ Ռիչարդ Մարնի

Բնակության վայր	Գերտրուդստրասսե 69, Ցյուրիխ, Շվեյցարիա, 8003
Իրավասությունները	



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆԱՆՍԱՆԻ ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Պարտականությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

4. Խորհրդի անդամ՝ Նիվեդիտա Նիտյանանդ

Բնակության վայր	9601 Քրենաթա Քով, Օսթին, Տեխաս 78759, ԱՄՆ
Իրավասությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Օսթին Քլաբհաուս, Օսթին, Տեխաս-տնօրենների խորհրդի անդամ և Ժամանակավոր գանձապահ

5. Խորհրդի անդամ՝ Գևորգ Տեր-Հովհաննիսյան

Բնակության վայր	Հասցե ՀՀ-ում – ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 54, բն. 51, Հասցե ԱՄՆ-ում – 1133, 13րդ Էն Դաբլյու փ., բն. 2Բ, Վաշինգթոն ԴիՍի, ԱՄՆ
Իրավասությունները	



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆ-ՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Պարտականությունները	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Վարչություն՝

1. Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն՝ Սթիվեն Մայքլ Հասս

Բնակության վայրը	Փաստ.բն. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 53, բն. 10
Պարտականությունները	<p>Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարում: Պատասխանատու և հաշվետու է ընկերության տնօրենների խորհրդին և միակ բաժնետիրոջը: Որպես Գլխավոր տնօրեն ղեկավարում է Ընկերությունը՝ մշակելով Տնօրենների խորհրդի և/կամ Բաժնետերերի ժողովի կողմից հաստատման ենթակա կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, նպատակները և քաղաքականությունները՝ ապահովելով վերջիններիս իրականացումը և կիրառումը:</p> <p>Հիմնական պարտականություններն են՝</p> <p>1)Ընկերության աշխատակիցների նկատմամբ ցուցաբերել առաջնորդության լավագույն փորձը:</p>

	<p>2) Կառավարել, խելամիտ և արդյունավետ կերպով օգտագործել ինչպես Ընկերության մարդկային և այլ ռեսուրսները, այնպես էլ ՖԻՆՔԱ-ում (ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենս գլխամաս, Տարածաշրջանային գրասենյակ, այլ ՖԻՆՔԱ դուստր կազմակերպություններ) առկա և արտաքին (ՖԻՆՔԱ-ից դուրս) ռեսուրսները:</p> <p>3) Ապահովել բարձրորակ ֆինանսական ծառայություններ հաճախորդի համար և առավելագույնի հասցնել հաղորդակցումը և հասանելիությունը թիրախային խմբի հետ:</p> <p>4) Կորպորատիվ ղեկավարման, ֆինանսական ղեկավարման և ռիսկերի կառավարման, կազմակերպչական կառուցվածքի և ընթացակարգերի մշակման, աշխատակազմի զարգացման և այլ գործընթացներում ապահովել հնարավոր լավագույն փորձի կիրառումը:</p> <p>5) Ապահովել բոլոր գործընթացների և ընթացակարգերի համապատասխանությունը Ընկերության Կանոնադրությանը, ՖԻՆՔԱ-ի և Ընկերության քաղաքականություններին, ընթացակարգերին, ծրագրերին և համաձայնագրերին, Ընկերության կառավարման մարմինների որոշումներին, ինչպես նաև գլխամասային և տարածաշրջանային գրասենյակի որոշումներին:</p> <p>6) Ակտիվորեն համագործակցել տարածաշրջանային գրասենյակի, գլխամասի և ղեկավար մարմինների հետ:</p> <p>7) Մոբիլիզացնել ֆինանսավորման ռեսուրսները՝ պարտավորությունների և/կամ դրամաշնորհային կապիտալի տեսքով:</p> <p>8) Նպաստել ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենսի բրենդի տարածմանը երկրում:</p> <p>9) Նպաստել ՖԻՆՔԱ ցանցի զարգացմանը:</p> <p>10) Գործել Ընկերության անունից առանց լիազորագրի, մասնավորապես.</p> <p>10.1 Տնօրինել Ընկերության գույքը,</p> <p>10.2 Ընկերության կանոնադրության դրույթներին համապատասխան Ընկերության անունից կնքել</p>
--	---

	<p>գործարքներ և պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր,</p> <p>10.3 Ներկայացնել Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական գերատեսչությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ հարաբերություններում,</p> <p>10.4 Տրամադրել Ընկերության անունից գործելու լիազորագրեր,</p> <p>10.5 Արձակել հրամաններ, հրահանգներ, տալ դրանց իրականացման համար պարտադիր ցուցումներ աշխատակիցներին և վերահսկել դրանց կատարումը,</p> <p>10.6 Աշխատանքի ընդունել և աշխատանքից ազատել Ընկերության աշխատակիցներին,</p> <p>10.7 Աշխատակիցների նկատմամբ կիրառել Վարչության կողմից հաստատված խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,</p> <p>10.8 Ապահովել, որպեսզի Ընկերության ծախսերը չգերազանցեն հաստատված բյուջեն,</p> <p>10.9 Իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:</p>
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

2. Վարչության անդամ, Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ՝ Անուշ Պետրոսյան

Բնակության վայրը	Գրանցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զարոբյան փողոց, տուն 30
Իրավասությունները Պարտականությունները	<ul style="list-style-type: none"> Պատասխանատու է Կազմակերպության բոլոր ֆինանսական և հաշվապահական գործողությունների կազմակերպման համար, և ղեկավարում է ֆինանսական ամբողջ անձնակազմը:

	<ul style="list-style-type: none"> • Հանդիսանում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ: • Ապահովում է հաշվապահական հաշվառման իրականացումը համաձայն ՀՀ օրենսդրությամբ և ներքին ընթացակարգերով սահմանված պահանջների: • Վերահսկում է հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը տարբեր շահառուներին (ՀՀ կենտրոնական բանկ, հարկային մարմիններ, ՖԻՆՔԱ Իմփաքթ Ֆայնանս, միջազգային վարկառու կազմակերպություններ, ներքին ստորաբաժանումներ): • Ապահովում է արդյունավետ լիկվիդայնության կառավարումը՝ բանակցելով և ներգրավելով ֆինանսական միջոցներ ներքին և արտաքին ներդրողները: • Ղեկավարում է Ընկերության պլանավորման և բյուջետավորման գործընթացները: • Կազմակերպում է տարեկան արտաքին աուդիտի իրականացումը: • Որպես Վարչության անդամ մասնակցում և քվեարկում է «Ֆինասական» և «Ոչ ֆինանսական» հարցերի շուրջ որոշումներ կայացնելու հարցում:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

3. Վարչության անդամ, Գլխավոր կոմերցիոն տնօրեն՝ Վարդան Հարոյան

Բնակության վայրը	Գրանցման հասցե՝ ՀՀ, ք. Արարատ, Աղբյուր Սերոբի փ., 62., բն. 25
------------------	---

<p>Իրավասությունները</p>	<p>Գլխավոր կոմերցիոն տնօրենը, ով ի պաշտոնե հանդիսանում է Ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի անդամ, պատասխանատու է բիզնեսի կոմերցիոն գործառույթների կառավարման և օպտիմալացման համար: Այս պաշտոնը ներառում է այնպիսի ռազմավարական նախաձեռնությունների մշակում և իրականացում, որոնք կնպաստեն հաճախորդների բազայի մեծացմանը, կխթանեն վաճառքների աճը և կապահովեն ընկերության ֆինանսական հաջողությունը: Գլխավոր կոմերցիոն տնօրենը առանցքային դեր է խաղում բիզնեսի և վաճառքների ռազմավարությունների ձևավորման գործում՝ նպատակ ունենալով ապահովել Ընկերության կայուն աճը՝ միաժամանակ պահպանելով որակի բարձր չափանիշները:</p> <p>Գլխավոր կոմերցիոն տնօրենը հաշվետու է Գլխավոր տնօրենին:</p> <p>Հանդիսանալով Վարչության անդամ՝ Գլխավոր կոմերցիոն տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության ընդհանուր կատարողականի ապահովման և գործունեության համար:</p>
--------------------------	--

<p>Պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Հաճախորդների ներգրավում և պահպանում. համաձայն Ընկերության աճի նպատակների՝ խթանում է հաճախորդների բազայի մեծացմանն ուղղված նախաձեռնությունները՝ միաժամանակ ապահովելով հաճախորդների բավարարվածության և պահպանման բարձր մակարդակ: • Վաճառքի ռազմավարության զարգացում. մշակում և իրականացնում է արդյունավետ վաճառքների ռազմավարություն՝ նպաստելով եկամուտների աճին և կենտրոնանալով շուկայի ընդլայնման ու ապրանքների/ծառայությունների՝ շուկա ներթափանցման վրա: • Պորտֆելի աճ. ապահովում է պորտֆելի ծավալի կայուն աճ՝ բիզնեսի նոր հնարավորություններ բացահայտելով, խաչաձև վաճառքներ իրականացնելով և հաճախորդների հետ առկա հարաբերությունները օպտիմալացնելով: • Որակի ապահովում. ապահովում և բարելավում է ապրանքների/ծառայությունների որակը՝ համապատասխանելով կամ գերազանցելով ոլորտի և կազմակերպության չափանիշները. • Ֆինանսական նպատակների ապահովում. համագործակցում է Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահի և ֆինանսական թիմի հետ՝ ֆինանսական թիրախներն ապահովելու կամ գերազանցելու նպատակով՝ հավասարակշռելով եկամուտ-ծախս հարաբերակցությունը, նպաստելով ամբողջ համակարգի ֆինանսական հաջողությանը: • Տրանսֆորմացիա: Համագործակցում է Գլխավոր գործառնական տնօրենի հետ ՖԻՆ-ՔԱ Հայաստանում նոր բիզնես մոդելը հաջողությամբ ներդնելու համար, մասնավորապես. <ul style="list-style-type: none"> ✓ Պատասխանատու է Hub/spoke մոդելին անցում կատարելու գործընթացի համար՝ գործառնական խստությամբ և ծախսարդյունավետ մեթոդների կիրառմամբ:
----------------------------	---

	Ապահովում է կենտրոնացված վաճառքների աշխատանքի օպտիմալ մակարդակը՝ բարելավելով հաճախորդամետությունը և հասնելով սահմանված կատարողականի առանցքային ցուցանիշներին:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

4. Վարչության անդամ, Գլխավոր գործառնական տնօրեն՝ Սուրեն Մարգարյան

Բնակության վայրը	Գրանցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Բաշինջաղյան փ., 192շ., բն. 63
Իրավասությունները	<p>Գլխավոր գործառնական տնօրենը, ով ի պաշտոնե հանդիսանում է Ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի անդամ, պատասխանատու է կազմակերպության ամենօրյա գործունեության օպտիմալացման և ռացիոնալացման համար: Կենտրոնանալով արդյունավետության վրա՝ Գլխավոր գործառնական տնօրենը աշխատում է ներքին գործընթացները համապատասխանեցնել ռազմավարական նպատակներին, բարելավել ընդհանուր կատարողականը և բարձրացնել արտադրողականությունը: Այս պաշտոնը ներառում է գործառնական ռազմավարությունների իրականացում, որոնք կնպաստեն կազմակերպության գործընթացների անխափան աշխատանքին և նպատակների իրագործմանը:</p> <p>Գլխավոր գործառնական տնօրենը առանցքային դեր է խաղում նորարարության, տրանսֆորմացիայի, ծախս-արդյունավետության և մասշտաբայնության խթանման գործում՝ զգալի ներդրում ունենալով բիզնեսի ընդհանուր հաջողության և կայունության մեջ:</p> <p>Գլխավոր գործառնական տնօրենը հաշվետու է Գլխավոր տնօրենին: Նա պարբերաբար հաշվետվություններ է</p>

	<p>ներկայացնում Տնօրենների խորհրդին բիզնեսի արդյունավետության, գործընթացների օպտիմալացման, նորարարության և հետգործառնական գործառնությունների մասին:</p> <p>Հանդիսանալով Վարչության անդամ՝ Գլխավոր կոմերցիոն տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության ընդհանուր կատարողականի ապահովման և գործունեության համար:</p>
<p>Պարտականությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Գործառնական արդյունավետություն. օպտիմալացնում է ներքին գործընթացները և աշխատանքային հոսքերը գործառնական արդյունավետությունը բարձրացնելու, ծախսերը նվազեցնելու և ընդհանուր արտադրողականությունը բարձրացնելու համար: • Ռազմավարական հետևողականություն. ապահովում է գործառնական գործունեության սերտ կապը ռազմավարական նպատակների հետ, որն էլ երաշխավորում է երկարաժամկետ հաջողություններ: • Որակի կառավարում. մշակում և հետևում է որակի կառավարման խիստ ստանդարտների՝ արտադրանքի/ծառայության որակը և հաճախորդների բավարարվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: • Ռեսուրսների օպտիմիզացիա. արդյունավետորեն կառավարում է և՛ մարդկային և՛ տեխնոլոգիական ռեսուրսները՝ եկամուտների ավելացման և ծախսերի նվազեցման, ֆինանսական նպատակներին և կայունությանն աջակցելու նպատակով: • Նորարարություն և հարմարեցում. խրախուսում է նորարարական և շարունակական կատարելագործման մշակույթը՝ տեղեկացված լինելով ոլորտի զարգացումներին և տեխնոլոգիաներին՝

	<p>գործառնությունները երկարաժամկետ մրցունակությանը և աճին հարմարեցնելու համար:</p> <ul style="list-style-type: none"> • Տրանսֆորմացիա: Համագործակցում է Գլխավոր կոմերցիոն տնօրենի հետ ՖԻՆՔԱ Հայաստանում նոր բիզնես մոդելը հաջողությամբ ներդնելու համար, մասնավորապես. <ol style="list-style-type: none"> 1. ապահովում է հիմնական գործիքները՝ թվայնացումը, ավտոմատացումը և Touch-tech-ը ճիշտ ժամանակին և ժամանակացույցին համապատասխան, 2. ապահովում է հիմնավոր, կենտրոնացված Կոնտակտային կենտրոնի օպտիմալ աշխատանքը՝ բարելավելով հաճախորդամետությունը և հասնելով սահմանված կատարողականի առանցքային ցուցանիշներին:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

5. Վարչության անդամ, Գլխավոր իրավախորհրդատու, Իրավաբանական վարչության ղեկավար, Կորպորատիվ քարտուղար՝ Հարություն Չադրյան

Բնակության վայրը	գրանցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 39 շենք, 38 բնակարան, փաստ. բնակ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծարավ Աղբյուր 55/20 շենք, 76 բնակարան
Իրավասությունները Պարտականությունները	Պատասխանատու է կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպության Վարչության և Տնօրենների խորհրդին համապարփակ իրավաբանական և ռազմավարական խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև կազմակերպության ընդհանուր իրավական ռիսկի կառավարման համար: Իրավաբանական վարչության ղեկավարը կազմակերպության Վարչության անդամ է, ուստիև մասնակցում է տվյալ մարմնի կողմից

	իրականացվող բոլոր քննարկումներին և որոշումներին: Իրավաբանական վարչության ղեկավարը երկակի դեր ունի՝ բաղկացած հետևյալից՝ (I) որպես Իրավաբանական վարչության ղեկավար և Վարչության անդամ՝ նա կրում է հիմնական պատասխանատվություն Կազմակերպության իրավաբանական բաժնի գործառույթների համար և (II) որպես կորպորատիվ քարտուղար՝ նա կրում է պատասխանատվություն Կազմակերպության կորպորատիվ կառավարման համար:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

31/12/2024թ. դրությամբ Կազմակերպության ակտիվների 10 և ավելի տոկոսը կենտրոնացված չէ որևէ մասնաճյուղում:

Կազմակերպության և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև 31/12/2024թ. դրությամբ շահերի բախում չկա:

3.10. Կառավարման մարմինների գործունեությունը

Կազմակերպությունում գործում է Տնօրենների Խորհրդի, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով, որի նպատակն է կարգավորել և վերահսկել Կազմակերպության ֆինանսական ռիսկերը, ներառյալ իրացվելիության (ֆինանսավորման) ռիսկը, տոկոսադրույքների ռիսկը և արտարժույթի ռիսկը: Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են նաև վարկային ռիսկը, վարկավորման ռիսկը և գործառնական ռիսկն այնքանով, որքանով դրանք ազդում են ֆինանսական ռիսկերի գնահատման և դրան առնչվող գործողությունների վրա: Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը գնահատում է նաև և խորհուրդներ է տրամադրում կապիտալի կառուցվածքին վերաբերող որոշումների շուրջ և ռիսկի կառավարման գործողությունների շրջանակում վերահսկում է կապիտալի բավարարությունը:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերը կազմակերպվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Կազմակերպության Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կազմը ներկայացված է ստորև.

Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Իրավասություններն ու պարտականությունները	Հանձնաժողովի գործունեությունից դուրս հանձնաժողովի
--------------------	----------------------	---	---

			անդամի ծավալած գործունեությունը
Զարլաշտ Վարդակ	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենսի փոխնախագահ, տարածաշրջանի ղեկավար
Զասթին Վարրեն	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենսի Կապիտալ շուկաների խմբի Պարտքի և Կապիտալի ներգարավման ղեկավարի ժ/պ
Գևորգ Տեր-Հովհաննիսյան	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	ՖԻՆՔԱ Իմփեքթ Ֆայնենսի Գանձապետական ծառայությունների տնօրեն
Սթիվեն Մայքլ Հասս	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նախագահ	Կազմակերպում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի աշխատանքները, գումարում է հանձնաժողովի նիստերն ու նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:	Կազմակերպության Գլխավոր տնօրեն
Անուշ Պետրոսյան	Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը, հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	Կազմակերպության Գլխավոր ֆինանսական տնօրեն/ Գլխավոր հաշվապահ
Վարդան Հարոյան	Ակտիվների և պարտավորությունների կառավարման	Մասնակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, գնահատում ռիսկերը,	Կազմակերպության Գլխավոր Կոմերցիոն տնօրեն

	հանձնաժողովի անդամ	հանդես գալիս համապատասխան առաջարկություններով:	
--	--------------------	--	--

Թողարկողի գլխավոր հաշվապահը

Կազմակերպության գլխավոր հաշվապահն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները և ի պաշտոնե հանդիսանում է Վարչության անդամ:

Կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Կազմակերպության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Կազմակերպության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության գլխավոր հաշվապահն է Անուշ Պետրոսյանը:

Կազմակերպությունում ներդրված կորպորատիվ կառավարման սկզբունքները համապատասխանում են, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, Կազմակերպության Կանոնադրության, Դուստր կազմակերպության ընդհանուր քաղաքականության ձեռնարկի կորպորատիվ կառավարման չափանիշներին և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

3.11. Հսկող անձինք

Կազմակերպության հսկող անձ է հանդիսանում «ՖԻՆ-ՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ» ընկերությունը (հասցե՝ Դե Էնտրե 99, 1101 Էյչ-Ի Ամստերդամ, Նիդերլանդներ), որպես Կազմակերպության միակ բաժնետեր:

3.12. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.12.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Կազմակերպության 2022, 2023 և 2024 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով ներառված են Ազդագրին կից հավելվածներում:

Ցանկության դեպքում ներդրողները Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Կազմակերպության գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Թողարկողի պաշտոնական ինտերնետային տնային էջում՝ www.finca.am:

3.12.2. Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2024թ. դեկտեմբերի 31-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագրի գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

3.12.3. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Կազմակերպությունը ներգրավված չէ ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներում:

3.13. Լրացուցիչ տեղեկատվություն

3.13.1. Կազմակերպության կանոնադրական կապիտալը

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ հիմնադրման պահին՝ 2006 թվականի մարտի 28-ի դրությամբ, Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմել է 155 մլն ՀՀ դրամ, որը բաժանված է եղել 15,500 ոչ փաստաթղթային սովորական բաժնետոմսերի, ընդ որում, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմել է 10,000 ՀՀ դրամ: Գործունեության ընթացքում Կազմակերպության կանոնադրական կապիտալը համալրվել է մի քանի անգամ՝ 2006 թվականի օգոստոսի 28-ին 744,720,000 ՀՀ դրամով, 2009 թվականի օգոստոսի 14-ին 465 մլն ՀՀ դրամով, 2012 թվականի հուլիսի 19-ին 3,126,990,000 ՀՀ դրամով, որից 850 մլն ՀՀ դրամը նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի հաշվին և 2014 թվականի հունիսի 11-ին 414,250,000 ՀՀ դրամով՝ կազմելով 4,905,960,000 ՀՀ դրամ:

31.12.2024թ. դրությամբ Կազմակերպության փաստացի համալրված կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960,000 (չորս միլիարդ ինը հարյուր հինգ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է ոչ փաստաթղթային տեսքով թողարկված 490,596 (չորս հարյուր ինսուն հազար հինգ հարյուր ինսունվեց) սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Կազմակերպության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Կազմակերպության միակ բաժնետիրոջը՝ «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ ՅՈւ. Էյ» կազմակերպությանը:

Կազմակերպության Կանոնադրության վերաբերյալ տեղեկատվություն

Կազմակերպության հիմնական նպատակը³ հանդիսանում է, բացառությամբ Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների, միկրոֆինանսական ծառայությունների ողջ տեսականու տրամադրումը՝ նպատակ հետապնդելով կրճատել աղքատությունը, բարձրացնել զբաղվածության մակարդակը և խթանել ձեռներեցությունն ու Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական համախմբումը, ինչպես նաև ստանալ շահույթ Կազմակերպության գործունեությունից, որը հիմնականում պետք է ուղղվի այդ նպատակների իրագործմանը:

Վերը ներկայացված նպատակներն իրագործելու նպատակով Կազմակերպությունն իրավասու է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված արտոնագրի հիման վրա զբաղվել գործունեության հետևյալ տեսակներով⁴.

ա) օրենքով թույլատրված սահմաններում՝ ներգրավել փոխառություններ և/կամ կնքել նմանատիպ գործարքներ,

բ) տրամադրել վարկեր, այդ թվում՝ ձեռնարկատիրական և սպառողական վարկեր, ինչպես նաև իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում (ֆակտորինգ),

գ) տրամադրել երաշխիքներ,

դ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել արժեթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, այդ կապակցությամբ կատարել նման այլ գործառնություններ,

ե) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),

զ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

է) գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ կանխիկ և անկանխիկ ձևերով,

ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքի հետ ստացման գործունեություն, և

ժա) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ, որը կնպաստի Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրագործմանը:

³ «ՖԻՆԵԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Կանոնադրություն, կետ 2.1

⁴ «ՖԻՆԵԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Կանոնադրություն, կետ 2.2

3.13.2 Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2024թ. դեկտեմբերի 31-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագրի գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները ներկայացված են ստրոն:

Ընդհանուր պարտավորությունները նվազել են 6%-ով կազմելով 20.2 մլրդ ՀՀ դրամ 2025թ.-ի 1-ին եռամսյակի դրությամբ համեմատած 2024թ.-ի հետ: Զուտ շահույթը նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը նվազել է 52.68%-ով կազմելով 111 հազ. ՀՀ դրամ 2025թ.-ի 1-ին եռամսյակի դրությամբ համեմատած 2024թ.-ի հետ:

3.14. Էական պայմանագրերը

Կազմակերպությունում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Կազմակերպության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Կազմակերպության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

3.15. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Ներկայացվող Ազդագրում պարտատոմսերի թողարկման կազմակերպման վերաբերյալ որպես խորհրդատու հանդես է գալիս՝ «Դայմենշն» ՓԲԸ -ն: Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

3.16. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.finca.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Կազմակերպության գլխամասային գրասենյակ:

Հավելված 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն)×100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընհանուր ակտիվների միջին մեծություն)×100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ / Ընհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) = Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սարեղ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) – (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆՔԱ ՈւՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկման Վերջնական Պայմաններ

----- 2025 թ.

«ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ----- 2025 թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի փ. 2ա:

Ընդհանուր տեղեկություններ		
(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ
	Երաշխավորողը	Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Պարտատոմսերի

		տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր «Դայմենշն» փակ բաժնետիրական ներդրումային ընկերության հետ
	Սերիան	
	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	Ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների հստակագրված առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է Ծրագրային Ազդագրի 10.6 մասում
	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
	Առաջարկի գինը	Ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների հստակագրված առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից

		առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ օր առաջ
	Անվանական արժեքը	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
	Քանակը	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի, այսինքն Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից

		առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի Տնօրենների Խորհրդի կողմից 2025 թվականի ապրիլի 16-ին ընդունված թիվ N19/2025 որոշմամբ: Հաջորդ թողարկումները ենթակա են որոշման Թողարկողի Տնօրենների Խորհրդի առանձին որոշումների հիման վրա
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել	ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

	<p>տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն</p>	<p>Տնօրենների հստակագրված առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ</p>
	<p>Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)</p>	<p>Ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների հստակագրված առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ</p>
	<p>Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)</p>	<p>Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)</p>
	<p>Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը</p>	<p>Ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների հստակագրված առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային</p>

		օր առաջ
	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների հորհրդի առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների հորհրդի առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	Անվանական արժեքով
	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում

	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	Չի նախատեսվում
	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	Չի նախատեսվում
	Այլ տեղեկություններ	
	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փուֆ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	Ժամկետ(ներ)ը	
	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Դայմենշն» ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 2, 27/1 ոչ բնակելի տարածք
	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	Ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային

		օր առաջ
Այլ տեղեկություններ		
	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն որևէ կարգավորվող շուկայում առևտրի
	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու և/կամ ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի առևտրի թույլտվություն ստացման և/կամ ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

		ընկերությունը:
	Արժեթղթի վարկանիշը	Ոչ կիրառելի
	Արժեթղթերի դիմաց վճարների կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ենթակա է որոշման «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

Թողարկողը (երաշխավորողը) պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը (երաշխավորողը) հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:



ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական հաշվետվություններ

**«ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Ֆինանսական հաշվետվություններ
և անկախ աուդիտորական եզրակացություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2024Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 3

ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն..... 11

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ 13
2. Հայաստանի գործարար միջավայրը 13
3. Պատրաստման հիմունքները 14
4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթների ամփոփում 15
5. Կարևոր հաշվապահական գնահատականներ և դատողություններ 29
6. Չուտ տոկոսային եկամուտ 30
7. Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս 31
8. Չուտ օգուտ արտարժույթային գործառնություններից 31
9. Այլ եկամուտ 31
10. Պարտքային կորուստների գծով ծախս/(պարտքային կորուստների գծով ծախսի հակադարձում) 32
11. Անձնակազմի գծով ծախսեր 32
12. Այլ ծախսեր 33
13. Շահութահարկի գծով ծախս 33
14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 35
15. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 36
16. Հաճախորդներին տրված վարկեր 36
17. Ներդրումային արժեթղթեր 42
18. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ 43
19. Հիմնական միջոցներ 44
20. Ոչ նյութական ակտիվներ 45
21. Այլ ակտիվներ 46
22. Թողարկված պարտքային արժեթղթեր 47
23. Հետգնման պայմանագրեր 47
24. Այլ փոխառու միջոցներ 47
25. Վարձակալության գծով պարտավորություններ 49
26. Այլ պարտավորություններ 50
27. կապիտալ 50
28. Պայմանական ակտիվներ և պարտավորություններ 52
29. Գործարքներ կապակցված կողմերի հետ 52
30. Իրական արժեքի չափում 54
31. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում 57
32. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 59
33. Ռիսկերի կառավարում 61
34. Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն 80
35. Կապիտալի համարժեքություն 81

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2024Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հետևյալ հայտարարությունը, որը պետք է ընթերցվի անկախ աուդիտորի պատասխանատվության հետ համատեղ, նպատակ ունի տարբերակել համապատասխանաբար՝ ղեկավարության և անկախ աուդիտորի պատասխանատվությունը «ՖԻՆԸԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք ճշմարիտ են ներկայացնում 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար նրա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և Ընկերության կապիտալի փոփոխությունները, համաձայն ՖՀՄՍ Հաշվառման Ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարության պատասխանատվությունն է.

- ընտրել պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականություն և հետևողականորեն կիրառել այն.
- կատարել ողջամիտ և շրջահայաց դատողություններ և գնահատումներ.
- արձանագրել, որ պահպանվել են ՖՀՄՍ պահանջները, և
- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստել գործունեության անընդհատության հիմունքով, բացառությամբ այն դեպքերի, երբ կանխատեսելի ապագայում Ընկերության անընդհատության հիմունքով գործելու վերաբերյալ ենթադրությունը պատշաճ չէ:

Ղեկավարության պատասխանատվությունն է նաև.

- Ամբողջ Ընկերության համար մշակել, ներդնել և վարել ներքին վերահսկողության արդյունավետ և կայուն համակարգ:
- վարել պատշաճ հաշվապահական գրանցումներ, որոնք թույլ կտան ցանկացած պահի բավարար ճշգրտությամբ բացահայտել Ընկերության ֆինանսական վիճակը և հավաստիանալ, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին:
- Վարել հաշվապահական հաշվառում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ՖՀՄՍ-ներով նախատեսված կարգով
- ձեռնարկել ողջամտորեն հասանելի բոլոր միջոցները՝ Ընկերության ակտիվները պաշտպանելու համար, և
- հայտնաբերել և կանխարգելել խարդախությունը, սխալները և այլ խախտումները

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները Ընկերության ղեկավարության կողմից ստորագրվել են և հաստատվել են հրապարակման համար 2025թ. ապրիլի 30-ին:

Ընկերության ղեկավարության անունից.

Սթիվեն Հաս
Գլխավոր գործադիր տնօրեն

Անուշ Պետրոսյան
Գլխավոր ֆինանսական տնօրեն (գլխավոր
խմբակապահ)

30 ապրիլի 2025թ.
Երևան, Հայաստան

30 ապրիլի 2025թ.
Երևան, Հայաստան



ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ, դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթների ամփոփագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք Էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ Էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի են եղել ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ամբողջությամբ վերցրած ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում և հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի ձևավորման համար, և մենք չենք արտահայտում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

- Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4.4-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 33.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաշվի առնելով հաճախորդներին տրված վարկերի նշանակալիությունը, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվ բնույթը: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային

կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Ընկերության՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդաբանության առումով մեր աուդիտի ընթացակարգերը ներառել են հետևյալը.

- Ուսումնասիրվել է Ընկերության՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման բաղաբանությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները և կիրառությունները՝ առանձնահատուկ անդրադառնալով Ընկերության կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրություններին, և մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ պահուստների զգայունությանը:
- Ընկերության ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված հեռանկարային ենթադրությունների առնչությամբ քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվություն:
- Ստուգվել է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Ընկերության համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր ՏՏ ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունն է պատասխանատու այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է Ընկերության տարեկան հաշվետվության մեջ ընդգրկված տեղեկատվությունը 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, բացի ֆինանսական հաշվետվություններից

և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Տարեկան հաշվետվությունը ակնկալվում է մեզ տրամադրվել այս աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Մեր կարծիքը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք որևէ տեսակի հավաստիացում չենք ներկայացնում դրա վերաբերյալ:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների կողմից այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի շրջանակներում, մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Ի լրումն, մենք.

- Որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի բարձր է սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկի համեմատ, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության շրջանցում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության գործունեության անընդհատությունը պահպանելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզնից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն՝ ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերուղյունների վերաբերյալ:

Մենք նաև հայտարարում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց, որ կատարել ենք անկախության վերաբերյալ համապատասխան էթիկական պահանջները, ինչպես նաև նրանց հաղորդում ենք բոլոր այն հարաբերությունները կամ այլ հարցերը, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, կիրառելիության դեպքում՝ ներկայացնում ենք անկախության պահպանմանն ուղղված միջոցառումները:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, խիստ բացառիկ հանգամանքներում, մենք գտնում ենք, որ տվյալ հարցը աուդիտորական եզրակացությամբ ներկայացնելը նպատակահարմար չէ, քանի որ կարելի է ողջամտորեն ակնկալել, որ նման ներկայացման բացասական հետևանքները կզերակշռեն հանրային օգուտի նկատմամբ:

Այս անկախ աուդիտորական եզրակացություն համար հիմք հանդիսացած աուդիտորական աշխատանքների գծով առաջադրանքի գործընկերը Դավիթ Եղիգարյանն է:

30 ապրիլ, 2025թ.



Վահագն Սահակյան
Տնօրեն

Դավիթ Եղիգարյան
Գործընկեր

ՇԱՐՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազ. ՀՀ դրամ)

	Ծան.	2024թ.	2023թ.
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի միջոցով	6	5,290,191	4,938,162
Տոկոսային ծախս	6	(1,890,775)	(1,722,143)
Չուտ տոկոսային եկամուտ	6	3,399,416	3,216,019
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	7	(47,559)	(47,983)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ ծախս		(47,559)	(47,983)
Չուտ օգուտ արտարժույթային գործառնություններից	8	95,831	146,542
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով զուտ օգուտ / (վնաս)		1,549	(81,160)
Այլ եկամուտներ	9	119,398	81,514
Հիմնական միջոցների օտարումից օգուտ/վնաս		8,058	3,797
Պարտքային կորուստների գծով ծախսի հակադարձում/ (պարտքային կորուստների գծով ծախս)	10	572,668	110,862
Անձնակազմի գծով ծախսեր	11	(1,750,223)	(1,561,267)
Մաշվածություն և ամորտիզացիա	18, 19, 20	(217,837)	(271,218)
Այլ ծախսեր	12	(1,137,473)	(983,121)
Շահույթ մինչև հարկումը		1,043,828	613,985
Շահութահարկի գծով ծախս	13	(201,191)	(128,986)
Տարվա շահույթ		842,637	484,999
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		842,637	484,999

8-82 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: Անկախ աուդիտորի եզրակացությունը ներկայացված է 4-7 էջերում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

(հազ. ՀՀ դրամ)

	Ծան.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	1,301,500	881,703
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	2,198,197	3,560,735
Հաճախորդներին տրված վարկեր	16	22,280,438	21,060,430
Ներդրումային արժեթղթեր	17	-	124,601
Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	17	1,618,788	1,538,882
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	18	348,826	342,536
Հիմնական միջոցներ	19	150,942	40,718
Ոչ նյութական ակտիվներ	20	142,591	145,995
Այլ ակտիվներ	21	146,707	85,200
Ընդամենը ակտիվներ		28,187,989	27,780,800
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Թողարկված պարտքային արժեթղթեր	22	4,951,119	4,882,551
Հետզնման պայմանագրեր	23	1,597,984	1,499,262
Այլ փոխառու միջոցներ	24	13,766,144	14,031,309
Ընթացիկ հարկային պարտավորություններ		70,324	117,595
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	179,125	129,580
Վարձակալության գծով պարտավորություններ	25	380,302	399,573
Այլ պարտավորություններ	26	532,719	392,544
Ընդամենը պարտավորություններ		21,477,717	21,452,414
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	27	4,905,960	4,905,960
Գլխավոր պահուստ		368,217	343,967
Զբաղիված շահույթ		1,436,095	1,078,459
Ընդամենը սեփական կապիտալ		6,710,272	6,328,386
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		28,187,989	27,780,800

Սթիվեն Հաս
Գլխավոր գործադիր տնօրեն



Անուշ Պետրոսյան
Գլխավոր ֆինանսական տնօրեն (գլխավոր հաշվապահ)

8-82 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են մեկն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: Անկախ աուդիտորի եզրակացությունը ներկայացված է 4-7 էջերում:

ՍԵՓԱՎԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազ. ՀՀ դրամ)

	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	4,905,960	343,967	593,460	5,843,387
Տարվա շահույթ	-	-	484,999	484,999
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	484,999	484,999
Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,905,960	343,967	1,078,459	6,328,386
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	4,905,960	343,967	1,078,459	6,328,386
Տարվա շահույթ	-	-	842,637	842,637
Փոխանցում գլխավոր պահուստին	-	24,250	(24,250)	-
Շահաբաժիններ	-	-	(460,751)	(460,751)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	24,250	357,636	381,886
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,905,960	368,217	1,436,095	6,710,272

8-82 Էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: Անկախ աուդիտորի եզրակացությունը ներկայացված է 4-7 Էջերում:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազ. ՀՀ դրամ)

	<u>2024թ.</u>	<u>2023թ.</u>
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահույթ մինչև հարկումը	1,043,828	613,985
<i>Եզգրտումներ</i>		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	217,837	271,218
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս	(8,058)	-
Ֆինանսական ակտիվների արժեզրկման հակադարձում/(ծախս)	(572,668)	(110,862)
Արտարժույթի փոխարկումից օգուտ	69,393	(3,239)
Շահույթում և վնասում ճանաչված ֆինանսական ակտիվների իրական արժեքի կորուստ	(18,926)	15,674
Պահուստ	49,602	-
Ստացման ենթակա տոկոսներ	(71,356)	(553,144)
Վճարման ենթակա տոկոսներ	13,735	6,648
Գործառնական գործունեությամբ ստացված/(օգտագործված) դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	<u>723,387</u>	<u>240,280</u>
<i>Գործառնական ակտիվների (աճ)/նվազում</i>		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,303,219	(2,118,815)
Հաճախորդներին տրված վարկեր	(678,983)	(1,385,667)
Այլ փոխառու միջոցների, թողարկված պարտքային արժեթղթերի նկատմամբ հաշվեգրված տոկոսների փոփոխություն	(13,735)	(6,648)
Այլ ակտիվներ	(62,819)	11,839
Փոփոխություն օգտագործման իրավունքի ձևով ակտիվներում և վարձակալության պարտավորություններում	12,635	62,381
<i>Գործառնական պարտավորությունների (աճ)/նվազում</i>		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	(676)	(26,388)
Այլ պարտավորություններ	88,833	147,816
Գործառնական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկը	<u>1,371,861</u>	<u>(3,075,202)</u>
Վճարված շահութահարկ	(198,916)	(61,629)
Գործառնական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	<u>1,172,945</u>	<u>(3,136,831)</u>

8-82 Էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: Անկախ աուդիտորի եզրակացությունը ներկայացված է 4-7 Էջերում:

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)
2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

	<u>2024թ.</u>	<u>2023թ.</u>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ներդրումային արժեթղթերի առք	8,278	(1,418,033)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր	14,972	-
Հիմնական միջոցների ձեռքբերում	(133,615)	(10,472)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(16,405)	(6,327)
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	<u>(126,770)</u>	<u>(1,434,832)</u>
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	1,937,046	1,994,915
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(1,812,490)	(484,365)
Հետգնման պայմանագրեր	114,029	1,297,502
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(200,823)	(255,841)
Փոխառու միջոցներից մուտքեր	34,768,485	13,436,317
Փոխառված միջոցների մարում	(34,969,232)	(12,062,377)
Շահաբաժին	(460,751)	-
Ֆինանսական գործունեությամբ ստացված զուտ դրամական միջոցներ	<u>(623,736)</u>	<u>3,926,151</u>
Դրամական միջոցների և դրամական միջոցների համարժեքների զուտ աճ / (նվազում)	<u>422,439</u>	<u>(645,512)</u>
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	881,703	1,520,920
Արժեզրկման գծով պահուստի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	6	16
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,648)	6,279
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին (Ծան.14)	<u>1,301,500</u>	<u>881,703</u>
Լրացուցիչ տեղեկատվություն.		
Ստացված տոկոսներ	5,363,685	4,385,015
Վճարված տոկոսներ	(1,886,611)	(1,715,495)

8-82 Էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: Անկախ աուդիտորի եզրակացությունը ներկայացված է 4-7 Էջերում:

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՖԻՆԵՍ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն, որի 100% բաժնետոմսերը պատկանում են FINCA Microfinance Coöperatief U.A-ին (Նիդեռլանդներ): Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից և այն գործունեություն է իրականացնում 2006թ. մարտի 28-ին տրված N13 արտոնագրի համաձայն:

Ընկերությունը զբաղվում է միկրոֆինանսավորմամբ և տրամադրում է անհատական բիզնես վարկեր, ինչպես նաև սպառողական և գյուղատնտեսական վարկեր: Վարկերը տրամադրվում են ինչպես տեղական արժույթով, այնպես էլ արտարժույթով:

Ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ազաթանգեղոսի փող., 2ա:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ՀՀ-ում ունի 31 մասնաճյուղ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 30 մասնաճյուղ):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմում էր 332 (2023թ.՝ 328):

2. Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում, և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված են այդ փոփոխություններից:

2022թ. փետրվարից ի վեր շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը զգալի ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա: Շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ Ռուսաստանի՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ կազմակերպությունների և անհատների դեմ կիրառել են տնտեսական խիստ պատժամիջոցներ: Պատերազմը դեռ շարունակվում է, բայց այն արդեն հանգեցրել է հոլմանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Զնայած դժվարին մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսությունը դրսևորել և շարունակում է դրսևորել բավականին բարձր դիմադրողականություն շնորհիվ ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակաբար իրականացվող արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականությունների և համարժեք գործողությունների: Տնտեսական աճի և ակտիվության տեմպերը շարունակում են բարձր մնալ՝ պայմանավորված նաև օտարերկրյա քաղաքացիների մեծ ներհոսքով: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանում բիզնես շահեր ունենալու, հիմնելու կամ տնօրինելու իրավունքի սահմանափակումներ չկան: Բիզնեսի գրանցման ընթացակարգերը հիմնականում պարզ են: Օտարերկրյա քաղաքացիների սպասարկման արդյունքում 2023-2024թթ. Հայաստանի բանկերն արձանագրել են միջնորդական գործունեությունից եկամտի զգալի աճ:

Քանի որ ռազմական գործողությունները դեռ չեն դադարել, անհնար է արժանահավատորեն գնահատել դրա վերջնական ազդեցությունը Հայաստանի գործարար միջավայրի վրա:

2023թ. օգոստոսի 25-ին Standard & Poor's-ը բարձրացրել է Հայաստանի վարկային վարկանիշը մինչև «BB-»՝ կայուն կանխատեսմամբ: Moody's-ի Հայաստանի վարկային վարկանիշը վերջին անգամ սահմանվել է «Ba3» մակարդակում՝ կայուն կանխատեսմամբ 2023թ. հունիսի 22-ին: Fitch Ratings-ի կողմից Հայաստանի թողարկողի դեֆոլտի վարկանիշը 2023թ. հուլիսին «B+»-ից դարձել է «BB-»՝ կայուն կանխատեսմամբ: Միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրված վարկանիշի բարձրացումն արտացոլում է տնտեսական աճի ուժեղ հեռանկարները, պետական պարտքի կայունացումը միջինից ցածր մակարդակներում, կայուն հարկաբյուջետային կատարողականի հեռանկարը և արտաքին հաշվեկշռի բարելավումը:

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են Ընկերության գործառնությունների վրա հայկական բիզնես միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական միջավայրը և դրա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել ղեկավարության ներկայիս ակնկալիքներից:

3. Պատրաստման հիմունքները

3.1. Համապատասխանության մասին հայտարարություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներին համապատասխան («ՖՀՄՍ Հաշվառման ստանդարտներ»):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով, քանի որ ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունն ունի բավարար ռեսուրսներ տեսանելի ապագայում գործունեության անընդհատությունն ապահովելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, նորմատիվային կապիտալի պահանջները և ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվապահական հաշվառման մատյանների և գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Հափման հիմքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքով իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները՝ սկզբնական արժեքով:

3.3. Գործառնական և ներկայացման արժույթ:

Ընկերության գործառնական արժույթը Ընկերության հիմնական գործունեության իրականացման տնտեսական միջավայրի արժույթն է: Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը ՀՀ դրամն է («ՀՀ դրամ»), քանի որ տվյալ արժույթը լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական էությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազ. ՀՀ դրամով, եթե այլ կերպ նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության փոփոխություններ

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Մատակարարների ֆինանսական պայմանագրեր (ՀՀՄՍ 7-ի և ՖՄՍ 7-ի փոփոխություն)*
- *Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (ՖՀՄՍ 16-ի փոփոխություն)*
- *Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՄՍ 1-ի փոփոխություն)*
- *Պայմանագրերով ամրագրված երկարաժամկետ պարտավորություններ (ՀՄՍ 1-ի փոփոխություն):*

3.5 Ընկերության կողմից դեռևս չկիրառված ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ հրապարակվել են մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը չի իրականացրել վերը նշված նոր ստանդարտների և մեկնաբանությունների վաղաժամկետ կիրառում:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանում:

Ղեկավարությունը չի կանխատեսում ստորև ներկայացված ստանդարտների և փոփոխությունների արդյունքում որևէ էական ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Փոխարինելիության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ)
- Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ (ՀՀՄՍ 9-ի և ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Բնահենք էլեկտրաէներգիային վկայակոչող պայմանագրեր (ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՀՀՄՍ 18. Ներկայացումը և բացահայտումը ֆինանսական հաշվետվություններում
- ՀՀՄՍ 19 «Դուստր ընկերություններ առանց հրապարակային հաշվետվողականության պահանջի. Բացահայտում»

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթների ամփոփում

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում կիրառվել է ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Հասույթ ճանաչվում է այն դեպքում, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Ընկերություն, և այդ հասույթը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն նախքան հասույթի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդ

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույթն այն դրույթն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույթը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը (ԱՊԿ): Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույթ՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույթի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույթի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական

զուտարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս 4.4.6 ծանոթագրությունում:

Միջնորդավճարների գծով եկամուտ

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Ընկերությունը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Չուտ օգուտ արտարժույթային գործառնություններից

Արտարժույթային գործառնություններից զուտ օգուտը ներառում է արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած բոլոր եկամուտներն ու ծախսերը: Արտարժույթային գործառնություններից զուտ օգուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ**

(հազ. ՀՀ դրամ)

ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հողվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրոշմային գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված արժեքի փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված արժեքի փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընկերության ֆինանսական հաշվետվություններում բոլոր ակտիվները, պարտավորությունները և Ընկերության անդամ կազմակերպությունների ՀՀ դրամից բացի այլ գործառնական արտարժույթով (Ընկերության ներկայացման արտարժույթ) կատարվող գործառնականությունները փոխարկվում են ՀՀ դրամի:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	413.89	447.90
ՀՀ դրամ/1 ՌԴ ռուբլի	3.71	4.50

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնականությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ Էուրոյան ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրոշմային, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Եթե ֆինանսական հաշվետվությունները հաստատվում են ներկայացման համար նախքան համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացումը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումային տվյալների վրա: Հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս հարկային մարմինները կարող են ցուցաբերել ավելի խիստ մոտեցում: Արդյունքում, հարկային մարմինները կարող են առաջադրել լրացուցիչ հարկեր այն գործարքների համար, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Ըստ այդմ, կարող են առաջանալ նշանակալի չափով լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ընդգրկել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիները: Որոշակի հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի վաղ ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվարկվում են ժամանակավոր տարբերությունների նկատմամբ՝ օգտագործելով պարտավորության մեթոդը: Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է ակտիվների և պարտավորությունների հարկման բազաների և ֆինանսական հաշվետվությունների նպատակով դրանց հաշվեկշռային արժեքների միջև առաջացող բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով, բացառությամբ այն դեպքերի, երբ հետաձգված հարկը առաջանում է գուղվիլի կամ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որն իրենից չի ներկայացնում ձեռնարկատիրական գործունեության միավորում, և գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր

տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույթով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույթների վրա:

ՀՀ-ում Ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ծանաչում և սկզբնական չափում

Ընկերությունը սկզբնապես ճանաչում է հաճախորդներին տրված վարկերը, ավանդները բանկերում, թողարկված պարտքային արժեթղթերը դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների բնականոն առքուվաճառքը) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Ընկերության՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով: Եթե այն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, ապա գումարվում են նաև գործարքի գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով միայն այն դեպքում, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- Ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ:

Առևտրային նպատակներով չափվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ Էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունն ու նպատակները, ինչպես նաև այդ քաղաքականությունների գործնական կիրառումը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես է ձևավորվում ղեկավարության վարձատրությունը, օրինակ՝ արդյոք այն կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրում որպես միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ (SPPI թեստ)

Այս գնահատման նպատակով «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Ընկերությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև գնահատում արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատումը կատարելիս Ընկերությունը հաշվի է առնում.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- ապահովության միջոցի առանձնահատկությունները,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Ընկերության պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և

- առանձնահատկություններ, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Ընկերությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորդված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Ընկերության կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատուցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություններ

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը Եականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը Եականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տես 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը Եականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում

Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տե՛ս 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն գուման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Ընկերության առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

Ընկերությունը կանխատեսումային հիմունքով գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- փոխատվության հանձնառություններ
- ֆինանսական երաշխիքի պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Ընկերությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Ընկերությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո Եականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Ընկերությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը Եականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 33.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Ընկերությունը ճանաչում է կորուստների գծով պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների համար: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի Եական աճ, Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է Փուլ 3-ից:
- Փուլ 3 - արժեզրկված վարկեր: Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ Էոլթյան, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույթով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

- **Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD):** Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
- **Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD):** Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարտքի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեզրկված տոկոսները:
- **Կորուստը պարտազանցման դեպքում (LGD):** Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը պարտազանցման պահին պարտքի գումարը, պարտազանցման դեպքում կորստի գումարը մանրամասն բացահայտվում են 33.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տե՛ս՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադարձնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ փոխատուի զգալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտագանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունը այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացումը,

Վարկը, որի պայմանները վերանայվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ**

(հազ. ՀՀ դրամ)

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորուստների գծով պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորուստների գծով պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,
- փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
 - Փոխատվության հանձնառությունների չօգտագործված մասի գծով ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Ընկերությունը գնահատում է փոխատվության հանձնառության ամբողջ ժամկետի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակնկալվում է օգտագործել: Ակնկալվող դրամական պակասորդները գեղջվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
 - Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Ընկերությունը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին՝ Ընկերությունը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ,
 - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Ընկերության պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Այս նպատակով Ընկերությունը գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները՝ հիմնվելով այն ակնկալվող վճարումների ներկա արժեքի վրա, որոնք պետք է փոխհատուցեն կրած վարկային կորուստը: Պակասորդները գեղջվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույթով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստներում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (մասնակիորեն կամ ամբողջությամբ), երբ չկա դրանց վերականգնման իրատեսական հեռանկար: Սա սովորաբար այն դեպքն է, երբ Ընկերությունը որոշում է, որ վարկառուն չունի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են բավարար դրամական հոսքեր ստեղծել դուրս գրման ենթակա գումարները մարելու համար: Այնուամենայնիվ, դուրս գրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել հարկադիր կատարման՝ Ընկերության պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

Ընկերության դուրսգրման քաղաքականությունը որոշվում է վերականգնման կորերի վերլուծության հիման վրա, որն առաջանում է ՖՀՄՍ 9-ի հակադարձ թեստի և մոդելի ստուգման արդյունքում՝ որոշելու համար այն կետը, որի դեպքում ողջամտորեն կարելի է ակնկալել պորտֆելի 10% (տաս տոկոս)-ից պակաս մնացորդային գումարի հավաքագրում, որը գտնվում է դեֆոլտում առավելագույնը մինչև 24 ամիս Փուլ 3-ի վարկերի համար:

Վերականգնման կորի վերլուծության մեջ անհրաժեշտ է դիտարկել երեք պայման նախքան ստորև նշված քայլերի մեկնաբանության անորոշության արդյունքում մասնագիտական դատողություններին վերադառնալը՝

- 1) Կորի ձևը - անկախ այն բանից, արդյոք կորի արագացման գործառնությունը սահմանվում է որպես ժամանակի ամենաբարձր կամ «վերջնական» վերականգնման դրույթաչափը որպես մոնոտոն («աստիճանական») կամ արագ («կտրուկ»):
- 2) Վերականգնման վերջնական դրույթաչափի սանդղակը - 0%-ից մինչև 100%, անկախ այն բանից, արդյոք մեծ է, թե փոքր վերականգնման դրույթաչափը, և

3) Վերոնշյալ 10%-ի չափանիշի ամբողջական կամ հարաբերական կիրառման ընդունումը - արդյոք վերոնշյալ 1-ին և 2-րդ պայմանների դիտարկումից հետո մոնոտորն և լայնամասշտաբ լինելու վկայությունը պահանջում է 10%-ից պակաս վերականգնման վերջնական դրույթաչափի դուրսգրման չափանիշի կիրառում (ամբողջական կիրառում) կամ արագ և փոքրամասշտաբ լինելու վկայությունը պահանջում է 0.9-ով բազմապատկած վերջնական դրույթաչափի չափանիշի կիրառումը:

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները ներառում են կանխիկ դրամը, բանկերում հաշիվները և դրամական միջոցները ճանապարհին:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Ֆինանսական կազմակերպություններում ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Այն ակտիվները, որոնք չունեն ֆիքսված մարման ժամկետներ, հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հիմնվելով կառավարման կողմից գնահատված մարման ժամկետների վրա: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները հաշվառվում են արժեզրկման գծով պահուստների գումարներից գուտ:

4.7 Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորություններ

Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորությունները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով, կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ: Առևտրային նպատակներով պահվող ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, ապա հետագայում չափվում իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ շահույթում կամ վնասում ճանաչված գործարքային ծախսերով: Իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում են որպես շահույթում կամ վնասում գուտ առևտրային եկամտի մի մաս:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Ընկերությունը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Այդպիսի ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները՝ պարտավորությունների կազմում:

4.8 Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներ են, որոնք առաջանում են, երբ Ընկերությունը անմիջապես գումար է տրամադրում պարտապանին՝ առանց դեբիտորական պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով ծախսերը: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույթով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույթներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են

ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.9 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ «ներդրումային արժեթղթեր» տողը ներառում է.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.10 Հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեզրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.11 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կամ հստակ սահմանված է պայմանագրում, կամ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունը իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ Էռլթյան, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունը իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունը իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչումը և չափումը

Ընկերությունը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին

ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված ակտիվի բարելավումները կապիտալացվում և ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և դրանց օգտակար ծառայության ժամանակահատվածից նվազագույնով՝ գծային հիմունքներով:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հետադարձաբար որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ ԷոԼՅԱՆ հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխում վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրացումը կարելի է համարել ողջամտորեն հավաստի:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերաչափում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ ԷոԼՅԱՆ հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

4.12 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝ Կիրառվել են հետևյալ մաշվածության դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Դրույքաչափ (%)
Կապի միջոցներ և համակարգիչներ	5	20
Գրասենյակային գույք	8	12.5
Փոխադրամիջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.13 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրեր և լիցենզիաներ և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ 10 տարի օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են ոչ նյութական ակտիվի արժեզրկման հայտանիշեր: Որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկման մեթոդները և ժամկետները վերանայվում են, նվազագույնը՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.14 Բռնագանձված ակտիվներ

Ընկերության բաղաբաղանդությունն է սահմանել՝ արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար օգտագործման ենթակա ակտիվները փոխանցվում են իրենց համապատասխան ակտիվների դաս սկզբնական ապահովված ակտիվի բռնագանձված և հաշվեկշռային արժեքի նվազագույնով: Ակտիվները, որոնց համար վաճառքը որոշվում է որպես գերադասելի տարբերակ, փոխանցվում են վաճառքի համար մատչելի ակտիվների դաս՝ իրենց իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում), իսկ ոչ ֆինանսական ակտիվների դեպքում՝ իրական արժեքով՝ հանած բռնագանձման ամսաթվի դրությամբ վաճառքից ծախսերը, համաձայն Ընկերության բաղաբաղանդության:

Որոշ դեպքերում ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.15 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշների առկայության տեսանկյունից: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են մինչև դրանց ներկա արժեքը՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման դրույթաչափը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի շուկայական ընթացիկ գնահատումները և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

4.16 Փոխառություններ

Փոխառությունները, որոնք ներառում են թողարկված արժեթղթերը և այլ ներգրավված միջոցները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Եկամուտները և ծախսերը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին

հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապահանջման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.17 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

5. Կարևոր հաշվապահական գնահատականներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ: :

5.1 Դատողություններ

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Ընկերությունը գնահատում է այն բիզնես մոդելը, որի շրջանակում ակտիվները պահվում են, ինչպես նաև գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տե՛ս 4.4.2 ծանոթագրությունը):

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբերող չափանիշների սահմանում

Ընկերությունը սահմանում է չափանիշներ՝ որոշելու համար, արդյոք սկզբնական ճանաչումից ի վեր տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ, որոշում է ակնկալվող պարտքային կորուստների (ԱԴԿ) չափման մեջ հեռանկարային տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ընտրում և հաստատում է ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելները:

5.2 Ենթադրությունների և գնահատումների անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մոդելներ: Սա ներառում է գնահատումների և ենթադրությունների մշակում համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Դեկավարությունն իր ենթադրություններում որքան

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրույթամբ կարող է ձեռք բերվել անհատական գործարքների դեպքում (տե՛ս ծանոթագրություն 30):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների օգտագործման փորձի հիման վրա դատողության արդյունք է: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման օպցիոններ

Երբ Ընկերությունը ունի վարձակալության երկարաձգման օպցիոն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման օպցիոնը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը եականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում հեռանկարային տեղեկատվության ներառումը (տե՛ս ծանոթագրություն 33.1.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս ծանոթագրություն 4.4.6):

Հարկային օրենսդրություն

Հայաստանի հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս ծանոթագրություն 28:

6. Չուտ տոկոսային եկամուտ

հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
<i>Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույթի միջոցով</i>		
Հաճախորդներին տրված վարկեր	5,092,674	4,757,245
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	100,336	79,994
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	97,181	100,923
Ընդամենը տոկոսային եկամուտ	<u>5,290,191</u>	<u>4,938,162</u>
Այլ փոխառու միջոցներ	1,209,732	1,123,855
Թողարկված պարտքային արժեթղթեր	504,172	406,619
Հետգնման պայմանագրեր	125,760	129,288
Վարձակալության գծով պարտավորություններ	51,111	62,381
Ընդամենը տոկոսային ծախսեր	<u>1,890,775</u>	<u>1,722,143</u>
Ընդամենը զուտ տոկոսային եկամուտ	<u>3,399,416</u>	<u>3,216,019</u>

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ**

(հազ. ՀՀ դրամ)

Տուգանքները հաշվարկվում են հաշվեգրման մեթոդով և ներառվում են վարկի մայր գումարի և ժամկետանց հաշվեգրված տոկոսների գումարներում: 2024թ. այդ գումարը կազմում էր 181,262 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 89,175 հազ. ՀՀ դրամ):

7. Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս

հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Դրամարկղային գործառնություններ	41,867	44,337
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	3,630	1,753
Այլ ծախսեր	2,062	1,893
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	47,559	47,983

8. Չուտ օգուտ արտարժույթային գործառնություններից

հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթային փոխարկումից ստացված զուտ եկամուտ	165,226	3,239
Չուտ վնաս (եկամուտ) արտարժույթի առուվաճառքից	(69,395)	143,303
Չուտ օգուտ արտարժույթային գործառնություններից	95,831	146,542

9. Այլ եկամուտ

հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Դատական գործերով պետական տուրքերից ստացված եկամուտ	91,876	37,378
Ապահովագրական ծառայություններից ստացված եկամուտ	11,993	6,375
Ֆինանսական հաշտարարի գծով նախկինում ճանաչված ծախսերից օգուտ	2,577	2,318
Կարգավորման պայմանագրից ստացված եկամուտ	-	9,525
Միջնորդավճարներ	-	4,730
Այլ եկամուտներ	12,952	21,188
Ընդամենը այլ եկամուտներ	119,398	81,514

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

10. Պարտքային կորուստների գծով ծախս/(պարտքային կորուստների գծով ծախսի հակադարձում)

հազ. ՀՀ դրամ	2024թ.				
	Ծան.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	(6)	-	-	(6)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	6,576	-	-	6,576
Հաճախորդներին տրված վարկեր	17	148,591	(50,023)	(679,122)	(580,554)
Ներդրումային արժեթղթեր	18	1,316	-	-	1,316
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս/(պարտքային կորուստների գծով ծախսի հակադարձում)		<u>156,476</u>	<u>(50,023)</u>	<u>(679,122)</u>	<u>(572,668)</u>

հազ. ՀՀ դրամ	2023թ.				
	Ծան.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	(16)	-	-	(16)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	(7,842)	-	-	(7,842)
Հաճախորդներին տրված վարկեր	17	(1,788,372)	(3,430)	1,687,234	(104,568)
Ներդրումային արժեթղթեր	18	1,564	-	-	1,564
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս/(պարտքային կորուստների գծով ծախսի հակադարձում)		<u>(1,794,666)</u>	<u>(3,430)</u>	<u>1,687,234</u>	<u>(110,862)</u>

11. Անձնակազմի գծով ծախսեր

հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Աշխատակիցների հատուցումներ, ներառյալ հարակից հարկերը	1,712,690	1,534,971
Անձնակազմի վերապատրաստման և այլ ծախսեր	37,533	26,296
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	<u>1,750,223</u>	<u>1,561,267</u>

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

12. Այլ ծախսեր

հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Տեղեկատվական տեխնոլոգիաների ծախսեր	336,996	277,382
Ռոյալթի	135,611	116,079
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	118,405	82,247
Մասնագիտական ծառայություններ	97,147	83,900
Ներկայացուցչական ծախսեր	70,573	38,505
Գույքի և սարքավորումների պահպանման ծախսեր	55,890	59,232
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	47,680	47,388
Գանձապահի ծառայության ծախսեր	46,898	59,307
Գովազդի ծախսեր	45,266	19,968
Բանկային միջնորդավճարներ	31,563	9,066
Կոմունալ ծառայություններ	28,972	33,625
Ֆինանսական համակարգի հաշտարարի ծախսեր	19,273	15,484
Անվտանգության գծով ծախսեր	17,970	18,640
Գրասենյակային ծախսեր	17,095	20,264
Ապահովագրություն	14,392	48,979
Գործուղման ծախսեր	11,893	15,373
Դասընթացների ծախսեր	7,231	3,212
Այլ ծախսեր	34,618	34,470
Ընդամենը այլ ծախսեր	1,137,473	983,121

Ռոյալթին վճարվում է կիրառելով տոկոս գործառնական եկամտի նկատմամբ և կարող է տատանվել 1.5% -ից մինչև 2% կախված գործառնական եկամտի չափից: Ռոյալթիի նկատմամբ վճարվում է ոչ ռեզիդենտի շահութահարկ:

13. Շահութահարկի գծով ծախս

հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	149,180	145,906
Չետաձգված հարկ	52,011	(16,920)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	201,191	128,986

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկը հաշվարկվում է 18% դրույթաչափով (2023թ.՝ 18%): ՖՀՄՍ-ի և ՀՀ հարկային օրենսդրության միջև տարբերությունները առաջացնում են որոշակի ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի միջև որոշ ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների և շահութահարկի նպատակներով: Չետաձգված հարկը հաշվարկվում է՝ օգտագործելով հիմնական հարկի դրույթաչափը՝ 18%:

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ**

(հազ. ՀՀ դրամ)

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

հազ. ՀՀ դրամ	Արդյունավետ տոկոսադրույթ		Արդյունավետ տոկոսադրույթ	
	2024թ.	(%)	2023թ.	(%)
Շահույթ մինչև հարկումը	1,043,828		613,985	
Շահութահարկ	187,889	18	110,517	18
Չնվազեցվող ծախսեր	13,302	1	19,052	3
Արտարժույթի փոխարժեքի գծով օգուտ	-	-	(583)	-
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցվող հարկային վնաս	-	-	-	-
Շահութահարկի գծով ծախս	201,191	19	128,986	21

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.				
	31 դեկտեմբերի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչվող	Չուտ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(585)	(605)	(1,190)	-	(1,190)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(4,788)	1,271	(3,517)	-	(3,517)
Ներդրումներ արժեթղթերում	322	(240)	82	82	-
Հաճախորդներին տրված վարկեր	(212,191)	(97,654)	(309,845)	-	(309,845)
Հիմնական միջոցներ	29,175	(4,654)	24,521	24,521	-
Վարձակալություն	(122)	(13,185)	(13,307)	-	(13,307)
Փոխառություններ	27,347	7,586	34,933	34,933	-
Այլ պարտավորություններ	31,262	57,936	89,198	89,198	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(129,580)	(49,545)	(179,125)	148,734	(327,859)

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.				
	31 դեկտեմբերի 2022թ.	Շահույթում կամ վնասում ճանաչվող	Չուստ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորու- թյուն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(1,771)	1,186	(585)	-	(585)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	511	(5,299)	(4,788)	-	(4,788)
Ներդրումներ արժեթղթերում	40	282	322	322	-
Հաճախորդներին տրված վարկեր	(230,495)	18,304	(212,191)	-	(212,191)
Հիմնական միջոցներ	30,748	(1,573)	29,175	29,175	-
Վարձակալություն	10,387	(10,509)	(122)	-	(122)
Փոխառություններ	8,176	19,171	27,347	27,347	-
Այլ պարտավորություններ	35,904	(4,642)	31,262	31,262	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(146,500)	16,920	(129,580)	88,106	(217,686)

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Դրամական միջոցներ դրամարկղում	639,111	556,236
Հաշիվներ բանկերում	585,330	325,472
Դրամական միջոցներ ճանապարհին	77,070	-
	<u>1,301,511</u>	<u>881,708</u>
Կորուստների գծով պահուստ	(11)	(5)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	<u>1,301,500</u>	<u>881,703</u>

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 445,439 հազ. ՀՀ դրամ գումարով (76%) հաշիվները կենտրոնացված են 3 առևտրային բանկերում (2023թ. 280,088 հազ. ՀՀ դրամ (86%) կենտրոնացած են 3 առևտրային բանկերում):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
ԱՊԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	5	5	21	21
Կորուստների գծով պահուստի զուտ վերաչափում	6	6	(16)	(16)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>11</u>	<u>11</u>	<u>5</u>	<u>5</u>

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

15. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Բանկերում պահվող ավանդներ	2,200,661	3,569,775
	2,200,661	3,569,775
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով կորուստների պահուստ	(2,464)	(9,040)
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,198,197	3,560,735

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,181,080 հազ. ՀՀ դրամ համախառն գումարով բանկերում բոլոր ավանդները գրավադրված են բանկերից վարկերի դիմաց (2023թ.՝ 3,521,673) (տես՝ ծանոթագրություն 24):

Ավանդները բանկերում ունեն 90 օրից ավել մարման ժամկետ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
ԱՊԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	9,040	9,040	16,882	16,882
Կորուստների գծով պահուստի զուտ վերագնահատում	(6,576)	(6,576)	(7,842)	(7,842)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,464	2,464	9,040	9,040

16. Հաճախորդներին տրված վարկեր

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.			31 դեկտեմբերի 2023թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ժամկետի համար պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ պահուստ	Հաշվեկշռային արժեք
Գյուղատն. վարկեր	14,112,242	(759,302)	13,352,940	13,087,053	(750,741)	12,336,312
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	325,017	(10,277)	314,740	190,934	(2,633)	188,301
Սպառող. վարկեր	4,074,416	(411,251)	3,663,165	3,394,460	(363,099)	3,031,361
	4,399,433	(421,528)	3,977,905	3,585,394	(365,732)	3,219,662
Առևտրային վարկեր						
Առևտուր	2,683,256	(113,544)	2,569,712	3,261,819	(118,325)	3,143,494
Արտադրություն	713,706	(23,490)	690,216	748,144	(27,863)	720,281
Տրանսպորտ	691,981	(22,218)	669,763	697,345	(15,389)	681,956
Ծառայություն	345,300	(10,854)	334,446	274,354	(9,597)	264,757
Շինարարություն	51,605	(324)	51,281	75,582	(253)	75,329
Այլ	667,219	(33,044)	634,175	655,791	(37,152)	618,639
	5,153,067	(203,474)	4,949,593	5,713,035	(208,579)	5,504,456
Ընդամենը	23,664,742	(1,384,304)	22,280,438	22,385,482	(1,325,052)	21,060,430

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ**

(հազ. ՀՀ դրամ)

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը ձեռք չի բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավներ (2023թ.՝ նույնպես):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի Էական կենտրոնացում (2023թ.՝ նույնպես):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված 317,481 հազ. ՀՀ դրամ համախառն գումարով (2023թ.՝ 136,823 հազ. ՀՀ դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը կարող է զիջվել ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի համար և 2,860,424 հազ. ՀՀ դրամ համախառն գումարով (2023թ.՝ 3,421,540 հազ. ՀՀ դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը՝ ՀՀ կենտրոնական բանկից միջազգային ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի համար (տես ծան. 24):

Գյուղատնտեսական, հիփոթեքային և սպառողական և առևտրային վարկերի զծով համախառն հաշվեկշռային արժեքներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

հազ. ՀՀ դրամ	2024թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	11,974,823	330,219	782,011	13,087,053
Սկզբն. կամ նոր ձեռք բերված ակտիվներ	10,349,738	9,485	2,613	10,361,836
Մարված ակտիվներ	(9,387,654)	(167,266)	(643,185)	(10,198,105)
Տեղափոխում Փուլ 1	456,026	(203,705)	(252,321)	-
Տեղափոխում Փուլ 2	(7,492)	130,342	(122,850)	-
Տեղափոխում Փուլ 3	(701)	(3,360)	4,061	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների	(450,870)	274,548	679,428	503,106
Վերականգնումներ	-	-	643,185	643,185
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(284,833)	(284,833)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,933,870	370,263	808,109	14,112,242
հազ. ՀՀ դրամ	2024թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	3,109,300	131,581	344,513	3,585,394
Սկզբն. կամ նոր ձեռք բերված ակտիվներ	3,659,841	1,361	-	3,661,202
Մարված ակտիվներ	(2,493,010)	(67,463)	(171,181)	(2,731,654)
Տեղափոխում Փուլ 1	145,307	(35,168)	(110,139)	-
Տեղափոխում Փուլ 2	(11,266)	78,622	(67,356)	-
Տեղափոխում Փուլ 3	-	(161)	161	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների	(515,649)	3,802	385,391	(126,456)
Վերականգնումներ	-	-	171,181	171,181
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(160,234)	(160,234)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,894,523	112,574	392,336	4,399,433

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

հազ. ՀՀ դրամ	2024թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
<i>Առևտրային վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	5,218,575	257,361	237,099	5,713,035
Սկզբն. կամ նոր ձեռք բերված ակտիվներ	2,973,237	29,705	-	3,002,942
Մարված ակտիվներ	(3,582,776)	(140,922)	(317,464)	(4,041,162)
Տեղափոխում Փուլ 1	133,197	(89,249)	(43,948)	-
Տեղափոխում Փուլ 2	(7,183)	127,287	(120,104)	-
Տեղափոխում Փուլ 3	-	(6,846)	6,846	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների	(26,680)	9,820	259,097	242,237
Վերականգնումներ	-	-	317,463	317,463
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(81,448)	(81,448)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,708,370	187,156	257,541	5,153,067

հազ. ՀՀ դրամ	2023թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	9,349,120	423,838	2,134,315	11,907,273
Սկզբնավորված կամ նոր ձեռք բերված	10,658,855	103,779	84,805	10,847,439
Մարված ակտիվներ	(9,182,386)	(222,373)	(589,444)	(9,994,203)
Տեղափոխում Փուլ 1	11,772	(9,693)	(2,079)	-
Տեղափոխում Փուլ 2	(178,826)	205,085	(26,259)	-
Տեղափոխում Փուլ 3	(228,508)	(142,756)	371,264	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների	1,544,796	(27,661)	(181,616)	1,335,519
Վերականգնումներ	-	-	540,848	540,848
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,549,823)	(1,549,823)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,974,823	330,219	782,011	13,087,053

հազ. ՀՀ դրամ	2023թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	2,281,681	116,044	830,609	3,228,334
Սկզբնավորված կամ նոր ձեռք բերված	3,243,897	63,723	33,983	3,341,603
Մարված ակտիվներ	(2,610,211)	(74,843)	(136,497)	(2,821,551)
Տեղափոխում Փուլ 1	2,854	(2,854)	-	-
Տեղափոխում Փուլ 2	(74,438)	77,701	(3,263)	-
Տեղափոխում Փուլ 3	(82,995)	(51,953)	134,948	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների	348,512	3,763	(137,733)	214,542
Վերականգնումներ	-	-	120,858	120,858
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(498,392)	(498,392)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,109,300	131,581	344,513	3,585,394

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

հազ. ՀՀ դրամ	2023թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
<i>Առևտրային վարկեր</i>				
Մնացորդը հոլնվարի 1-ի դրույթամբ	5,880,034	172,694	638,326	6,691,054
Սկզբնավորված կամ նոր ձեռք բերված	3,324,235	85,825	4,735	3,414,795
Մարված ակտիվներ	(4,618,515)	(161,933)	(254,645)	(5,035,093)
Տեղափոխում Փուլ 1	8,045	(8,045)	-	-
Տեղափոխում Փուլ 2	(146,515)	202,730	(56,215)	-
Տեղափոխում Փուլ 3	(87,167)	(54,604)	141,771	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների	858,458	20,694	(144,285)	734,867
Վերականգնումներ	-	-	253,474	253,474
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(346,062)	(346,062)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրույթամբ	5,218,575	257,361	237,099	5,713,035

Գյուղատնտեսական, հիփոթեքային և սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

հազ. ՀՀ դրամ	2024թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
ԱՊԿ պահուստ հոլնվարի 1-ի դրույթամբ	251,826	50,795	448,120	750,741
Տեղափոխում Փուլ 1	12,634	(5,498)	(7,136)	-
Տեղափոխում Փուլ 2	(4,096)	33,009	(28,913)	-
Տեղափոխում Փուլ 3	(891)	(3,137)	4,028	-
Կորուստների պահուստի զուտ վերագնահատում	(158,510)	(46,159)	(430,356)	(635,025)
Սկզբնավորված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստի զուտ վերագնահատում	243,560	19,739	21,935	285,234
Վերականգնումներ	-	-	643,185	643,185
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(284,833)	(284,833)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրույթամբ	344,523	48,749	366,030	759,302

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

հազ. ՀՀ դրամ	2024թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
ԱՊԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	107,119	32,098	226,515	365,732
Տեղափոխում Փուլ 1	7,544	(2,426)	(5,118)	-
Տեղափոխում Փուլ 2	(3,431)	25,091	(21,660)	-
Տեղափոխում Փուլ 3	(74)	(284)	358	-
Կորուստների գծով պահուստի զուտ վերագնահատում	(77,476)	(45,918)	(37,600)	(160,994)
Սկզբնավորված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստի զուտ վերագնահատում	159,859	18,410	27,574	205,843
Վերականգնումներ	-	-	171,181	171,181
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(160,234)	(160,234)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	193,541	26,971	201,016	421,528

հազ. ՀՀ դրամ	2024թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
<i>Առևտրային վարկեր</i>				
ԱՊԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	69,494	21,443	117,642	208,579
Տեղափոխում Փուլ 1	1,508	(1,508)	-	-
Տեղափոխում Փուլ 2	(1,449)	4,808	(3,359)	-
Տեղափոխում Փուլ 3	(704)	(10,472)	11,176	-
Կորուստների գծով պահուստի զուտ վերագնահատում	(20,548)	(2,326)	(260,827)	(283,701)
Սկզբնավորված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստի զուտ վերագնահատում	36,196	6,231	154	42,581
Վերականգնումներ	-	-	317,463	317,463
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(81,448)	(81,448)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	84,497	18,176	100,801	203,474

հազ. ՀՀ դրամ	2023թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
ԱՊԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,171,104	61,348	185,876	1,418,328
Տեղափոխում Փուլ 1	5,446	(5,435)	(11)	-
Տեղափոխում Փուլ 2	(15,248)	17,537	(2,289)	-
Տեղափոխում Փուլ 3	(40,978)	(28,022)	69,000	-
Կորուստների գծով պահուստի զուտ վերագնահատում	(1,039,241)	(13,630)	1,168,159	115,288
Սկզբնավորված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստի զուտ վերագնահատում	170,743	18,997	36,360	226,100
Վերականգնումներ	-	-	540,848	540,848
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,549,823)	(1,549,823)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	251,826	50,795	448,120	750,741

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

հազ. ՀՀ դրամ	2023թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
ԱՊԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	878,154	46,953	218,078	1,143,185
Տեղափոխում Փուլ 1	867	(867)	-	-
Տեղափոխում Փուլ 2	(13,158)	15,966	(2,808)	-
Տեղափոխում Փուլ 3	(26,534)	(20,645)	47,179	-
Կորուստների գծով պահուստի զուտ վերազնահատում	(816,810)	(28,015)	321,845	(522,980)
Սկզբնավորված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստի զուտ վերազնահատում	84,600	18,706	19,755	123,061
Վերականգնումներ	-	-	120,858	120,858
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(498,392)	(498,392)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	107,119	32,098	226,515	365,732

հազ. ՀՀ դրամ	2023թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Առևտրային վարկեր</i>				
ԱՊԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	270,911	13,777	62,516	347,204
Տեղափոխում Փուլ 1	727	(727)	-	-
Տեղափոխում Փուլ 2	(8,815)	10,041	(1,226)	-
Տեղափոխում Փուլ 3	(5,665)	(2,160)	7,825	-
Կորուստների գծով պահուստի զուտ վերազնահատում	(214,041)	(6,111)	140,721	(79,431)
Սկզբնավորված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստի զուտ վերազնահատում	26,377	6,623	394	33,394
Վերականգնումներ	-	-	253,474	253,474
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(346,062)	(346,062)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	69,494	21,443	117,642	208,579

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին: Տե՛ս ծանոթագրություն 30:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է 32 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույթային վերլուծությունը բացահայտված է 33 ծանոթագրությունում: Կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 29 ծանոթագրությունում:

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

17. Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեթղթի չափվող ներդրումային արժեթղթեր

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեթղթի չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	-	124,735
Կորուստների գծով պահուստ	-	(134)
Ընդամենը ամորտիզացված արժեթղթի չափվող ներդրումային արժեթղթեր	-	124,601

Հետզնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեթղթի չափվող ներդրումային արժեթղթեր

ՀՀ պետական պարտատոմսեր	1,619,259	1,540,535
Կորուստների գծով պահուստ	(471)	(1,653)
Հետզնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեթղթի չափվող ներդրումային արժեթղթեր	1,618,788	1,538,882

Ամորտիզացված արժեթղթի չափվող` ներառյալ հետզնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

հազ. ՀՀ դրամ	2024թ.		2023թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
ԱՊԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,787	1,787	223	223
Կորուստների գծով պահուստի զուտ վերաչափում	(1,316)	(1,316)	1,564	1,564
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	471	471	1,787	1,787

Ամորտիզացված արժեթղթի ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	%	Մարման ժամկետ	%	Մարման ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	7.15	2025	7.15	2025

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Ընկերությունը տարվա ընթացքում ամորտիզացված արժեթղթի չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեթղթի չափվող (2023թ.՝ զրո):

18. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

հազ. ՀՀ դրամ	Շենքեր և գրասենյակներ
Հաշվեկշռային արժեք	
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,221,816
Ավելացումներ	9,481
Վերազնահատում	4,784
Վարձակալության դադարեցում	(11,991)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,224,090
Ավելացումներ	187,827
Վերազնահատում	125,733
Վարձակալության դադարեցում	(307,351)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,230,299
<i>Կուտակված մաշվածություն</i>	
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	700,787
Տարվա ծախսեր	192,758
Վարձակալության դադարեցում	(11,991)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	881,554
Տարվա ծախսեր	181,552
Վարձակալության պայմանների ճշգրտում	(181,633)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	881,473
Հաշվեկշռային արժեք	
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	342,536
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	348,826

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի, մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալությունն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Ընկերությունը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Ընկերության արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Ընկերությունը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)

19. Հիմնական միջոցներ

հազ. ՀՀ դրամ	Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	Համակարգ չային և այլ տեխնիկա	Գրասենյակային սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
<i>Հաշվեկշռային արժեք</i>						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	269,453	542,461	332,482	63,074	221,644	1,429,114
Ավելացումներ	1,730	2,643	5,521	-	578	10,472
Օտարումներ	(2,221)	-	20	-	2,201	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	268,962	545,104	338,023	63,074	224,423	1,439,586
Ավելացումներ	11,512	102,339	6,674	496	6,973	127,994
Օտարում	(59,750)	(5,159)	(30,993)	-	(17,179)	(113,081)
Վերադասակարգումներ	(6,276)	-	105	-	6,171	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	214,448	642,284	313,809	63,570	220,388	1,454,499
<i>Կուտակված մաշվածություն</i>						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	249,136	508,941	323,415	63,074	218,012	1,362,578
Տարվա ծախսեր	7,409	23,293	4,310	-	1,278	36,290
Օտարումներ	(2,138)	-	20	-	2,118	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	254,407	532,234	327,745	63,074	221,408	1,398,868
Տարվա ծախսեր	6,349	6,530	2,575	47	976	16,477
Օտարում	(59,735)	(4,868)	(30,916)	-	(16,269)	(111,788)
Վերադասակարգումներ	(6,276)	-	105	-	6,171	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	194,745	533,896	299,509	63,121	212,286	1,303,557
<i>Հաշվեկշռային արժեք</i>						
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,555	12,870	10,278	-	3,015	40,718
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,703	108,388	14,300	449	8,102	150,942

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 1,028,554 հազ. ՀՀ դրամ (2023թ. 1,268,864 հազ. ՀՀ դրամ):

Հիմնական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցներ (2023թ.՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու պայմանագրային պարտավորություններ (2023թ.՝ նույնպես):

20. Ոչ նյութական ակտիվներ

հազ. ՀՀ դրամ	<u>Լիցենզիաներ</u>	<u>Համակարգչային ծրագրեր</u>	<u>Ընդամենը</u>
<i>Ծախս</i>			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	527,641	183,597	711,238
Ավելացումներ	6,327	-	6,327
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	533,968	183,597	717,565
Ավելացումներ	12,056	4,337	16,393
Օտարում	(440,143)	(7,365)	(447,509)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	105,881	180,569	286,450
<i>Կուտակված ամորտիզացիա</i>			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	463,495	65,905	529,400
Ամորտիզացիոն ծախս	31,940	10,230	42,170
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	495,435	76,135	571,570
Ամորտիզացիոն ծախս	10,521	9,287	19,808
Օտարում	(440,147)	(7,372)	(447,519)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	65,809	78,050	143,859
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>38,533</u>	<u>107,462</u>	<u>145,995</u>
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>40,072</u>	<u>102,519</u>	<u>142,591</u>

Պայմանագրային պարտավորություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի ոչ նյութական ակտիվներում ներդրումներ կատարելու պայմանագրային պարտավորություններ (2023թ.՝ նույնպես):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ (2023թ.՝ նույնպես):

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 68,610 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 501,282 հազ. ՀՀ դրամ):

21. Այլ ակտիվներ

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	42,189	1,444
Այլ ֆինանսական ակտիվներ	16,616	30,235
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	58,805	31,679
Կանխավճարային ծախսեր	8,358	7,132
Կանխավճարներ այլ հարկերի գծով	21,033	19,271
Կանխավճարներ	8,078	2,500
Նյութեր	21,632	19,383
Բռնագանձված ակտիվներ	28,073	4,953
Այլ ակտիվներ	728	282
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	87,902	53,521
Ընդամենը այլ ակտիվներ	146,707	85,200

Այլ ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են գրոյական արժեքի, այդ պատճառով չեն բացահայտվում այս աղյուսակում:

Տարվա ընթացքում Ընկերության կողմից տրամադրված վարկերի ապահովվածությունն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները ներկայացված են ստորև.

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Անշարժ գույք	28,073	4,953
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	28,073	4,953

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Ընկերության քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Ընկերությունը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

22. Թողարկված պարտքային արժեթղթեր

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով՝

Թողարկման ամսաթիվը	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը	Քանակը	%	Պարտատոմսի մարման ժամկետը	Ընդամենը անվանական արժեքը
30.05.2023թ.	ՀՀ դրամ	50,000	16,000	13.00	30.05.2025թ.	800,000,000
30.05.2023թ.	ԱՄՆ դոլար	100	9,812	7.50	30.05.2025թ.	981,200
10.02.2022թ.	ՀՀ դրամ	10,000	140,000	12.00	10.02.2025թ.	1,400,000,000
27.11.2024թ.	ՀՀ դրամ	50,000	17,000	11.75	27.11.2027թ.	850,000,000
25.06.2024թ.	ՀՀ դրամ	50,000	22,000	12	25.12.2026թ.	1,100,000,000
02.06.2023թ.	ԱՄՆ դոլար	100	6,410	7.5	30.05.2025թ.	641,000
01.06.2023թ.	ԱՄՆ դոլար	100	20	7.5	30.05.2025թ.	2,000
31.05.2023թ.	ԱՄՆ դոլար	100	1,677	7.5	30.05.2025թ.	167,700

Տարվա ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ (2023թ.՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2023թ.՝ չի ունեցել):

Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

23. Հետգնման պայմանագրեր

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հետգնման պայմանագրեր բանկերի հետ	1,597,984	1,499,262
Ընդամենը հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	1, 597, 984	1,499, 262

Հետգնման պայմանագրերով գրավադրված վարկերը ապահովված են 1,619,260 հազ. ՀՀ դրամ համախառն գումարով ներդրումային արժեթղթերով (2023թ.՝ 1,540,535 հազ. ՀՀ դրամ):

24. Այլ փոխառու միջոցներ

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	6,356,730	2,648,491
Վարկեր ՀՀ կենտրոնական բանկից	2,894,607	3,772,129
Բանկերից ստացված վարկեր	4,193,681	7,473,004
Վարկեր այլ ֆինանսական կազմակերպություններից	321,126	137,685
Ընդամենը այլ փոխառու միջոցներ	13,766,144	14,031,309

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ունի փոխառություններ 7 ֆինանսական հաստատություններից (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6 ֆինանսական հաստատություններից), որոնց մնացորդներից յուրաքանչյուրը գերազանցում է սեփական կապիտալի 10%: Այս մնացորդների համախառն արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 9,513,555 հազ. ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 10,601,261 հազ. ՀՀ դրամ):

2021թ. հունիսի 28-ին Ընկերությունը վարկային պայմանագիր է կնքել ՀՀ կենտրոնական բանկի հետ՝ «ՓՄՁ Աջակցություն» ծրագրի շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի միջև: Վարկի կառավարումն իրականացվում է Գերմանահայկական հիմնադրամի (PMU GAF) ծրագրերի կառավարման բաժնի կողմից: Ծրագրի շրջանակներում վարկավորումը հիմնված է վերաֆինանսավորման սկզբունքների վրա, ինչը նշանակում է, որ Ընկերությունը սկզբում վարկեր է տրամադրում սեփական միջոցներից, իսկ հետո դիմում է PMU GAF-ին վերաֆինանսավորման համար: Եթե տրամադրված վարկերը համապատասխանում են ծրագրի պահանջներին, ապա ՀՀ կենտրոնական բանկը վերաֆինանսավորում է այդ վարկերը: Վարկերը տրամադրվում են միայն տեղական արժույթով և հինգ տարի ժամկետով: ՀՀ-ում գործող մի քանի ֆինանսական հաստատություններ ևս մասնակցել են Ծրագրին նույն պայմաններով: Տոկոսադրույքը սահմանվում է Խորհրդի կողմից տարին երկու անգամ՝ ելնելով Կենտրոնական բանկի սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույքից և 5 տարվա պետական պարտատոմսերի միջին եկամտաբերությունից, ինչպես նաև շուկայում ՓՄՁ վարկերի գնազոյացման ընդհանուր միտումից: Խորհուրդը սահմանում է այն արդյունավետ տոկոսադրույքը, որը GAF Ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի մասով կարող է գանձվել հաճախորդներից: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «ՓՄՁ Աջակցություն» ծրագրով վարկերի չմարված մնացորդը կազմել է 1,129,927 հազար ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,361,872 հազ. ՀՀ դրամ):

2021թ. մայիսի 20-ին Ընկերությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքել են վարկային պայմանագիր «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագրի (երրորդ փուլ) շրջանակներում ՀՀ Կենտրոնական բանկի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Kf բանկի միջև: Վարկի կառավարումն իրականացվում է Գերմանահայկական հիմնադրամի (PMU GAF) ծրագրերի կառավարման բաժնի կողմից: Ծրագրի շրջանակներում վարկավորումը հիմնված է վերաֆինանսավորման սկզբունքների վրա, ինչը նշանակում է, որ Ընկերությունը սկզբում վարկեր է տրամադրում սեփական միջոցներից, իսկ հետո դիմում է PMU GAF-ին վերաֆինանսավորման համար: Եթե տրամադրված վարկերը համապատասխանում են ծրագրի պահանջներին, ապա ՀՀ կենտրոնական բանկը վերաֆինանսավորում է այդ վարկերը: Վարկերը տրամադրվում են միայն տեղական արժույթով և հինգ տարի ժամկետով: ՀՀ-ում գործող մի քանի ֆինանսական հաստատություններ ևս մասնակցել են Ծրագրին նույն պայմաններով: Տոկոսադրույքը սահմանվում է Խորհրդի կողմից տարին երկու անգամ՝ ելնելով Կենտրոնական բանկի սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույքից, ինչպես նաև շուկայում գյուղատնտեսական վարկերի գնազոյացման ընդհանուր միտումից: Խորհուրդը սահմանում է այն արդյունավետ տոկոսադրույքը, որը GAF Ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի մասով կարող է գանձվել հաճախորդներից: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագրով տրամադրված վարկերի չմարված մնացորդը կազմել է 1,730,496 հազ. ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,364,597 հազար ՀՀ դրամ):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 317,481 հազ. ՀՀ դրամ համախառն գումարով (2023թ.՝ 136,823 հազ. ՀՀ դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի զիջման հնարավորությամբ (տես ծանոթագրություն 16):

2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ Կենտրոնական Բանկից ներգրավված վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 2,860,424 հազ. ՀՀ դրամ համախառն գումարով (2023թ.՝ 3,421,540 հազ. ՀՀ դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի զիջման հնարավորությամբ (տես ծանոթագրություն 16):

Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ գոյություն չունեն այլ ֆինանսական գործիքներ, որոնք նման են ՀՀ ԿԲ-ից ստացված այլ փոխառու միջոցներին և վարկավորման պայմանների և հաճախորդների յուրահատուկ բնույթի, ինչպես նաև այլ մասնակիցներին, ինչպիսիք են այլ կոմերցիոն բանկերը, միջոցների հասանելիության արդյունքում այս պրոդուկտները ներկայացնում են առանձին շուկա: Արդյունքում, ՀՀ ԿԲ-ից այլ փոխառու միջոցները ստացվել են սովորական գործարքի միջոցով և հաշվեգրվել են իրական արժեքով սկզբնական ճանաչման ամսաթվին:

Ընկերությունը պարտավոր է համապատասխանել փոխառու միջոցներին առնչվող ֆինանսական սահմանափակումներին: Այս սահմանափակումները ներառում են սահմանված գործակիցներ՝ պարտավորությունն սեփական կապիտալ հարաբերակցությունը և մի շարք այլ ֆինանսական գործակիցներ:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը որևէ խախտում չի ունեցել (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը խախտել է որոշակի ֆինանսական սահմանափակումներ, որոնք

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

վերաբերում են իրացվելիության կարճաժամկետ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերակցությանը): Փոխատու ազատում է Ընկերությանը պայմանագրի խախտումներից 2023թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Խախտումներից ազատումը ճշգրտվել է 2024թ. ընթացքում:

Հաշվետու ժամանակահատվածում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերից ստացված վարկերը ապահովված են ավանդի գրավադրմամբ՝ համապատասխանաբար 2,181,080 հազ. ՀՀ դրամ համախառն գումարի չափով (2023թ.՝ 3,521,673 ՀՀ դրամ) (տե՛ս ծանոթագրություն 16):

25. Վարձակալության գծով պարտավորություններ

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վարձակալության գծով պարտավորություններ	380,302	399,573
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	380,302	399,573

Ընկերությունը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրածեք ակտիվների վարձակալությունների (տե՛ս ծանոթագրություն 12)՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Հունվարի 1-ի դրությամբ	399,573	578,768
Վերագնահատում	125,733	4,784
Ավելացումներ	187,827	9,481
Աշխատանքից ազատում	(140,455)	-
Տոկոսների հավելում	51,111	62,381
Վճարումներ	(243,487)	(255,841)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	380,302	399,573

2024թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 13.2 % (2023թ.՝ 13.2%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով չգեղջված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 33.3-ում:

26. Այլ պարտավորություններ

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի	31 դեկտեմբերի
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	277,750	156,647
Վճարվելիք գումարներ	114,987	52,236
Սպառողական վարկերի գծով վճարվելիք գումարներ	16,887	21,311
Ստացված կանխավճարներ	16,444	39,564
Այլ ֆինանսական պարտավորություններ	27,792	48,640
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	<u>453,860</u>	<u>318,398</u>
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ	78,859	74,146
Ընդամենը այլ պարտավորություններ	<u>532,719</u>	<u>392,544</u>

27. Կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հայտարարված, թողարկված և շրջանառվող և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 4,905,960 հազ. դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 490,596 բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ անվանական արժեքով:

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA Microfinance Coöperatief UA-ն տիրապետում է ընկերության բաժնետոմսերի 100%-ին:

Ընկերության հիմնադիրը FINCA International, Inc.-ն է՝ շահույթ չիտասանող կազմակերպություն, որը հիմնադրվել և գործում է Նյու Յորքի նահանգային օրենքների համաձայն FINCA International Inc.-ը 2011թ.-ին ՖԻԼՔԱ Սայբրոֆայնենս Կոոպերատիվ Յու Էյ-ին (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցություն (կոոպերատիվ), որի պաշտոնական գրասենյակը գտնվում է Նիդեռլանդների Ամստերդամ քաղաքում), փոխանցել է Ընկերության 100% բաժնետոմսերը (թվով 136,472 բաժնետոմս)՝ որպես Ընկերակցության անդամակցության վճար:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերակցության անդամներն են

1. FINCA Microfinance Holding Company LLC սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ գրանցված ԱՄՆ-ի Դելավեր նահանգում, գրանցման հասցեն՝ ԱՄՆ, Դելավեր 19808, Վիլմինգտոն, բն, 400, Սենթրլիլ խճուղի 2711: FINCA Microfinance Holding Company LLC-ն ունի 99% բաժնե՝ որպես Ընկերակցության A դասի անդամ և 1 բաժնե որպես Ընկերակցության F դասի անդամ
2. FINCA International LLC՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ գրանցված ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգում, գրանցման հասցեն՝ ԱՄՆ, Մերիլենդ 21202, Բալթիմոր, 11 Իսթ Չեյս փողոց: FINCA International LLC-ն ունի 1% բաժնե Ընկերակցությունում:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA Microfinance Holding Company LLC-ի բաժնետերերն են հանդիսացել՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)

Առաջին մակարդակի բաժնետերեր/թողարկված բաժնետիրական կապիտալի սեփականատերեր`	%	
	2024թ.	2023թ.
FINCA International LLC	88.1	65.89
Միջազգային ֆինանսական կորպորացիա	0.00	14.27
KfW	11.9	8.87
Nederlandse Financierings Maatschappij voor Ontwikkelingslanden N.V.	0.00	7.25
ASN-NOVIB FOND	0.00	1.66
Triodos Custody B.V.	0.00	1.03
Triodos SICAVI	0.00	1.03
Ընդամենը	100.0	100.0

FINCA International Inc. շահույթ չհետապնդող կորպորատիվ ընկերություն է, որը գործում է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենքների համաձայն, և որպես այդպիսին, դրա անդամները Ընկերությունում սեփականության իրավունք չունեն և չունեն տնտեսական իրավունքներ: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA International, Inc.-ի անդամները հետևյալն են. Ջուլի Հաուզերը, Ջոն Հեթչը, Ռոբերտ Հեթչը և Ռիչարդ Ուիլյամսոնը: FINCA International Inc.-ի Ֆինանսական հաշվետվությունները հասանելի են հանրության համար: FINCA International Inc.-ը հրապարակայնորեն մատչելի ֆինանսական հաշվետվություններ է կազմում:

FINCA International Inc.-ն ցածր եկամուտներ ունեցող անձանց տրամադրում է հաջողության հասնելու գործիքներ` նրանց առաջարկելով պատասխանատու ֆինանսական ծառայություններ, ինչպիսիք են փոքր վարկերը կամ խնայողական հաշիվները, հեռավոր համայնքների բնակիչների հետ տեխնոլոգիաների` բջջային հեռախոսների և պլանշետների միջոցով կապի հաստատում, ինչպես նաև մատչելի դարձնելով կյանքի որակը բարելավող ապրանքները: INCA International Inc. -ը իր գործունեությունը համայնքներում ծավալում է դուստր ընկերությունների միջոցով:

Դուստր ընկերությունները, սովորաբար, առանձին իրավաբանական անձինք են, որոնք մայր կազմակերպության հետ կնքել են համապատասխան համաձայնագրեր: Փոքր վարկերը հնարավորություն են տալիս ներդրումներ կատարել անհատական կամ համայնքային շահութաբեր միկրո ձեռնարկություններում: Մասնակիցները բարելավում են իրենց վստահությունը սեփական հնարավորությունների նկատմամբ, արժանապատվության զգացումը և ստեղծում խնայողությունների ֆոնդ, որը պատկանում է համայնքին` որպես շարունակական ներդրումների մշտական աղբյուր:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ հայտարարված շահաբաժիններ և քվեարկել Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում` մեկ բաժնետոմս` մեկ ձայն սկզբունքով:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով` հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Չբաշխվող պահուստը ներկայացված է գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների` ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

28. Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Հարկային և իրավական պարտավորություններ

ՀՀ-ում հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնութագրվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն անորոշ են, հակասական և ենթակա են տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են վերանայման և հետաքննության հարկային մարմինների կողմից, որոնք տուգանքներ և տույժեր կիրառելու իրավասություն ունեն: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմինների կողմից լրացուցիչ հարկերի, տուգանքների կամ տուգանքների գծով պարտավորություններ չեն կարող առաջադրվել, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները կարող են ՀՀ-ում ստեղծել ավելի էական հարկային ռիսկեր, քան մի շարք այլ երկրներում: Դեկավարությունը կարծում է, որ հարկային պարտավորությունները կատարվել են պատշաճ կերպով՝ հիմնվելով Հայաստանի գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել, և ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը, եթե իշխանությունները հաջողությամբ իրականացնեին իրենց մեկնաբանությունները, կարող էր զգալի լինել:

Դեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ընկերության ներկայացվող դատական հայցերի առումով Ընկերության դեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

29. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն «Կապակցված կողմերի բացահայտումներ» ՀՀՍՍ 24-ի, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու կամ ֆինանսական կամ գործառնական որոշումներ կայացնելիս զգալի ազդեցություն գործադրելու կարողություն: Սույն ֆինանսական հաշվետվությունների նպատակով, Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, դեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում FINCA International LLC-ն:

Գործունեության բնականոն ընթացքում կապակցված կողմերի հետ կնքվում են մի շարք գործարքներ: Դրանք ներառում են վարկեր և այլ գործարքներ: Նշված գործարքները իրականացվել են շուկայում գործող պայմաններով և տոկոսադրույքներով:

Կապակցված կողմերի հետ գործարքների ծավալները, տարեվերջի դրությամբ չմարված մնացորդները և տարվա համար ծախսերը և եկամուտները հետևյալն են՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)

հազ. ՀՀ դրամ	2024թ.		2023թ.	
	Բաժնետերեր և կապակ- ցված կողմեր	Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակ- ցված կողմեր	Ղեկավար անձնակազմ և կապակցված կողմեր
<i>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</i>				
<i>Այլ փոխառու միջոցներ</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ՝ համախառն	-	-	401,906	-
Տարվա ընթացքում տրամադրված	592,860	-	19,972	-
Տարվա ընթացքում մարումներ	(582,090)	-	(421,878)	-
Արտարժույթի փոխարկում	(10,770)	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-
<i>Այլ պարտավորություններ</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ՝ համախառն	5,563	-	-	-
Տարվա ընթացքում տրամադրված	46,513	-	42,356	-
Տարվա ընթացքում մարումներ	(45,686)	-	(36,793)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,390	-	5,563	-
<i>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն</i>				
Փոխհատուցման ենթակա այլ ծախսեր	15,402	-	-	-
Տոկոսային ծախս փոխառությունների գծով	9,982	-	6,890	-
Այլ գործառնական ծախսեր (ռոյալթի և կառավարման վճարներ)	135,611	-	116,079	-
Կառավարման ծառայության վճարի գծով ծախս	16,523	-	14,744	-
Այլ գործառնական ծախսեր (SS և այլ ծառայություններ)	281,326	-	228,015	-

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՍԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրության կառուցվածքը. հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Աշխատավարձեր և պարգևատրումներ	328,290	210,759
Ընդամենը հատուցում առանցքային ղեկավար անձնակազմին	328,290	210,759

30. Իրական արժեքի չափում

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).
- Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

30.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	1,301,500	-	1,301,500	1,301,500
Պահանջներ ֆինանսական կազմ. նկատմամբ	-	2,145,433	-	2,145,433	2,198,197
Հաճախորդներին տրված վարկեր	-	25,296,500	-	25,296,500	22,280,438
Ներդրումային արժեթղթեր (ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված)	-	1,601,954	-	1,601,954	1,618,788
Այլ ֆինանսական ակտիվներ	-	58,805	-	58,805	58,805
Ֆինանսական պարտավորություններ					
Թողարկ. պարտքային արժեթղթեր	-	4,985,563	-	4,985,563	4,951,119
Հետգնման պայմանագրեր	-	1,595,220	-	1,595,220	1,597,984
Այլ փոխառու միջոցներ	-	13,738,340	-	13,738,340	13,766,144
Վարձակ. գծով պարտավոր.	-	380,302	-	380,302	380,302
Այլ ֆինանսական պարտավոր.	-	453,808	-	453,808	453,808

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՍԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

հազ. ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	881,703	-	881,703	881,703
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	3,560,735	-	3,560,735	3,560,735
Հաճախորդներին տրված վարկեր	-	23,487,823	-	23,487,823	21,060,430
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	-	1,673,058	-	1,673,058	1,663,483
Այլ ֆինանսական ակտիվներ	-	31,679	-	31,679	31,679
Ֆինանսական պարտավորություններ					
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,280,828	-	5,280,828	4,882,551
Հետգնման պայմանագրեր	-	1,499,262	-	1,499,262	1,499,262
Այլ փոխառու միջոցներ	-	14,031,309	-	14,031,309	14,031,309
Վարձակալության գծով պարտավորություններ	-	399,573	-	399,573	399,573
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	318,398	-	318,398	318,398

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը սովորաբար դրանց հաշվեկշռային արժեքն է: Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն ընթացիկ տոկոսադրույքներով համանման վարկային ռիսկեր ունեցող և մնացորդային մարման ժամկետներով նոր գործիքների դեպքում: Կիրառվող զեղչի տոկոսադրույքները կախված են գործընկերոջ վարկային ռիսկից և տատանվում են տարեկան 11.2%-ից մինչև 24% (2023թ.՝ տարեկան 11.2%-ից մինչև 24%):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են

գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք զեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրույթամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Այլ փոխառու միջոցներ

Այլ փոխառու միջոցների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող փոխառու միջոցների համար առաջարկվող դրույթաչափերը:

31. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ թե ոչ:

հազ. ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2024թ.

	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումարը	Ճանաչված ֆինանսական ակտիվների/պարտավորությունների համախառն գումար՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն-նում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Հարակից գումարներ, որոնք չեն հաշվանցվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում		Չուտ
				Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական միջոցների գրավ	
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>						
Հետզնման պայմանագրեր (Ծան. 17, 23)	1,597,984	-	1,597,984	1,619,260	-	(21,276)
Ընդամենը	1,597,984	-	1,597,984	1,619,260	-	(21,276)

ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)

հազ. ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

	Ճանաչված ֆինանսական ակտիվների/պարտավորությունների համախառն գումար՝ հաշվետվությունում		Ֆինանսական ակտիվների/պարտավորությունների գումար՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում		Հարակից գումարներ, որոնք չեն հաշվանցվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում		Չուտ
	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումարը	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գումար՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գումար՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական միջոցների գրավ	
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>							
Հետգնման համաձայնագրեր (Ծան. 17, 23)	1,499,262	-	1,499,262	1,540,535	-	(41,273)	
Ընդամենը	1,499,262	-	1,499,262	1,540,535	-	(41,273)	

ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)

32. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 33.3-ում:

հազ. ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2024թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրա- գումար	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	12 ամսից ավելի, ենթահանրա- գումար	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,301,500	-	1,301,500	-	-	-	1,301,500
Պահանջներ ֆինանսական կազմակ. նկատմամբ	-	2,198,197	2,198,197	-	-	-	2,198,197
Հաճախորդներին տրված վարկեր	773,767	9,151,002	9,924,769	12,039,621	316,048	12,355,669	22,280,438
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,618,788	-	1,618,788	-	-	-	1,618,788
Այլ ֆինանսական ակտիվներ	58,805	-	58,805	-	-	-	58,805
	3,752,860	11,349,199	15,102,059	12,039,621	316,048	12,355,669	27,457,728
<i>Պարտավորություններ</i>							
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	2,990,650	2,990,650	1,960,469	-	1,960,469	4,951,119
Հետգնման պայմանագրեր	1,597,984	-	1,597,984	-	-	-	1,597,984
Այլ փոխառու միջոցներ	578,919	4,904,547	5,483,466	8,060,530	222,148	8,282,678	13,766,144
Վարձակալության գծով պարտավորություններ	15,430	133,508	148,938	207,812	23,552	231,364	380,302
Այլ ֆինանսական պարտավորություններ	114,986	338,822	453,808	-	-	-	453,808
	2,307,319	8,367,527	10,674,846	10,228,811	245,700	10,474,511	21,149,357
Չուտ դիրք	1,445,541	2,981,672	4,427,213	1,810,810	70,348	1,881,158	6,308,371
Կուտակված ճեղքվածք	1,445,541	4,427,212		6,238,023	6,308,370		

ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)

հազ. ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրա- գումար	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	12 ամսից ավելի, ենթահանրա- գումար	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	881,703	-	881,703	-	-	-	881,703
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	3,560,735	3,560,735	-	-	-	3,560,735
Հաճախորդներին տրված վարկեր	1,462,525	8,429,872	9,892,397	11,079,972	88,061	11,168,033	21,060,430
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,538,882	-	1,538,882	-	-	-	1,538,882
Այլ ֆինանսական ակտիվներ	31,679	-	31,679	-	-	-	31,679
	3,914,789	11,992,921	15,907,710	11,202,259	88,061	11,290,320	27,198,030
<i>Պարտավորություններ</i>							
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,877,610	1,877,610	3,004,941	-	3,004,941	4,882,551
Հետգնման պայմանագրեր	1,499,262	-	1,499,262	-	-	-	1,499,262
Այլ փոխառու միջոցներ	905,405	7,355,256	8,260,661	5,632,951	137,697	5,770,648	14,031,309
Վարձակալության գծով պարտավորություններ	17,179	172,652	189,831	209,742	-	209,742	399,573
Այլ ֆինանսական պարտավորություններ	52,236	266,162	318,398	-	-	-	318,398
	2,474,082	9,671,680	12,145,762	8,847,634	137,697	8,985,331	21,131,093
Չուտ դիրք	1,440,707	2,321,241	3,761,948	2,354,625	(49,636)	2,304,989	6,066,937
Կուտակված ճեղքվածք	1,440,707	3,761,948		6,116,573	6,066,937		

33. Ռիսկերի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանությունը և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը ընկերությունն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի ընկերության շահութաբերության կայունության ապահովման գործում, և ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Ընկերությունը ենթակա է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են ընկերության կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածքը

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Տնօրենների խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Տնօրենների խորհուրդ

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է գործընթացների ներդրման և իրականացման համար, որոնք կապված են ռիսկերի կառավարման հետ, որպեսզի ապահովեն կառավարման անկախ գործընթացը: Իրականացնում է ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման աշխատանքները:

Ռիսկերի կառավարման հանձնաժողով

Ռիսկերի կառավարման հանձնաժողովն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի ռազմավարության մշակման և իրականացման սկզբունքների, շրջանակների, քաղաքականության և սահմանաչափերի մշակման համար:

Այն պատասխանատու է ռիսկերի հիմնարար խնդիրների համար և կառավարում ու վերահսկում է ռիսկերի հետ կապված համապատասխան որոշումները:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և ընկերության ռիսկի սահմանաչափերի համար: Յուրաքանչյուր բիզնես ստորաբաժանման կազմի մեջ մտնում է ապակենտրոնացված բաժին, որը պատասխանատու է ռիսկերի անկախ վերահսկման համար, այդ թվում սահմանված սահմանաչափերի համեմատ ռիսկի ենթարկվածության չափերի վերահսկումը, ինչպես նաև նոր արտադրանքների և համակարգված գործընթացների ռիսկի գնահատումը: Այս ստորաբաժանումը նաև ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքը:

Հաշվապահական հաշվառում

Հաշվապահությունը պատասխանատու է Ընկերության ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ողջ ֆինանսական համակարգի համար: Այն նաև պատասխանատվություն է կրում նաև Ընկերության իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

Վերստուգող

Ընկերության կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի առևտրի է ենթարկվում վերստուգողի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Ընկերության գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Վերստուգողի անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ընդհանուր ժողովին:

Ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգեր

Ընկերության ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Ընկերությունն նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը, որոնք տեղի կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Ընկերության կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Ընկերության գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Ընկերությունը, ինչպես նաև Ընկերության համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Ընկերությունը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Ընկերությունը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Խորհրդին: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ կրեդիտային ռիսկի համապարփակ չափի, կանխատեսումային կրեդիտային ցուցանիշների, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, իրացվելիության ցուցանիշների և ռիսկի աստիճանի փոփոխության վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ բնագավառների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների: Եռամսյակային կտրվածքով ավագ ղեկավարող անձնակազմը որոշում է պահուստի ստեղծման անհրաժեշտությունը վարկային կորուստների համար: Տնօրենների խորհուրդը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Ընկերության ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Ընկերության բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Ընկերության բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Ընկերության ղեկավարության և բոլոր մյուս համապատասխան աշխատակիցների համար անցկացվում է ամենօրյա կարճատև խորհրդակցություն շուկայական սահմանաչափերի օգտագործման, VaR-ի վերլուծության, ներդրումների և իրացվելիության, ինչպես նաև ցանկացած այլ ռիսկերի մակարդակում փոփոխությունների վերաբերյալ:

Ռիսկերի գերկենտրոնացում

Ռիսկի կենտրոնացումը ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են համանման գործունեություն, կամ երբ գործունեությունը վարում են մեկ աշխարհագրական տարածաշրջանում, կամ երբ գտնվում են համանման տնտեսական գործոնների ազդեցության ներքո, որոնց հետևանքով իրենց պարտավորությունների կատարումը նմանապես է արձագանքում

տնտեսական, քաղաքական և այլ պայմանների փոփոխությանը: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Ընկերության գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի գերկենտրոնացումից խուսափելու նպատակով Ընկերության քաղաքականությունը և ընթացակարգերը ներառում են յուրահատուկ սկզբունքներ, որոնք ուղղված են առավելագույն կերպով դիվերսիֆիկացված պորտֆելի ապահովմանը: Վարկային ռիսկերի հայտնաբերված կենտրոնացումները համապատասխանաբար վերահսկվում և կառավարվում են :

33.1 Պարտքային ռիսկ.

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Ընկերության գործունեության համար հանդիսանում է ամենամեծ ռիսկը, ուստի ղեկավարությունն ուշադիր վերահսկում է իր պարտքային ռիսկի ենթարկվածությունը: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Ընկերության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Պարտքային ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ընկերության Վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Ընկերության Խորհրդին:

Ընկերության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Ընկերության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, պարտքային ռիսկը առանցքային կարևորություն ունի միկրոֆինանսավորման կազմակերպությունների ռիսկերի կառավարման մեջ: Չզալի Ֆինանսական վնասներից խուսափելու համար Ընկերությունը կիրառում է տարբեր մեթոդներ պարտքային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Միկրոֆինանսավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է պարտքային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի և բանկային ավանդների միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում: Այն մոնիտորինգի է ենթարկվում կանոնավորապես՝ պարտքային սահմանաչափերի և վարկունակության վերաբերյալ Ընկերության ռիսկի կառավարման քաղաքականությամբ սահմանված ուղենիշերի պահպանումն ապահովելու համար:

Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային Ռիսկերի բաժնի, Վարկային կոմիտեների և Ընկերության Վարչության կողմից: Նախքան որևէ հայտի կազմումը Վարկային կոմիտեի կողմից, վարկային գործընթացի վերաբերյալ բոլոր առաջարկությունները (վարկառուի սահմանաչափի հաստատում կամ վարկային պայմանագրերի մեջ փոփոխությունների կատարում և այլն) վերանայվում և հաստատվում են Վարկային ռիսկերի բաժնի կողմից: Ամենօրյա ռիսկերի կառավարումն իրականացվում է Վարկային Ռիսկերի բաժնի ղեկավարի կողմից:

Ընկերության պարտքային քաղաքականությունը սահմանված է մի շարք ներքին կանոնակարգերով, որտեղ հստակ սահմանված են բոլոր առնչվող պահանջները համապատասխան վերահսկողական մեխանիզմների հետ մեկտեղ, ներառյալ վարկի տրամադրումը, չվճարված վարկերի մոնիտորինգը և այլն:

Ընկերությունը շարունակաբար մոնիտորինգ է իրականացնում առանձին պարտքային ռիսկերի գծով և պարբերաբար վերանայում է իր հաճախորդների վարկունակությունը: Վերանայումը հիմնված է իրականացված ամենավերջին մոնիտորինգի և ֆինանսական վերլուծությունների վրա, ինչպես նաև փոխառուից, կամ որևէ այլ կերպ ստացված տեղեկությունների վրա:

Առանձին հաճախորդների վերլուծությունից բացի, վարկային պորտֆելը պարբերաբար վերլուծվում է Ներքին վերահսկողության բաժնի կողմից՝ կապված կենտրոնացման և շուկայական ռիսկերի հետ:

Վարկային կոմիտեն վերլուծական կառույց է, որը պատասխանատու է վարկային հայտերում ամփոփված տեղեկատվությունը վերլուծելու և պարտքային ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար: Վարկային

կոմիտեն Ընկերության ներսում անկախ մարմին է, որը լիազորված է կայացնելու վերջնական որոշում պարտքային հայտը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ:

Վարկային կոմիտե ներկայացվող տեղեկատվության ճշգրտությունը վարկային մասնագետի պատասխանատվությունն է, ով լրացնում է նախնական հայտը դիմողի բիզնեսի և պարտքային ռիսկերի պատշաճ ուսումնասիրությունից հետո: Ի վերջո Վարկային կոմիտեի անդամները գնահատում են հայտի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (դիմողի վարկային պատմությունը, ֆինանսական վիճակը, մրցակցային ունակությունը և այլն):

Յուրաքանչյուր մասնաճյուղ պարտավոր է կիրառել Ընկերության վարկային քաղաքականությունը և ընթացակարգերը՝ Ընկերության ներքին կարգերում սահմանված վարկավորման լիազորությունների շրջանակներում: Յուրաքանչյուր մասնաճյուղի ղեկավար վարկային բոլոր տեսակի խնդիրների վերաբերյալ զեկուցում է ղեկավարությանը: Յուրաքանչյուր մասնաճյուղ պատասխանատու է իր վարկային պորտֆելի որակի և կատարողականի համար, ինչպես նաև իր պորտֆելի ներսում առկա ռիսկերի վերահսկողության և մոնիտորինգի համար: Ներքին աուդիտի և Ներքին վերահսկողության բաժիններն իրականացնում են մասնաճյուղերի և Ընկերության վարկային գործընթացների կանոնավոր ստուգումներ:

Ընկերության Վարկային ռիսկերի բաժինն ուսումնասիրում է ժամկետանց վարկերի վերլուծությունը և հետամուտ է լինում ժամկետանց մնացորդների հավաքագրմանը: Ղեկավարությունը, հետևաբար, տեղին է համարում ժամկետանց վարկերի և այլ պարտքային ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

Ընկերությունը կանոնավորում է պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանափակելով մեկ վարկառուի կամ վարկառուների խմբի գծով, ինչպես նաև ըստ տնտեսության և աշխարհագրական սեգմենտների ռիսկի ընդունելի մակարդակները:

Պարտքային ռիսկի սահմանաչափերն ըստ վարկառուի և ըստ վարկատեսակի հաստատում է Վարչությունը: Վարկառուի գծով ռիսկը հետագայում սահմանափակվում է ենթասահմանաչափերով, որոնք վերաբերում են հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերին և սահմանվում են վարկային կոմիտեի կողմից: Փաստացի ռիսկերի համապատասխանությունը սահմանաչափերին հսկվում է օրական կտրվածքով՝ ապահովելու համար, որ Ընկերության կողմից սահմանված վարկային սահմանաչափերը և վարկունակության ուղեցույցները չեն խախտվում:

Ըստ նպատակահարմարության, և վարկերի մեծ մասի դեպքերում, Ընկերությունը ընդունում է գրավ կամ անձնական երաշխավորություն: Այնուամենայնիվ, վարկերի զգալի մասը տրված է անհատներին, որոնք այսպիսի ապահովության միջոցներ չեն կարող ձեռք բերվել: Այսպիսի ռիսկերը մոնիտորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

33.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Ընկերության՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն

33.1.2-ում:

ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՍԱՐ
(հազ. ՀՀ դրամ)

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ներքին վարկանիշներ				
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</i>				
Բարձր	639,111	-	-	639,111
Ստանդարտ	662,400	-	-	662,400
Համախառն հաշվեկշռային արժեք	1,301,511	-	-	1,301,511
Կորուստների գծով պահուստ	(11)	-	-	(11)
Չուտ հաշվեկշռային արժեք	1,301,500	-	-	1,301,500
<i>Պահանջներ ֆինանսական կազմ. նկատմամբ</i>				
Ստանդարտ	2,200,661	-	-	2,200,661
Համախառն հաշվեկշռային արժեք	2,200,661	-	-	2,200,661
Կորուստների գծով պահուստ	(2,464)	-	-	(2,464)
Չուտ հաշվեկշռային արժեք	2,198,197	-	-	2,198,197
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
Բարձր կարգ	12,933,870	-	-	12,933,870
Ստանդարտ կարգ	-	269,803	-	269,803
Ցածր	-	100,460	-	100,460
Խնդրահարույց/ժամկետանց	-	-	808,109	808,109
Համախառն հաշվեկշռային արժեք	12,933,870	370,263	808,109	14,112,242
Կորուստների գծով պահուստ	(344,523)	(48,749)	(366,030)	(759,302)
Չուտ հաշվեկշռային արժեք	12,589,347	321,514	442,079	13,352,940
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Բարձր	3,894,523	-	-	3,894,523
Ստանդարտ	-	49,244	-	49,244
Ցածր	-	63,330	-	63,330
Խնդրահարույց/ժամկետանց	-	-	392,336	392,336
Համախառն հաշվեկշռային արժեք	3,894,523	112,574	392,336	4,399,433
Կորուստների գծով պահուստ	(193,541)	(26,971)	(201,016)	(421,528)
Չուտ հաշվեկշռային արժեք	3,700,982	85,603	191,320	3,977,905
<i>Առևտրային վարկեր</i>				
Բարձր կարգ	4,708,370	-	-	4,708,370
Ստանդարտ կարգ	-	125,333	-	125,333
Ստանդարտից ցածր	-	61,823	-	61,823
Խնդրահարույց/ժամկետանց	-	-	257,541	257,541
Համախառն հաշվեկշռային արժեք	4,708,370	187,156	257,541	5,153,067
Կորուստների գծով պահուստ	(84,497)	(18,176)	(100,801)	(203,474)
Չուտ հաշվեկշռային արժեք	4,623,873	168,980	156,740	4,949,593

ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՍԱՐ
(հազ. ՀՀ դրամ)

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ներքին վարկանիշներ				
<i>Հետգնման պայմանագրերով գրավադրված անորոշիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր</i>				
Ստանդարտ	1,619,259	-	-	
Համախառն հաշվեկշռային արժեք	1,619,259	-	-	
Կորուստների գծով պահուստ	(471)	-	-	
Չուստ հաշվեկշռային արժեք	1,618,788	-	-	
<i>Այլ ֆինանսական ակտիվներ</i>				
Ստանդարտ կարգ	58,805	-	-	
Համախառն հաշվեկշռային արժեք	58,805	-	-	
Կորուստների գծով պահուստ	-	-	-	
Չուստ հաշվեկշռային արժեք	58,805	-	-	

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ներքին վարկանիշներ				
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</i>				
Բարձր	556,236	-	-	556,236
Ստանդարտ	325,472	-	-	325,472
Համախառն հաշվեկշռային արժեք	881,708	-	-	881,708
Կորուստների գծով պահուստ	(5)	-	-	(5)
Չուստ հաշվեկշռային արժեք	881,703	-	-	881,703
<i>Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</i>				
Ստանդարտ	3,569,775	-	-	3,569,775
Համախառն հաշվեկշռային արժեք	3,569,775	-	-	3,569,775
Կորուստների գծով պահուստ	(9,040)	-	-	(9,040)
Չուստ հաշվեկշռային արժեք	3,560,735	-	-	3,560,735
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
Բարձր կարգ	11,974,823	-	-	11,974,823
Ստանդարտ կարգ	-	225,331	-	225,331
Ցածր	-	104,888	-	104,888
Խնդրահարույց/ժամկետանց	-	-	782,011	782,011
Համախառն հաշվեկշռային արժեք	11,974,823	330,219	782,011	13,087,053
Կորուստների գծով պահուստ	(251,826)	(50,795)	(448,120)	(750,741)
Չուստ հաշվեկշռային արժեք	11,722,997	279,424	333,891	12,336,312
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				

**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ**
(հազ. ՀՀ դրամ)

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ներքին վարկանիշներ				
Բարձր	3,109,300	-	-	3,109,300
Ստանդարտ	-	75,810	-	75,810
Ցածր	-	55,771	-	55,771
Խնդրահարույց/ ժամկետանց	-	-	344,513	344,513
Համախառն հաշվեկշռային արժեք	3,109,300	131,581	344,513	3,585,394
Կորուստների գծով պահուստ	(107,119)	(32,098)	(226,515)	(365,732)
Չուտ հաշվեկշռային արժեք	3,002,181	99,483	117,998	3,219,662
<i>Առևտրային վարկեր</i>				
Բարձր կարգ	5,218,575	-	-	5,218,575
Ստանդարտ կարգ	-	209,825	-	209,825
Ստանդարտից ցածր	-	47,536	-	47,536
Խնդրահարույց/ ժամկետանց	-	-	237,099	237,099
Համախառն հաշվեկշռային արժեք	5,218,575	257,361	237,099	5,713,035
Կորուստների գծով պահուստ	(69,494)	(21,443)	(117,642)	(208,579)
Չուտ հաշվեկշռային արժեք	5,149,081	235,918	119,457	5,504,456
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր</i>				
Ստանդարտ	124,735	-	-	124,735
Համախառն հաշվեկշռային արժեք	124,735	-	-	124,735
Կորուստների գծով պահուստ	(134)	-	-	(134)
	124,601	-	-	124,601
<i>Հետզնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր</i>				
Ստանդարտ	1,540,535	-	-	1,540,535
Համախառն հաշվեկշռային արժեք	1,540,535	-	-	1,540,535
Կորուստների գծով պահուստ	(1,653)	-	-	(1,653)
Չուտ հաշվեկշռային արժեք	1,538,882	-	-	1,538,882
<i>Այլ ֆինանսական ակտիվներ</i>				
Ստանդարտ կարգ	31,679	-	-	31,679
Համախառն հաշվեկշռային արժեք	31,679	-	-	31,679
Կորուստների գծով պահուստ	-	-	-	-
Չուտ հաշվեկշռային արժեք	31,679	-	-	31,679

33.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Ընկերության՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Ընկերությունը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում պարտազանցում տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի նշանակալի աճը որոշելիս Ընկերությունը օգտագործում է հետևյալ երեք հայտանիշները՝

- Քանակական թեստ՝ հիմնված պարտազանցման հավանականության շարժի վրա
- «Վերանայման» կարգավիճակը,
- 30 օր ժամկետանց լինելու հանգամանքը:

«Վերանայում» առաջանում է վարկային պայմանագրի վերակառուցման ժամանակ, այսինքն՝ տոկոսագումարի և մայր գումարի վճարման ժամկետների երկարաձգում վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում, որը տարբերվում է վարկի տրամադրման ժամանակ եղած վիճակից, և վարկառուն դիմել է Ընկերությանը վարկի վճարման ժամանակացույցի փոփոխման համար: Վարկային պայմանագրի վերանայվում է միայն այն ժամանակ, երբ Ընկերության համապատասխան ստորաբաժանումը համոզված է, որ վարկառուն կկարողանա վճարումները կատարել նոր ժամանակացույցին համապատասխան:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Ընկերությունը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե հեռանկարային տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Ընկերությունը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է
- Ժամկետանց - 30 օրից տարբերվող Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցման տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում: Գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

- Փորձաշրջանում գտվող վարկեր: Գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարբերություններում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է
- Թղթակցային և ընթացիկ հաշիվների համար՝ 7 օր ժամկետանց 7 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց - 30 օրից տարբերվող Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն: Այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's ու Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և Ընկերությունը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցման տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում: Գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցման տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:

- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն: Այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's ու Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած B2 մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ Ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և Ընկերությունը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Ընկերության կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցե մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Ընկերությունը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են պարտազանցում տեղի ունենալու ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված՝ ոչ ժամկետանց ֆինանսական ակտիվները սահմանվում են որպես բարձր վարկանիշ ունեցող, մինչև 30 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ստանդարտ վարկանիշ ունեցող, ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ոչ ստանդարտ կամ ցածր և ավելի քան 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ չաշխատող վարկանիշ ունեցող) գործոններով, որոնք մատնանշում են պատազանցում տեղի ունենալու ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Խմբային կամ անհատական գնահատում

Ընկերությունը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- Փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- Խոշոր և առանձնահատուկ վարկեր
- Գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեթուղ/իրական արժեթուղ՝ այլ համապատասխան ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Վարկեր, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Ընկերությունը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- Վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեքային, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- Հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),

- Գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- Արժույթ
- Այլ բնորոշ հատկանիշներ:

Խմբավորում՝ ըստ համանման պարտքային ռիսկի հատկանիշների

Պարտազանցման հաշվարկի նպատակով ֆինանսական ակտիվները բաժանվում են երկու սեգմենտի՝

- Փոքր վարկեր (մինչև 500,000 ՀՀ դրամ (1,235 ԱՄՆ դոլարին համարժեք))
- Միջին և մեծ վարկեր (500,000 ՀՀ դրամից կամ 1,235 ԱՄՆ դոլարից ավել)

Վերոնշյալ սեգմենտներն արտացոլում են հաճախորդների վարկունակության գնահատման մակարդակը, ընդ որում՝ մեծ վարկեր սեգմենտի համար կիրառվում են համեմատաբար ավելի խիստ գնահատականի չափորոշիչներ: Պատմական պարտազանցման դրույթաչափը օգտագործվում է որպես խստության ցուցանիշ, այնպես որ սեգմենտների միջև պարտազանցման դրույթաչափերի տարբերությունն առավելագույնի է հասցվում:

Վարկանիշային մոդել

Ողջ հասանելի տեղեկատվությունը (ծառայությունների խմբեր, արտադրության որոշումներ և այլն) օգտագործվում են յուրաքանչյուր սեգմենտի համար ներքին վարկանիշային ցուցանիշ ստանալու համար: Այսպիսով, ստեղծվում են համանման ռիսկի հատկանիշներով խմբեր, որոնք այնուհետև օգտագործվում են սեգմենտի պարտազանցման հավանականության կորի ճշգրտման համար:

Պարտազանցման սահմանում

Ընկերությունը համարում է ֆինանսական գործիքը պարտազանցման ենթարկված, և, հետևաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Ընկերությունը միջբանկային հաշիվները համարում է պարտազանցման ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Ընկերությունը նաև դիտարկում է մի շարք դեպքեր, որոնք կարող են վկայել վճարելու անհավանականության մասին: Նման դեպքերում Ընկերությունը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտազանցման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում
- վարկառուին համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառու պարտազանցման ենթարկված է,
- նույն վարկի բազմակի վերածնակերպում,
- հիմնավոր մտավախություններ առաջիկայում կայուն և բավարար դրամական հոսքերի ապահովման առումով վարկառուի կարողության վերաբերյալ,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ

- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում վարկի զգալի մասի զիջմամբ (զուտ ներկա արժեքի (NPV) կորուստ),
- վարկային կազմակերպությունը կամ կոնսորցիումի ղեկավարը փոխառուի նկատմամբ սկսում է սնանկության/անվճարունակության վարույթ

Վերանայված և փոփոխված վարկեր

Ընկերությունը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Ընկերությունը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեգրվում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Ընկերության վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է յուրաքանչյուր դեպքի համար առանձին:

Ընկերությունը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»:
Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Ընկերությունը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.4 ծանոթագրությունում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Փուլ 2-ում և Փուլ 3-ում ներառված ակտիվները, որոնք փոփոխվել են, և, հետևաբար, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համարվում են վերանայված՝ Ընկերության կողմից փոփոխությունների գծով կրած կորուստների հետ միասին:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՍԱՐ**
(հազ. ՀՀ դրամ)

հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեք	72,585	47,405
Փոփոխությունից զուտ օգուտ	(4,213)	2,701

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում Ընկերությունը փոփոխել է հաճախորդների որոշ վարկերի գծով դրամական միջոցների պայմանագրային հոսքերը: Բոլոր այդպիսի վարկերը փոխանցվել են առնվազն 2-րդ փուլ՝ հնարավոր կորուստների պահուստով, որը գնահատվում է ակնկալվող պարտքային վնասներին հավասար չափով:

Տարվա ընթացքում փոփոխված վարկերի դեպքում ամորտիզացված արժեքը վարկի փոփոխությունից անմիջապես առաջ և փոփոխության արդյունքում առաջացած շահույթում կամ վնասում ներկայացված է ստորև՝

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքը մինչև փոփոխությունը	754,809	617,142
Կորուստների գծով պահուստ	(332,510)	(331,965)
Հաճախորդներին տրտրամադրված զուտ վարկեր	422,299	285,177

Վերանայված վարկեր և կանխավճարներ

Վարկերը և կանխավճարները, ընդհանուր առմամբ, վերանայվում են հաճախորդների հետ շարունակական փոխհարաբերությունների շրջանակներում, կամ վարկառուի դրության անբարենպաստ փոփոխության արդյունքում: Վերջինի դեպքում վերանայումը կարող է հանգեցնել մարման ժամկետի կամ մարման ժամանակացույցի երկարաձգման, համաձայն որի, Ընկերությունը իրապես անբարենպաստ վիճակում գտնվող վարկառուներին առաջարկում է զեղչային տոկոսադրույքներ: Արդյունքում՝ տվյալ ակտիվը շարունակում է մնալ ժամկետանց և անհատապես արժեզրկված, ընդ որում՝ տոկոսի և մայր գումարի վճարումը թույլ չի տալիս վերականգնել ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը: Այլ դեպքերում վերանայումը կհանգեցնի նոր պայմանագրի ստորագրման, որն, ըստ էության, կդիտվի որպես նոր վարկ:

Հաճախորդների տրված վերակայված վարկերի հաշվեկշռային արժեքը 1,169,709 հազ. ՀՀ դրամ է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,541,310 հազ. ՀՀ դրամ):

Միկրոֆինանսավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է պարտքային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի և բանկային ավանդների միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում: Այն մոնիտորինգի է ենթարկվում կանոնավորապես՝ պարտքային սահմանաչափերի և վարկունակության վերաբերյալ Ընկերության ռիսկի կառավարման քաղաքականությամբ սահմանված ուղենիշերի պահպանումն ապահովելու համար:

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կամ առաջիկա 12 ամիսների (12mECL), կամ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Պարտազանցման հավանականությունը մոդելավորելիս օգտագործվել է վիճակագրական «գոյատևման» մեթոդը՝ կիրառելով ձախողման ցուցանիշը:

Ձախողման ցուցանիշը որոշվում է ըստ Կոքսի համամասնական ռիսկերի մոդելի, որը կիսահարաչափական (պարամետրիկ) մոդել է: Այն կովարիացիաների համար օգտագործում է ենթադրյալ պարզ ձևերը, իսկ ազատ ցուցանիշների ճշգրիտ արժեքը որոշվում է մասնակի հավանականությամբ: Ելակետային տվյալները ստացվում են հարաչափական (պարամետրիկ) մեթոդներով: Մակրոտնտեսական համընկնումը կարող է անմիջապես ներառվել վտանգի ֆունկցիայի մեջ ժամանակից կախված փոփոխականի միջոցով: Ձախողման ստացված ցուցանիշների հիման վրա որոշվում է տվյալ պահին ("PIT") պարտազանցման հավանականությունը (PD), այն է՝ սահմանային PD ցուցանիշները տվյալ ժամանակահատվածի համար:

Դիտարկման համար կիրառվել են հինգ տարվա տվյալներ:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

LGD-ն դեֆոլտի ժամանակ հավանական կորստի մեծությունն է:

Ընկերությունը գնահատում է LGD-ի պարամետրերը վճարումները չկատարող կոնտրագենտների նկատմամբ հայցերի վերականգնման դրույթաչափերի պատմության հիման վրա: LGD մոդելը հաշվի է առնում միայն դրամական միջոցների վերադարձը: LGD-ն հաշվարկվում է զեղչված դրամական հոսքերի հիման վրա՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթը որպես զեղչման գործակից:

Գրավով ապահովված վարկերն օգտագործում են գրավի արժեքը, այնինչ գրավով չապահովված և երաշխավորված վարկերն օգտագործում են դեֆոլտից վերականգնման դրույթաչափը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար պարտազանցման տեղի ունենալու ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում պարտազանցման տեղի ունենալու պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Ընկերության պարտազանցումների վերջին տվյալների վերլուծության վրա:

Հեռանկարային տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Ընկերությունը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Ընկերությունը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Ակնկալվող պարտքային կորուստների մակրոտնտեսական ճշգրտումը հաշվարկելու համար Ընկերությունը օգտագործում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակ՝ որպես իր մոդելների տնտեսական ներածություն, ներառյալ.

- ՀՆԱ-ի աճի իրական տեմպը

Ստորև աղյուսակում նկարագրված են տնտեսական սցենարներում ներառված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք օգտագործվել են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2025-2029թթ. համար:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

	2025թ.	2026թ.	2027թ.	2028թ.	2029թ.
ՀՆԱ անվանական աճի Ելակետ ցուցանիշ, %	4.50	4.50	4.50	4.50	4.50

33.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն ամբողջությամբ տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

33.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակներն են՝

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝ դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք և այլ գրավի միջոցներ
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք

Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշտության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում:

Հաճախորդներին տրամադրված վարկերի գծով համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Անշարժ գույք	5,601,800	5,686,789
Ավտոմեքենա	2,122,919	2,362,343
Այլ գրավ	56,177	37,462
Թանկարժեք զարդեր և այլ ոսկյա իրեր	-	2,847
Առանց գրավ	15,883,845	14,296,041
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ (համախառն)	23,664,741	22,385,482

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

2024թ. դեկտեմբերի 31-ին հաճախորդներին տրամադրված վարկային ռիսկ պարունակող վարկեր առկա չեն (2023թ.՝ առկա չեն), որոնց գծով պահուստ չի ձևավորվել, քանի որ գրավի զեղչված արժեքը գերազանցում է վարկի գումարը և այդ վարկերը հիմնականում ապահովված են ավտոմեքենաներով:

33.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների, ներառյալ արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքների և բաժնային գործիքների գների փոփոխության արդյունքում: Ընկերության շուկայական ռիսկերը դասակարգվում են ըստ առևտրային և ոչ առևտրային պորտֆելիների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է «Ռիսկի դիմաց արժեք» («VaR») մեթոդաբանության հիման վրա, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների փոխկախվածությունը: Ոչ առևտրային դիրքերը կառավարվում և վերահսկվում են այլ զգայունության վերլուծությունների միջոցով:

33.2.1 Շուկայական ռիսկ՝ ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Ընկերության Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

2024թ.		2023թ.	
Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար

Տոկոսաբեր ակտիվներ

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	3.65	-	3.7
Հաճախորդներին տրված վարկեր	34.9	20.9	30.9	23.9
Ամրոտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	6.4

Տոկոսաբեր պարտավորություններ

Թողարկված պարտքային արժեթղթեր	12.7	7.9	13.0	7.4
Հետգնման պայմանագրեր	8.1	-	10.5	5.1
Այլ փոխառություններ	9.9	9.4	9.8	8.1

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժույթային

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազամավարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.			31 դեկտեմբերի 2023թ.		
	Արժույթի փոխարժեքի փոփոխություն, %-ով	Ազդեցու-թյունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցու-թյունը կապիտալի վրա	Արժույթի փոխարժեքի փոփոխու-թյուն, %-ով	Ազդեցու-թյունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցու-թյունը կապիտալի վրա
ԱՄՆ դոլար	+10	(149,214)	(149,214)	+10	(8,344)	(8,344)
Եվրո	+10	2,200	2,200	+10	2,308	2,308
ՌԴ ռուբլի	+10	3,854	3,854	+10	1	1

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

հազ. ՀՀ դրամ	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	420,622	800,488	80,390	1,301,500
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	2,198,197	-	2,198,197
Հաճախորդներին տրված վարկեր	20,782,273	1,498,165	-	22,280,438
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	1,618,788	-	1,618,788
Այլ ֆինանսական ակտիվներ	17,349	41,456	-	58,805
	<u>21,220,244</u>	<u>6,157,094</u>	<u>80,390</u>	<u>27,457,728</u>
<i>Պարտավորություններ</i>				
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,236,069	715,050	-	4,951,119
Հետգնման պայմանագրեր	1,597,984	-	-	1,597,984
Այլ փոխառություններ	6,868,246	6,897,897	-	13,766,143
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն	380,302	-	-	380,302
Այլ ֆինանսական պարտավորություններ	399,413	14,286	40,109	453,808
Ընդամենը	<u>13,482,014</u>	<u>7,627,233</u>	<u>40,109</u>	<u>21,149,356</u>
Զուտ դիրքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>7,738,230</u>	<u>(1,470,139)</u>	<u>40,281</u>	<u>6,308,372</u>

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ**
(հազ. ՀՀ դրամ)

հազ. ՀՀ դրամ	Ազատ		Ոչ	
	ՀՀ դրամ	փոխարկելի արժույթ	փոխարկելի արժույթ	Ընդամենը
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	19,700,640	7,485,609	11,781	27,198,030
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	13,585,074	7,545,970	49	21,131,093
Չուտ դիրքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,115,566	(60,361)	11,732	6,066,937

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

33.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը չի կարողանա սահմանված ժամկետներում կատարել իր վճարային պարտավորությունները՝ բնականոն և անկանխատեսելի պայմաններում: Այդ ռիսկի զսպման նպատակով ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի, իրականացնում է ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը ըստ պայմանագրային մարման ժամկետների

Ստորև ներկայացվում է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 32-ը այս պարտավորությունների մարման ակնկալվող ժամկետների համար:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

հազ. ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2024թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
<i>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</i>						
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	3,072,834	2,513,625	-	5,586,459	4,951,119
Հետգնման պայմանագրեր	1,597,984	-	-	-	1,597,984	1,597,984
Այլ փոխառու միջոցներ	400,296	2,945,831	11,731,373	534,169	15,611,669	13,766,144
Վարձակալության գծով պարտավորություններ	19,740	167,343	273,983	11,250	472,316	380,302
Այլ ֆինանսական պարտավորություններ	114,987	338,901	-	-	453,888	453,809
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,133,007	6,524,909	14,518,981	545,419	23,722,316	21,149,358

հազ. ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
<i>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավ.</i>						
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,994,551	3,416,095	-	5,410,646	4,882,551
Հետգնման պայմանագրեր	1,499,965	-	-	-	1,499,965	1,499,262
Այլ փոխառու միջոցներ	986,202	7,718,629	6,270,796	221,857	15,197,484	14,031,309
Վարձակալության գծով պարտավորություններ	22,353	216,289	235,449	-	474,091	399,573
Այլ ֆինանսական պարտավորություններ	52,236	266,162	-	-	318,398	318,398
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,560,756	10,195,631	9,922,340	221,857	22,900,584	21,131,093

33.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Վարչությունը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ.
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում.
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում.
- էթիկական և գործարար չափանիշներ.
- ռիսկի մեղմացում:

Ընկերության համապատասխանությունը ապահովվում է վերստուգողի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Վերստուգողի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Ընկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

33.5 Կլիմայի հետ կապված ռիսկեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայական զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, երաշտը և ծովի մակարդակի բարձրացումը և վտանգները:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

34. Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)**

հազ. ՀՀ դրամ

2024թ.

	Թողարկված պարտքային արժեթղթեր	Հետգն- ման պայմա- նագրեր	Այլ փոխառու միջոցներ	Վարձակա- լության գծով պարտավո- րություններ	Ընդամենը պարտավորու- թյուններ ֆինանսավորման գործունեությունից
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	3,308,513	199,329	12,505,104	578,768	16,591,714
Թողարկումից մուտքեր	1,994,915	5,308,216	13,436,317	14,265	20,753,713
Մարում	(484,365)	(4,010,714)	(12,062,377)	(255,841)	(16,813,297)
Արտարժույթի փոխարկում	63,488	2,431	150,859	-	216,778
Այլ	-	-	1,406	62,381	63,787
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	<u>4,882,551</u>	<u>1,499,262</u>	<u>14,031,309</u>	<u>399,573</u>	<u>20,812,695</u>
Թողարկումից մուտքեր	1,960,469	7,515,063	34,768,486	364,671	44,608,689
Մարում	(1,877,242)	(7,400,629)	(34,962,991)	(140,455)	(44,381,317)
Արտարժույթի փոխարկում	(14,659)	(15,712)	(64,419)	-	(94,790)
Այլ	-	-	(6,241)	(243,487)	(249,728)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2024թ.	<u>4,951,119</u>	<u>1,597,984</u>	<u>13,766,144</u>	<u>380,302</u>	<u>20,695,549</u>

«Այլ» տողում ներառված են նոր ձևավորված վարձակալության գծով պարտավորությունները և անկանխիկ շարժում հանդիսացող վարձակալության վերանայումները: Այն նաև ներառում է թողարկված պարտքային արժեթղթերի, հետգնման պայմանագրերի, այլ փոխառու միջոցների և վարձակալության գծով պարտավորությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսները: Ընկերությունը դասակարգում է վճարված տոկոսները որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

35. Կապիտալի համարժեքություն

Ընկերությունն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով: Ընկերության գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվների միջոցով:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ ապահովել Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և Ընկերության կայուն վարկային վարկանիշի և ուժեղ կապիտալի ցուցանիշների պահպանումը՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումներ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 10%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է այլ պահուստները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազ. ՀՀ դրամ)

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

հազ. ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հիմնական կապիտալ	6,460,509	6,050,695
Ռիսկով կշռված ակտիվներ	21,956,830	21,758,479
Կապիտալի համարժեքության նորմատիվ	29.4%	27.8%


Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,000,000 հազ. դրամ՝ արտարժույթի առթ ու վաճառք իրականացնող վարկային կազմակերպությունների համար

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական
ընկերություն

31 դեկտեմբերի 2023թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	11
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	12
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	14

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9
Հ. + 374 10 500 964

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia

T + 374 10 500 964

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

• *Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4.4-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 34.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Ընկերության՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Ընկերության՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Ընկերության՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:

- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Ընկերության փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Ընկերության կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Ընկերության ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հողվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Ընկերության համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմները:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում՝ անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա

մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Շնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:


Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը՝ Նաիրա Ուլունցն է:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Նաիրա Ուլունց
Առաջադրանքի ղեկավար



19 ապրիլի, 2024թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2023	2022
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	6	4,938,162	4,507,538
Տոկոսային ծախսեր	6	(1,722,143)	(1,229,400)
Զուտ տոկոսային եկամուտներ		3,216,019	3,278,138
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(47,983)	(160,336)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով գուտ ծախսեր		(47,983)	(160,336)
Զուտ օգուտ արտարժույթային գործառնություններից	8	146,542	714,986
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով գուտ վնաս		(81,160)	(417,432)
Այլ եկամուտներ	9	85,311	105,221
Պարտքային կորուստների գծով ծախսի հակադարձում/(պարտքային կորուստների գծով ծախս)	10	110,862	(791,833)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(1,561,267)	(1,454,006)
Մաշվածություն և ամորտիզացիա	19, 20, 21	(271,218)	(332,098)
Այլ ծախսեր	12	(983,121)	(849,605)
Շահույթ մինչև հարկումը		613,985	93,035
Շահութահարկի գծով ծախս	13	(128,986)	(86,056)
Տարվա շահույթ		484,999	6,979
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		484,999	6,979

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 14-ից մինչև 95-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
	Ծանոթ.		
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	881,703	1,520,920
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	3,560,735	1,361,717
Հաճախորդներին տրված վարկեր	17	21,060,430	18,917,944
Ներդրումային արժեթղթեր	18	124,601	-
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	18	1,538,882	202,073
Օգտագործման իրավունքով ակտիվներ	19	342,536	521,029
Հիմնական միջոցներ	20	40,718	66,536
Ոչ նյութական ակտիվներ	21	145,995	181,838
Այլ ակտիվներ	22	85,200	97,134
Ընդամենը՝ ակտիվներ		<u>27,780,800</u>	<u>22,869,191</u>
<i>Պարտավորություններ և սեփական կապիտալ</i>			
<i>Պարտավորություններ</i>			
Թողարկված պարտքային արժեթղթեր	23	4,882,551	3,308,513
Հետգնման պայմանագրեր	24	1,499,262	199,329
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	15	-	10,399
Այլ փոխառու միջոցներ	25	14,031,309	12,505,104
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		117,595	33,318
Հետաձգված հարկային պարտավորություն	13	129,580	146,500
Վարձակալության գծով պարտավորություններ	26	399,573	578,768
Այլ պարտավորություններ	27	392,544	243,873
Ընդամենը՝ պարտավորություններ		<u>21,452,414</u>	<u>17,025,804</u>

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	4,905,960	343,967	593,460	5,843,387
Տարվա շահույթ	-	-	484,999	484,999
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	484,999	484,999
Հաշվեկշիռը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,905,960	343,967	1,078,459	6,328,386
Հաշվեկշիռը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	4,905,960	343,967	586,481	5,836,408
Տարվա շահույթ	-	-	6,979	6,979
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	6,979	6,979
Հաշվեկշիռը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,905,960	343,967	593,460	5,843,387

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 14-ից մինչև 95-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2023	2022
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահույթ մինչև հարկումը	613,985	93,035
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	271,218	332,098
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս	-	269
Պարտքային կորուստների գծով ծախս (հակադարձում)/պարտքային կորուստների գծով ծախս	(110,862)	791,833
Արտաբյուջի փոխարկումից օգուտ	(3,239)	(48,261)
Շահույթում կամ վնասում ճանաչված ֆինանսական ակտիվների իրական արժեքից վնաս	15,674	294,815
Ստացվելիք տոկոսներ	(553,144)	(1,770,490)
Վճարվելիք տոկոսներ	6,648	4,852
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից / (գործունեության համար օգտագործված) նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	240,280	(301,849)
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(2,118,815)	(1,459,213)
Հաճախորդներին տրված վարկեր	(1,385,667)	(481,934)
Այլ փոխառու միջոցների, պարտքային թողարկած արժեթղթերի մասով տոկոսների հաշվեգրման փոփոխություն	(6,648)	(4,852)
Այլ ակտիվներ	11,839	(11,760)
Փոփոխություններ օգտագործման իրավունքով ակտիվներում և վարձակալության գծով պարտավորություններում	62,381	16,923
<i>(Ավելացում)/նվազում գործառնական պարտավորություններում</i>		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	(26,388)	(283,216)
Այլ պարտավորություններ	147,816	7,199
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը	(3,075,202)	(2,518,702)
Վճարված շահութահարկ	(61,629)	-
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(3,136,831)	(2,518,702)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր

Ներդրումային արժեթղթերի առք	(1,418,033)	(205,422)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր	-	3,983
Հիմնական միջոցների ձեռքբերում	(10,472)	(23,192)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(6,327)	(51,976)
Ներդրումային գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ	<u>(1,434,832)</u>	<u>(276,607)</u>

Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր

Պարտքային արժեթղթերի թողարկում	1,994,915	3,399,678
Պարտքային արժեթղթերի մարում	(484,365)	(3,533,297)
Հետգնման պայմանագրեր	1,297,502	199,329
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(255,841)	(209,426)
Փոխառու միջոցներից մուտքեր	13,436,317	13,934,380
Փոխառու միջոցների մարումներ	(12,062,377)	(10,748,620)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված գուտ դրամական միջոցներ	<u>3,926,151</u>	<u>3,042,044</u>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)	<u>(645,512)</u>	<u>246,735</u>

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	1,520,920	1,549,987
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	16	30
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	6,279	(275,832)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 14)	<u>881,703</u>	<u>1,520,920</u>

Լրացուցիչ տեղեկատվություն՝

Ստացված տոկոսներ	4,385,015	2,737,048
Վճարված տոկոսներ	(1,715,495)	(1,224,548)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 14-ից մինչև 95-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետև՝ Ընկերություն) հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն, որի 100% բաժնետոմսերը պատկանում են FINCA Microfinance Coöperatief U.A-ին (Նիդեռլանդներ): Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետև՝ ՀՀ ԿԲ) կողմից և այն գործունեություն է իրականացնում 2006թ. մարտի 28-ին տրված N13 արտոնագրի համաձայն:

Ընկերությունը զբաղվում է միկրոֆինանսավորմամբ և տրամադրում է անհատական բիզնես վարկեր, ինչպես նաև սպառողական և գյուղատնտեսական միկրո վարկեր: Վարկերը տրամադրվում են ինչպես տեղական արժույթով, այնպես էլ արտարժույթով:

Ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ագաթանգեղոսի փող., 2ա:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ՀՀ-ում ունի 30 մասնաճյուղ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 30 մասնաճյուղ):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմում էր 328 (2022թ-ին՝ 356):

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում, և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

2022թ. փետրվարից շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը էական ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա: Շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ հայտարարել են Ռուսաստանի՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ կազմակերպությունների և անհատների դեմ տնտեսական խիստ պատժամիջոցների մասին: Պատերազմը դեռ շարունակվում է, բայց արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Չնայած դժվարին մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսությունը դրսևորել և շարունակում է դրսևորել բավականին բարձր դիմադրողականություն շնորհիվ ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակաբար իրականացվող արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականությունների և համարժեք գործողությունների: Տնտեսական աճի և ակտիվության տեմպերը շարունակում են բարձր մնալ՝ պայմանավորված նաև օտարերկրյա քաղաքացիների մեծ ներհոսքով: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանում բիզնես շահեր ունենալու, հիմնելու կամ տնօրինելու իրավունքի սահմանափակումներ չկան: Բիզնեսի գրանցման ընթացակարգերը հիմնականում պարզ են: Օտարերկրյա քաղաքացիների սպասարկման արդյունքում 2022-2023թթ. Հայաստանի բանկերն արձանագրել են միջնորդական գործունեությունից եկամտի զգալի աճ:

Քանի որ ռազմական գործողությունները դեռ չեն դադարել, անհնար է արժանահավատորեն գնահատել դրա վերջնական ազդեցությունը Հայաստանի գործարար միջավայրի վրա:

2023 թվականի օգոստոսի 25-ին Standard & Poor's-ը բարձրացրել է Հայաստանի վարկային վարկանիշը մինչև «BB-»՝ կայուն կանխատեսմամբ: Moody's-ի Հայաստանի վարկային վարկանիշը վերջին անգամ սահմանվել է «Ba3» մակարդակում՝ կայուն կանխատեսմամբ 2023 թվականի հունիսի 22-ին: Fitch Ratings-ի կողմից Հայաստանի թողարկողի դեֆոլտի վարկանիշը 2023թ-ի հուլիսին «B+»-ից դարձել է «BB-»՝ կայուն կանխատեսմամբ: Միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրված վարկանիշի բարձրացումն արտացոլում է տնտեսական աճի ուժեղ հեռանկարները, պետական պարտքի կայունացումը միջինից ցածր մակարդակներում, կայուն հարկաբյուջետային կատարողականի հեռանկարը և արտաքին հաշվեկշռի բարելավումը:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Մույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, նորմատիվային կապիտալի պահանջները և ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Մույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՄ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է

հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության փոփոխություններ

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Մեկ գործարքի հետ կապված ակտիվների և պարտավորությունների հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*
- *Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ)*
- *Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություններ),*
- *Միջազգային հարկային բարեփոխումների օրինակելի կանոններ – երկրորդ բաղադրիչ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր և ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրերի փոփոխություններ*

3.5 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),*
- *Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),*
- *Մատակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),*
- *Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)*
- *Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ S1 -ընդհանուր պահանջներ կայունության հետ կապված ֆինանսական տեղեկատվության բացահայտման համար և ՖՀՄՍ S2- կլիմայի հետ կապված բացահայտումներ:*

4 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

Ներկայացվող նշանակալի հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի գուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս 4.4.6 ծանոթագրությունում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Ընկերությունը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Զուտ օգուտ արտարժույթային գործառնություններից

Զուտ օգուտը արտարժույթային գործառնություններից ներառում է արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ օգուտը արտարժույթային գործառնություններից ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում էրբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին

հաշվետվության գուտ առևտրային եկամուտ հողվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հողվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընկերության ֆինանսական հաշվետվություններում բոլոր ակտիվները, պարտավորությունները և Ընկերության անդամ կազմակերպությունների ՀՀ դրամից բացի այլ գործառնական արտարժույթով (Ընկերության ներկայացման արտարժույթ) կատարվող գործառնությունները փոխարկվում են ՀՀ դրամի:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	404.79	393.57
ՀՀ դրամ/1 Եվրո	447.90	420.06
ՀՀ դրամ/1 ՌՈՒԲ	4.50	5.59

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուղվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում

չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում Ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Ընկերությունն սկզբնապես ճանաչում է հաճախորդներին տրված վարկերը, ավանդները բանկերում, թողարկված պարտքային արժեթղթերը դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Ընկերության գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և

- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային

ոիսկի և փոխաստվության հետ առնչվող այլ հիմնական ոիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ոիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Ընկերությունը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Ընկերությունը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Ընկերության պահանջը (օրինակ՝ առանց ռեզրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Ընկերությունը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ոիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ոիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական

արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Ընկերության կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տե՛ս 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են գուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն գուման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Ընկերության առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

Ընկերության կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- փոխատվության հանձնառություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Ընկերությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Ընկերությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտագանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտագանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտագանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Ընկերությունը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտագանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 34.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Ընկերությունը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված

վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:

- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի գեղջված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքսի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեզրկված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը պարտազանցման պահին պարտքի գումարը, պարտազանցման դեպքում կորստի գումարը մանրամասն բացահայտվում են 34.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տե՛ս՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,

- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ գեղջվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտագանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունը այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսննկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի

պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,

- փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
 - Փոխատվության հանձնառությունների չօգտագործված մասի գծով ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Ընկերությունը գնահատում է փոխատվության հանձնառության ամբողջ ժամկետի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակտնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները գեղջվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
 - Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Ընկերությունը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին՝ Ընկերությունը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և:
 - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Ընկերության պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները գեղջվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստներում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Ընկերությունը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Ընկերության պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

Ընկերության դուրսգրման քաղաքականությունը որոշվում է վերականգնման կորերի վերլուծության հիման վրա, որն առաջանում է ՖՀՄՍ 9-ի backtesting-ի և մոդելի ստուգման արդյունքում՝ որոշելու համար այն կետը, որի դեպքում ռոջամտորեն կարելի է ակնկալել պորտֆելի 10% (տաս տոկոս)-ից պակաս մնացորդային գումարի հավաքագրում, որը գտնվում է դեֆոլտում առավելագույնը մինչև 24 ամիս Փուլ 3-ի վարկերի համար:

Վերականգնման կորի վերլուծության մեջ անհրաժեշտ է դիտարկել երեք պայման նախքան ստորև նշված քայլերի մեկնաբանության անորոշության արդյունքում մասնագիտական դատողություններին վերադառնալը

- 1) Կորի ձևը - անկախ այն բանից, արդյոք կորի արագացման գործառույթը սահմանվում է որպես ժամանակի ամենաբարձր կամ «վերջնական» վերականգնման դրույքաչափը որպես մոնոտոն («աստճանական») կամ արագ («կտրուկ»);
- 2) Վերականգնման վերջնական դրույքաչափի սադոկը - 0%-ից մինչև 100%, անկախ այն բանից, արդյոք մեծ է, թե փոքր վերականգնման դրույքաչափը, և
- 3) Վերոնշյալ 10%-ի չափանիշի ամբողջական կամ հարաբերական կիրառման ընդունումը – արդյոք վերոնշյալ 1-ին և 2-րդ պայմանների դիտարկումից հետո մոնոտոն և լայնամասշտաբ լինելու վկայությունը պահանջում է 10%-ից պակաս վերականգնման վերջնական դրույքաչափի դուրսգրման չափանիշի կիրառում (ամբողջական կիրառում) կամ արագ և փոքրամասշտաբ լինելու վկայությունը պահանջում է 0.9-ով բազմապատկած վերջնական դրույքաչափի չափանիշի կիրառումը:

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները բաղկացած են կանխիկ դրամից, բանկերում հաշիվներից, դրամական միջոցներից ճանապարհին:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Ֆինանսական կազմակերպություններում ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Ընկերության ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորություններ

Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորությունները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով, կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ: Առևտրային նպատակներով պահվող ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, ապա հետագայում չափվում իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ շահույթում կամ վնասում ճանաչված գործարքային ծախսերով: Իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում են որպես շահույթում կամ վնասում գուտ առևտրային եկամտի մի մաս:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Ընկերությունը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

4.8 Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.9 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.10 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեզրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.11 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի

համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունը իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունը իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունը իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Ընկերությունը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք գեղջելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

4.12 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Կապի միջոցներ և համակարգիչներ	5	20
Գրասենյակային գույք	8	12.5
Փոխադրամիջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.13 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ կնքված պայմանագրի գործողության ժամկետում, իսկ այդ ժամկետի բացակայության կամ դրա որոշման անհնարինության դեպքում 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.14 Բռնագանձված ակտիվներ

Ընկերության քաղաքականությունն է սահմանել՝ արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար օգտագործման ենթակա ակտիվները փոխանցվում են իրենց համապատասխան ակտիվների դաս սկզբնական ապահովված ակտիվի բռնագանձված կամ հաշվեկշռային արժեքի նվազագույնով: Ակտիվները, որոնց համար վաճառքն ավելի լավ տարբերակ է ճանաչվում, ըստ Ընկերության քաղաքականության՝ փոխանցվում են վաճառքի համար մատչելի ակտիվների դաս՝ իրենց իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում), իսկ ոչ ֆինանսական ակտիվների դեպքում՝ իրական արժեքով՝ հանած բռնագանձման ամսաթվի դրությամբ վաճառքից ծախսերը:

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

4.15 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

4.16 Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են թողարկված արժեթղթերը և այլ փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.17 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Մովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի,

վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

4.18 Սեզմենտների ներկայացում

Գործառնական սեզմենտը հանդիսանում է Ընկերության բիզնես գործառնությունների բաղկացուցիչ մասը, որոնցից այն կարող է վաստակել եկամուտ և կատարել ծախսեր, ներառյալ Ընկերության այլ որևէ բաղկացուցիչ մասի հետ կապված գործառնություններից եկամուտներն ու ծախսերը: Գործառնական սեզմենտները որոշելիս Ընկերության ղեկավարությունը տարանջատում է Ընկերության այն կոմպոնենտները, որոնք ներառված են ծառայությունների մատուցման մեջ (բիզնես սեզմենտ) և որի համար առկա է ֆինանսական տեղեկատվություն: Բոլոր գործառնական սեզմենտների գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Ընկերության տնօրինության կողմից՝ սեզմենտին միջոցներ հատկացնելու որոշում կայացնելու համար և գնահատելու դրա կատարումը:

Ընկերության գործառնությունները տարանջատված չեն գործառնական սեզմենտների և հանդիսանում են մեկ ամբողջական բիզնես միավոր: Ընկերությունն իր հիմնական եկամուտը ստանում է ՀՀ-ում գրանցված ֆինանսական հաստատությունների հետ վերաֆինանսավորման գործարքներից:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

5.1 Դատողություններ

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Ընկերությունը գնահատում է այն բիզնես մոդելը, որի շրջանակում ակտիվները պահվում են, ինչպես նաև գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տե՛ս 4.4.2 ծանոթագրությունը):

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբորող չափանիշների սահմանում

Ընկերությունը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

5.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մոդելներ: Սա ներառում է գնահատումների և ենթադրությունների մշակում համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է ձեռք բերվել անհատական գործարքների դեպքում (տե՛ս ծանոթագրություն 31):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների օգտագործման փորձի հիման վրա դատողության արդյունք է: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման օպցիոններ

Երբ Ընկերությունը ունի վարձակալության երկարաձգման օպցիոն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման օպցիոնը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տե՛ս ծանոթագրություն 34.1.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս ծանոթագրություն 4.4.6):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս ծանոթագրություն 29:

6 Զուտ տոկոսային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2023	2022
<i>Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ</i>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	100,923	14,780
Հաճախորդներին տրված վարկեր	4,757,245	4,491,151
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	79,994	1,607
Ընդամենը տոկոսային եկամուտ	4,938,162	4,507,538

Թողարկված պարտքային արժեթղթեր	406,619	348,338
Վարձակալության գծով պարտավորություններ	62,381	74,333
Այլ փոխառու միջոցներ	1,123,855	804,399
Հետգնման պայմանագրեր	129,288	2,330
Ընդամենը տոկոսային ծախս	1,722,143	1,229,400
Ընդամենը զուտ տոկոսային եկամուտ	3,216,019	3,278,138

Տուգանքները հաշվարկվում են հաշվեգրման մեթոդով և ներառվում են վարկի մայր գումարի և ժամկետանց հաշվեգրված տոկոսների գումարներում: 2023թ. այդ գումարը կազմում է 89,175 հազար ՀՀ դրամ (2022թ. 547,949 հազար ՀՀ դրամ):

7 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Դրամարկղային գործառնություններ	44,337	157,363
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	1,753	1,510
Այլ ծախսեր	1,893	1,463
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	47,983	160,336

8 Ձուտ օգուտ արտարժույթային գործառնություններից

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	143,303	666,725
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթային փոխարկումից զուտ օգուտ եկամուտ	3,239	48,261
Ընդամենը զուտ օգուտ արտարժույթային գործառնություններից	146,542	714,986

9 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Հիմնական միջոցների վաճառքից զուտ եկամուտ	3,797	670
Եկամուտներ ապահովագրական ծառայություններից	6,375	4,982
Միջնորդավճարներ	4,730	4,980
Դատական գործերից պետ. տուրքերից եկամուտներ	37,378	46,868
Նախկինում ճանաչված ծախսերի գծով օգուտ Ֆինանսական հաշտարարի մասով	2,318	2,802
Կարգավորման պայմանագրից եկամուտ	9,525	-
Այլ եկամուտներ	21,188	44,919
Ընդամենը այլ եկամուտներ	85,311	105,221

10 Պարտքային կորուստների գծով ծախս/(պարտքային կորուստների գծով ծախսի հակադարձում)

Հազար ՀՀ դրամ	2023				
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	(16)	-	-	(16)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	(7,842)	-	-	(7,842)
Հաճախորդներին տրված վարկեր	17	(1,788,372)	(3,430)	1,687,234	(104,568)
Ներդրումային արժեթղթեր	18	1,564	-	-	1,564
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս/(պարտքային կորուստների գծով ծախսի հակադարձում)		(1,794,666)	(3,430)	1,687,234	(110,862)

Հազար ՀՀ դրամ

2022

	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	(30)	-	-	(30)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	16,882	-	-	16,882
Հաճախորդներին տրված վարկեր	17	2,041,049	(31,772)	(1,234,519)	774,758
Ներդրումային արժեթղթեր	18	223	-	-	223
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս/(պարտքային կորուստների գծով ծախսի հակադարձում)		2,058,124	(31,772)	(1,234,519)	791,833

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ

2023

2022

Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	1,534,971	1,418,918
Անձնակազմի ուսուցման և այլ ծախսեր	26,296	35,088
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	1,561,267	1,454,006

12 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	227,736	231,988
Գովազդի ծախսեր	12,292	844
Գործուղման ծախսեր	15,370	12,091
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	47,391	50,839
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	82,340	87,089
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	69,461	26,457
Անվտանգության գծով ծախսեր	18,640	19,084
Ինկասացիայի ծախսեր	9,112	10,021
Ապահովագրություն	48,797	53,606
Ռոյալթիներ	116,149	78,235
Համակարգչային ծրագրերի սպասարկման ծախսեր	63,289	45,020
Ծրագրերի կառավարման ծախսեր	22,214	23,925
Փոխհատուցվող ծախսեր	42,750	20,487
Ներկայացուցչական ծախսեր	6,952	9,599
Անդամավճարներ	2,150	2,935
Գրասենյակային ծախսեր	46,062	49,346
Վճարված տուգանքներ	290	89
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	57,530	53,197
Պարտատոմսերի թողարկման ծախսեր	22,398	10,100
Ֆինանսական հաշտարար	15,484	12,623
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	2,640	4,903
Այլ ծախսեր	54,074	47,127
Ընդամենը այլ ծախսեր	983,121	849,605

Ռոյալթիներ վճարվում է կիրառելով տոկոս գործառնական եկամտի նկատմամբ և կարող է տատանվել 1.5% -ից մինչև 2% կախված գործառնական եկամտի չափից: Ռոյալթիի նկատմամբ վճարվում է ոչ ռեզիդենտի շահութահարկ:

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Ընթացիկ հարկի գծով ծախս	145,906	42,598
Հետաձգված հարկ	(16,920)	43,458
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	128,986	86,056

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2022թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	Արդյունավետ դրույքաչափ		Արդյունավետ դրույքաչափ	
	2023	(%)	2022	(%)
Շահույթ մինչև հարկումը	613,985		93,035	
Շահութահարկ	110,517	18	16,746	18
Չնվազեցվող ծախսեր	19,052	3	24,930	27
Արտարժույթի դրական փոխարժեքային տարբերություն	(583)	-	(8,687)	(9)
Փոխանցվող հարկային վնաս	-	-	53,067	57
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	128,986	21	86,056	93

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.				
	31 դեկտեմբերի 2022թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(1,771)	1,186	(585)	-	(585)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	511	(5,299)	(4,788)	-	(4,788)
Ներդրումային արժեթղթեր	40	282	322	322	-
Հաճախորդներին տրված վարկեր	(230,495)	18,304	(212,191)	-	(212,191)
Հիմնական միջոցներ	30,748	(1,573)	29,175	29,175	-
Վարձակալություն	10,387	(10,509)	(122)	-	(122)
Ներգրավված միջոցներ	8,176	19,171	27,347	27,347	-
Այլ պարտավորություններ	35,904	(4,642)	31,262	31,262	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(146,500)	16,920	(129,580)	88,106	(217,686)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.				
	31 դեկտեմբերի 2021թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	(1,771)	(1,771)	-	(1,771)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	511	511	511	-
Ներդրումային արժեթղթեր	-	40	40	40	-
Հաճախորդներին տրված վարկեր	(511,595)	281,100	(230,495)	-	(230,495)
Հիմնական միջոցներ	26,685	4,063	30,748	30,748	-
Վարձակալություն	8,249	2,138	10,387	10,387	-
Ներգրավված միջոցներ	-	8,176	8,176	8,176	-
Այլ պարտավորություններ	56,832	(20,928)	35,904	35,904	-
Փոխանցվող հարկային վնաս	316,787	(316,787)	-	-	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(103,042)	(43,458)	(146,500)	85,766	(232,266)

14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Հաշիվներ բանկերում	325,472	981,806
Կանխիկ դրամական միջոցներ	556,236	535,199
Դրամական միջոցներ ճանապարհին	-	3,936
	<u>881,708</u>	<u>1,520,941</u>
Արժեզրկումից պահուստներ	(5)	(21)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	<u>881,703</u>	<u>1,520,920</u>

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 280,088 հազար դրամ գումարով (86.1%) հաշիվները կենտրոնացված են 3 բանկերում (2022թ. 648,647 հազար դրամ (66.1%) կենտրոնացած են 3 բանկերում):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2023թ.		2022թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	21	21	51	51
Կորուստների գծով պահուստների գուտ վերաչափում	(16)	(16)	(30)	(30)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>5</u>	<u>5</u>	<u>21</u>	<u>21</u>

15 Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Արժույթի և տոկոսադրույթի սվոփերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Ընկերության պարտքային ռիսկը ներկայացնում է սվոփային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			31 դեկտեմբերի 2022թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավո- րությունների իրական արժեք	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավո- րությունների իրական արժեք
<i>Արտարժույթով պայմանագրեր</i>						
Արտաժողովային սվոփ պայմանագրեր	-	-	-	2,190,234	-	9,856
Այլ ածանցյալ գործիքներ	-	-	-	34,658	-	543
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ						10,399

16 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ավանդներ բանկերում	3,569,775	1,378,599
	3,569,775	1,378,599
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(9,040)	(16,882)
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,560,735	1,361,717

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,521,673 հազար դրամ համախառն գումարով բանկերում բոլոր ավանդները գրավադրված են բանկերից վարկերի դիմաց (2022թ.՝ զրո) ((տես՝ ծանոթագրություն 25):

Ավանդները բանկերում ունեն 90 օրից ավել մարման ժամկետ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2023թ.		2022թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	16,882	16,882	-	-
Կորուստների գծով պահուստների գուտ վերաչափում	(7,842)	(7,842)	16,882	16,882
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,040	9,040	16,882	16,882

17 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			31 դեկտեմբերի 2022թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>	13,087,053	(750,741)	12,336,312	11,907,273	(1,418,328)	10,488,945
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>						
Հիփոթեքային վարկեր	190,934	(2,633)	188,301	81,694	(101)	81,593
Սպառողական վարկեր	3,394,460	(363,099)	3,031,361	3,146,640	(1,143,084)	2,003,556
	3,585,394	(365,732)	3,219,662	3,228,334	(1,143,185)	2,085,149
<i>Առևտրային վարկեր</i>						
Առևտուր	3,261,819	(118,325)	3,143,494	3,771,410	(222,266)	3,549,144
Արտադրություն	748,144	(27,863)	720,281	973,476	(34,843)	938,633
Տրանսպորտ	697,345	(15,389)	681,956	691,477	(22,869)	668,608
Ծառայություն	274,354	(9,597)	264,757	407,346	(12,085)	395,261
Շինարարություն	75,582	(253)	75,329	45,327	(1,165)	44,162
Այլ	655,791	(37,152)	618,639	802,018	(53,976)	748,042
	5,713,035	(208,579)	5,504,456	6,691,054	(347,204)	6,343,850
Ընդամենը	22,385,482	(1,325,052)	21,060,430	21,826,661	(2,908,717)	18,917,944

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը ձեռք չի բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավներ (2022թ. նույնպես):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի էական կենսորոնացում:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված 136,823 հազար դրամ համախառն գումարով (2022թ.՝ 30,600 հազար դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը կարող է զիջվել ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի համար և 3,421,540 հազար դրամ համախառն գումարով (2022թ.՝ 3,693,562 հազար դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը՝ ՀՀ կենտրոնական բանկից միջազգային ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի համար (տես ծանոթագրություն 25):

Գյուղատնտեսական, հիփոթեքային և սպառողական և առևտրային վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2023			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	9,349,120	423,838	2,134,315	11,907,273
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	10,658,855	103,779	84,805	10,847,439
Մարված ակտիվներ	(9,182,386)	(222,373)	(589,444)	(9,994,203)
- փոխանցում Փուլ 1	11,772	(9,693)	(2,079)	-
- փոխանցում Փուլ 2	(178,826)	205,085	(26,259)	-
- փոխանցում Փուլ 3	(228,508)	(142,756)	371,264	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերազնահատումից	1,544,796	(27,661)	(181,616)	1,335,519
Վերականգնում	-	-	540,848	540,848
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,549,823)	(1,549,823)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>11,974,823</u>	<u>330,219</u>	<u>782,011</u>	<u>13,087,053</u>

Հազար ՀՀ դրամ

2023

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	2,281,681	116,044	830,609	3,228,334
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	3,243,897	63,723	33,983	3,341,603
Մարված ակտիվներ	(2,610,211)	(74,843)	(136,497)	(2,821,551)
- փոխանցում Փուլ 1	2,854	(2,854)	-	-
- փոխանցում Փուլ 2	(74,438)	77,701	(3,263)	-
- փոխանցում Փուլ 3	(82,995)	(51,953)	134,948	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	348,512	3,763	(137,733)	214,542
Վերականգնում	-	-	120,858	120,858
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(498,392)	(498,392)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,109,300	131,581	344,513	3,585,394

Հազար ՀՀ դրամ

2023

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Առևտրային վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	5,880,034	172,694	638,326	6,691,054
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	3,324,235	85,825	4,735	3,414,795
Մարված ակտիվներ	(4,618,515)	(161,933)	(254,645)	(5,035,093)
- փոխանցում Փուլ 1	8,045	(8,045)	-	-
- փոխանցում Փուլ 2	(146,515)	202,730	(56,215)	-
- փոխանցում Փուլ 3	(87,167)	(54,604)	141,771	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	858,458	20,694	(144,285)	734,867
Վերականգնում	-	-	253,474	253,474
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(346,062)	(346,062)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,218,575	257,361	237,099	5,713,035

Հազար ՀՀ դրամ

2022

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	8,346,895	703,013	3,872,601	12,922,509
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	7,921,743	70,158	22,629	8,014,530
Մարված ակտիվներ	(7,707,443)	(439,448)	(709,242)	(8,856,133)
- փոխանցում Փուլ 1	27,820	(21,639)	(6,181)	-
- փոխանցում Փուլ 2	(200,427)	294,266	(93,839)	-
- փոխանցում Փուլ 3	(176,074)	(213,622)	389,696	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	1,136,606	31,110	45,271	1,212,987
Վերականգնում	-	-	194,432	194,432
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,581,052)	(1,581,052)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,349,120	423,838	2,134,315	11,907,273

Հազար ՀՀ դրամ

2022

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	2,015,925	163,889	1,501,079	3,680,893
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,476,719	55,481	22,190	2,554,390
Մարված ակտիվներ	(2,441,283)	(116,025)	(191,077)	(2,748,385)
- փոխանցում Փուլ 1	3,686	(3,686)	-	-
- փոխանցում Փուլ 2	(53,916)	68,947	(15,031)	-
- փոխանցում Փուլ 3	(76,796)	(70,052)	146,848	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	357,346	17,490	115,753	490,589
Վերականգնում	-	-	66,057	66,057
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(815,210)	(815,210)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,281,681	116,044	830,609	3,228,334

Հազար ՀՀ դրամ

2022

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Առևտրային վարկեր</i>				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	4,619,107	325,033	1,570,448	6,514,588
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	4,846,295	20,690	8,200	4,875,185
Մարված ակտիվներ	(3,885,301)	(242,434)	(459,276)	(4,587,011)
- փոխանցում Փուլ 1	5,107	(4,440)	(667)	-
- փոխանցում Փուլ 2	(76,262)	141,833	(65,571)	-
- փոխանցում Փուլ 3	(60,938)	(70,236)	131,174	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	432,026	2,248	54,552	488,826
Վերականգնում	-	-	95,913	95,913
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(696,447)	(696,447)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,880,034	172,694	638,326	6,691,054

Գյուղատնտեսական, հիփոթեքային և սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

2023

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,171,104	61,348	185,876	1,418,328
- փոխանցում Փուլ 1	5,446	(5,435)	(11)	-
- փոխանցում Փուլ 2	(15,248)	17,537	(2,289)	-
- փոխանցում Փուլ 3	(40,978)	(28,022)	69,000	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(1,039,241)	(13,630)	1,168,159	115,288
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվների գծով	170,743	18,997	36,360	226,100
Վերականգնում	-	-	540,848	540,848
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,549,823)	(1,549,823)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	251,826	50,795	448,120	750,741

Հազար ՀՀ դրամ

2023

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	878,154	46,953	218,078	1,143,185
- փոխանցում Փուլ 1	867	(867)	-	-
- փոխանցում Փուլ 2	(13,158)	15,966	(2,808)	-
- փոխանցում Փուլ 3	(26,534)	(20,645)	47,179	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(816,810)	(28,015)	321,845	(522,980)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվների գծով	84,600	18,706	19,755	123,061
Վերականգնում	-	-	120,858	120,858
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(498,392)	(498,392)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	107,119	32,098	226,515	365,732

Հազար ՀՀ դրամ

2023

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Առևտրային վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	270,911	13,777	62,516	347,204
- փոխանցում Փուլ 1	727	(727)	-	-
- փոխանցում Փուլ 2	(8,815)	10,041	(1,226)	-
- փոխանցում Փուլ 3	(5,665)	(2,160)	7,825	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(214,041)	(6,111)	140,721	(79,431)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվների գծով	26,377	6,623	394	33,394
Վերականգնում	-	-	253,474	253,474
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(346,062)	(346,062)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	69,494	21,443	117,642	208,579

Հազար ՀՀ դրամ

2022

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	157,402	85,126	2,413,430	2,655,958
- փոխանցում Փուլ 1	7,292	(4,531)	(2,761)	-
- փոխանցում Փուլ 2	(4,208)	47,946	(43,738)	-
- փոխանցում Փուլ 3	(3,681)	(46,024)	49,705	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	372,051	(30,626)	(848,538)	(507,113)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվների գծով	642,248	9,457	4,398	656,103
Վերականգնում	-	-	194,432	194,432
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,581,052)	(1,581,052)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,171,104	61,348	185,876	1,418,328

Հազար ՀՀ դրամ

2022

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	58,085	31,643	1,080,739	1,170,467
- փոխանցում Փուլ 1	1,160	(1,160)	-	-
- փոխանցում Փուլ 2	(1,825)	8,732	(6,907)	-
- փոխանցում Փուլ 3	(2,561)	(19,442)	22,003	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	215,545	14,176	(135,967)	93,754
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվների գծով	607,750	13,004	7,363	628,117
Վերականգնում	-	-	66,057	66,057
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(815,210)	(815,210)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	878,154	46,953	218,078	1,143,185

Հազար ՀՀ դրամ

2022

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
<i>Առևտրային վարկեր</i>				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	69,142	33,694	941,005	1,043,841
- փոխանցում Փուլ 1	855	(558)	(297)	-
- փոխանցում Փուլ 2	(1,193)	33,331	(32,138)	-
- փոխանցում Փուլ 3	(1,348)	(14,907)	16,255	-
Կորուստների գծով պահուստների գուտ վերաչափում	62,797	(38,495)	(263,509)	(239,207)
Կորուստների գծով պահուստների գուտ վերաչափում սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվների գծով	140,658	712	1,734	143,104
Վերականգնում	-	-	95,913	95,913
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(696,447)	(696,447)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	270,911	13,777	62,516	347,204

Ինչպես նշված է 31 ծանոթագրությունում, 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է 33 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 34 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է 30 ծանոթագրությունում:

18 Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր</i>		
ՀՀ պետական պարտատուներ	124,735	-
Ակնկալվող պարտկային կորուստների պահուստ	(134)	-
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	124,601	-

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
<i>Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր</i>		
ՀՀ պետական պարտատոմսեր	1,540,535	202,296
Ակնկալվող պարտկային կորուստների պահուստ	(1,653)	(223)
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	<u>1,538,882</u>	<u>202,073</u>

Ամորտիզացված արժեքով չափվող՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2023թ.		2022թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	223	223	-	-
Կորուստների գծով պահուստների գուտ վերաչափում	1,564	1,564	223	223
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1,787</u>	<u>1,787</u>	<u>223</u>	<u>223</u>

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.		31 դեկտեմբերի 2022թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	7.15	2025	7.15	2025

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Ընկերությունը տարվա ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող (2022թ.՝ ոչինչ):

19 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	<u>Ընդամենը</u>
Սկզբնական արժեք	
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	1,007,968
Վերաչափում	421,192
Վարձակալության դադարեցումներ	(207,344)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,221,816
Ավելացում	9,481
Վերաչափում	4,784
Վարձակալության դադարեցումներ	(11,991)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,224,090
<i>Կուտակված մաշվածություն</i>	
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	567,779
Տարվա ծախս	190,418
Վարձակալության դադարեցումներ	(57,410)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	700,787
Տարվա ծախս	192,758
Վարձակալության դադարեցումներ	(11,991)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	881,554
<i>Հաշվեկշիռային արժեք</i>	
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	521,029
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	342,536

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի, մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Ընկերությունը, քանի որ դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Ընկերության արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները:

Ընկերությունը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

20 Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ

	Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Համակարգ- չային և այլ տեխնիկա	Գույք և գրասենյակային սարքավորում	Փոխադրա միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	272,109	528,573	329,442	63,074	219,134	1,412,332
Ավելացում	2,895	13,888	3,899	-	2,510	23,192
Օտարում	(5,551)	-	(859)	-	-	(6,410)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	269,453	542,461	332,482	63,074	221,644	1,429,114
Ավելացում	1,730	2,643	5,521	-	578	10,472
Վերադասակարգում	(2,221)	-	20	-	2,201	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	268,962	545,104	338,023	63,074	224,423	1,439,586
<i>Կուտակված մաշվածություն</i>						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	240,756	458,304	315,849	62,224	215,069	1,292,202
Տարվա ծախս	13,278	50,637	8,425	850	2,943	76,133
Օտարում	(4,898)	-	(859)	-	-	(5,757)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	249,136	508,941	323,415	63,074	218,012	1,362,578
Տարվա ծախս	7,409	23,293	4,310	-	1,278	36,290
Վերադասակարգում	(2,138)	-	20	-	2,118	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	254,407	532,234	327,745	63,074	221,408	1,398,868
<i>Հաշվեկշիռային արժեք</i>						
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,317	33,520	9,067	-	3,632	66,536
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,555	12,870	10,278	-	3,015	40,718

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,268,864 հազար դրամ (2022թ. 1,094,956 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2022թ. նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով (2022թ. նույնպես):

21 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	<u>Լիցենզիաներ</u>	<u>Համակարգչային ծրագրեր</u>	<u>Ընդամենը</u>
<i>Սկզբնական արժեք</i>			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	486,465	176,404	662,869
Ավելացում	41,176	10,800	51,976
Օտարում	-	(3,607)	(3,607)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>527,641</u>	<u>183,597</u>	<u>711,238</u>
Ավելացում	6,327	-	6,327
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>533,968</u>	<u>183,597</u>	<u>717,565</u>
<i>Կուտակված ամորտիզացիա</i>			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	408,798	55,063	463,861
Մասհանումներ	54,705	10,842	65,547
Օտարում	(8)	-	(8)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>463,495</u>	<u>65,905</u>	<u>529,400</u>
Մասհանումներ	31,940	10,230	42,170
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>495,435</u>	<u>76,135</u>	<u>571,570</u>
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>64,146</u>	<u>117,692</u>	<u>181,838</u>
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>38,533</u>	<u>107,462</u>	<u>145,995</u>

Պայմանագրային պարտավորություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվներում ներդրումներ կատարելու նպատակով (2022թ. նույնպես):

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ:

2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 501,282 հազար դրամ (2022թ.՝ 426,771 հազար դրամ):

22 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	1,444	727
Այլ ֆինանսական ակտիվներ	30,235	37,611
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	31,679	38,338
Կանխավճարված ծախսեր	7,132	12,799
Կանխավճարներ այլ հարկերի գծով	19,271	19,208
Կանխավճարներ	2,500	714
Նյութեր	19,383	15,998
Բռնագանձված ակտիվներ	4,953	10,077
Այլ ակտիվներ	282	-
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	53,521	58,796
Ընդամենը այլ ակտիվներ	85,200	97,134

Այլ ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյական արժեքի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում այս աղյուսակում:

Տարվա ընթացքում Ընկերության կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Անշարժ գույք	4,953	10,077
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	4,953	10,077

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Ընկերության քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Ընկերությունը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ

գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

23 Թողարկված պարտքային արժեթղթեր

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը			%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
		Քանակ	Քանակ	Քանակ			
30.05.2023	ՀՀ դրամ	50,000	16,000	13.00	30.05.2025	800,000,000	
30.05.2023	ԱՄՆ դոլար	100	17,919	7.50	30.05.2025	1,791,900	
10.02.2022	ՀՀ դրամ	10,000	140,000	12.00	10.02.2025	1,400,000,000	
20.04.2022	ԱՄՆ դոլար	25	42,130	6.50	20.04.2024	1,053,250	
21.06.2022	ՀՀ դրամ	10,000	25,000	12.50	21.06.2024	250,000,000	
21.06.2022	ԱՄՆ դոլար	25	27,385	6.50	21.06.2024	684,625	
16.11.2022	ԱՄՆ դոլար	25	40,000	7.50	16.11.2024	1,000,000	
16.11.2022	ՀՀ դրամ	10,000	50,182	13.00	16.11.2024	501,820,000	

Տարվա ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ (2022թ. նույնպես):

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2022թ. ոչինչ):

Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը թողարկված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

24 Հետգնման պայմանագրեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Հետգնման համաձայնագրեր բանկերի հետ	1,499,262	199,329
Ընդամենը հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	1,499,262	199,329

Հետգնման պայմանագրերով գրավադրված վարկերը ապահովված են 1,540,535 հազար դրամ համախառն գումարով ներդրումային արժեթղթերով (2022թ.՝ 202,296 հազար դրամ):

25 Այլ փոխառու միջոցներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	2,648,491	3,342,973
Վարկեր ՀՀ կենտրոնական բանկից	3,772,129	3,973,402
Վարկեր բանկերից	7,473,004	4,756,087
Վարկեր այլ ֆինանսական կազմակերպություններից	137,685	30,736
Վարկեր կապակցված կողմից (FINCA Microfinance Holding)	-	401,906
Ընդամենը այլ փոխառու միջոցներ	14,031,309	12,505,104

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ունի փոխառություններ 6 ֆինանսական հաստատություններից (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7 ֆինանսական հաստատություններից), որոնց մնացորդներից յուրաքանչյուրը գերազանցում է սեփական կապիտալի 10%: Այս մնացորդների համախառն արժեքը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 10,601,261 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 11,742,180 հազար դրամ):

2021թ. հունիսի 28-ին Ընկերությունը վարկային պայմանագիր է կնքել ՀՀ կենտրոնական բանկի հետ՝ «ՓՄՁ Աջակցություն» ծրագրի շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի միջև: Վարկի կառավարումն իրականացվում է Գերմանահայկական հիմնադրամի (PMU GAF) ծրագրերի կառավարման բաժնի կողմից: Ծրագրի շրջանակներում վարկավորումը հիմնված է վերաֆինանսավորման սկզբունքների վրա, ինչը նշանակում է, որ Ընկերությունը սկզբում վարկեր է տրամադրում սեփական միջոցներից, իսկ հետո դիմում է PMU GAF-ին վերաֆինանսավորման համար: Եթե տրամադրված վարկերը համապատասխանում են ծրագրի պահանջներին, ապա ՀՀ կենտրոնական բանկը վերաֆինանսավորում է այդ վարկերը: Վարկերը տրամադրվում են միայն տեղական արժույթով և հինգ տարի ժամկետով: ՀՀ-ում գործող մի քանի ֆինանսական հաստատություններ ևս մասնակցել են Ծրագրին նույն պայմաններով: Տոկոսադրույքը սահմանվում է Խորհրդի կողմից տարին երկու անգամ՝ ելնելով Կենտրոնական բանկի սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույքից և 5 տարվա պետական պարտատուների միջին եկամտաբերությունից, ինչպես նաև շուկայում ՓՄՁ վարկերի գնագոյացման ընդհանուր միտումից: Մինչև ժամանակ, Խորհուրդը սահմանում է այն արդյունավետ տոկոսադրույքը, որը GAF Ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի մասով կարող է գանձվել հաճախորդներից: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «ՓՄՁ Աջակցություն» ծրագրով վարկերի չմարված մնացորդը կազմել է 2,361,872 հազար ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,657,715 հազար ՀՀ դրամ):

2021թ. մայիսի 20-ին Ընկերությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքել են վարկային պայմանագիր «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագրի (երրորդ փուլ) շրջանակներում ՀՀ Կենտրոնական բանկի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի միջև: Վարկի կառավարումն իրականացնում է Գերմանական հիմնադրամի ծրագրերի կառավարման բաժինը (PMU GAF), ծրագրի շրջանակներում վարկավորումը հիմնված է վերաֆինանսավորման սկզբունքների վրա, ինչը նշանակում է, որ Կազմակերպությունը սկզբում տրամադրում է վարկեր սեփական միջոցներից, այնուհետև դիմում է PMI GAF-ին վերաֆինանսավորման համար: Եթե տրամադրված վարկերը համապատասխանում են Ծրագրի պահանջներին, ապա ՀՀ կենտրոնական բանկը վերաֆինանսավորում է այդ վարկերը: Վարկերը

տրամադրվում են միայն տեղական արժույթով և հինգ տարի ժամկետով: ՀՀ-ում գործող մի քանի ֆինանսական հաստատություններ ևս մասնակցել են Ծրագրին նույն պայմաններով: Տոկոսադրույքը սահմանվում է Խորհրդի կողմից տարին երկու անգամ՝ ելնելով Կենտրոնական բանկի սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույքից, ինչպես նաև շուկայում գյուղատնտեսական վարկերի գնագոյացման ընդհանուր միտումից: Մինևույն ժամանակ, Խորհուրդը սահմանում է այն արդյունավետ տոկոսադրույքը, որը GAF Ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի մասով կարող է գանձվել հաճախորդներից: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագրով տրամադրված վարկերի չմարված մնացորդը կազմել է 1,364,597 հազար ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,267,138 հազար ՀՀ դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 136,823 հազար դրամ համախառն գումարով (2022թ.՝ 30,600 հազար դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի զիջման հնարավորությամբ (տես ծանոթագրություն 17):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կենտրոնական Բանկից ներգրավված վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 3,421,540 հազար դրամ համախառն գումարով (2022թ.՝ 3,693,562 հազար դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի զիջման հնարավորությամբ (տես ծանոթագրություն 17):

Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ գոյություն չունեն այլ ֆինանսական գործիքներ, որոնք նման են ՀՀ ԿԲ-ից ստացված այլ փոխառու միջոցներին և վարկավորման պայմանների և հաճախորդների յուրահատուկ բնույթի, ինչպես նաև այլ մասնակիցներին, ինչպիսիք են այլ կոմերցիոն բանկերը, միջոցների հասանելիության արդյունքում այս պրոդուկտները ներկայացնում են առանձին շուկա: Արդյունքում, ՀՀ ԿԲ-ից այլ փոխառու միջոցները ստացվել են սովորական գործարքի միջոցով և հաշվեգրվել են իրական արժեքով սկզբնական ճանաչման ամսաթվին:

Ընկերությունը պարտավոր է համապատասխանել փոխառու միջոցներին առնչվող ֆինանսական սահմանափակումներին: Այս սահմանափակումները ներառում են սահմանված գործակիցներ՝ պարտավորություն սեփական կապիտալ հարաբերակցությունը և մի շարք այլ ֆինանսական գործակիցներ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը խախտել է Kiva Refugee Investment Fund LLC-ի փոխառությունների համաձայնագրերով նախատեսված որոշակի ֆինանսական սահմանափակումներ, որոնք վերաբերում են իրացվելիության կարճաժամկետ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերակցությանը: Փոխառու միջոցները հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնց նկատմամբ տեղի է ունեցել պայմանագրի խախտում, կազմել են 806,652 հազար դրամ: Համապատասխանաբար, այս ֆինանսական հաստատությունից փոխառությունները ժամկետային (33 ծանոթագրություն) և իրացվելիության (34.3 ծանոթագրություն) վերլուծությունում դասակարգվել են ցպաանջ և մինչև 1 ամիս կատեգորիայում:

Ընկերությունը փոխատուից ստացել է ներում, համաձայն որի փոխատուն ազատում է Ընկերությանը պայմանագրի խախտումներից 2023թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում (տես ծանոթագրություն 37):

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերից ստացված վարկերը ապահովված են ավանդի գրավադրմամբ՝ համապատասխանաբար 3,521,673 հազար դրամ համախառն գումարի չափով (2022թ.՝ ոչինչ) (տես ծանոթագրություն 16):

26 Վարձակալության գծով պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Վարձակալության գծով պարտավորություններ	399,573	578,768
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	<u>399,573</u>	<u>578,768</u>

Ընկերությունը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների (տե՛ս ծանոթագրություն 12)՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Հունվարի 1-ի դրությամբ	578,768	500,013
Վերաչափում	4,784	421,192
Ավելացում	9,481	-
Դադարեցում	-	(207,344)
Տոկոսի կուտակում	62,381	74,333
Վճարումներ	(255,841)	(209,426)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>399,573</u>	<u>578,768</u>

2023թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 13.2 % (2022թ. 13.2%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով չգեղջված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 34.3-ում:

27 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Վճարվելիք գումարներ	52,236	43,432
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	156,647	82,777
Սպառողական վարկերի գծով վճարվելիք գումարներ	21,311	22,898
Ստացված կանխավճարներ	39,564	12,321
Այլ ֆինանսական պարտավորություններ	48,640	21,278
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	318,398	182,706
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	74,146	61,167
Ընդամենը այլ պարտավորություններ	392,544	243,873

28 Մեփական կապիտալ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հայտարարված, թողարկված և շրջանառվող և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 4,905,960 հազ. դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 490,596 բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ անվանական արժեքով:

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 100% բաժնետոմսերը պատկանում են ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ-ին:

Ընկերության հիմնադիրը FINCA International Inc. հարկերից ազատված, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրվել և գործում է Նյու Յորքի նահանգային օրենքների համաձայն: FINCA International Inc.-ը 2011թ.-ին ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ-ին (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցություն (կոոպերատիվ), որի պաշտոնական գրասենյակը գտնվում է Նիդեռլանդների Ամստերդամ քաղաքում), փոխանցել է Ընկերության 100% բաժնետոմսերը (թվով 136,472 բաժնետոմս)՝ որպես Ընկերակցության անդամակցության վճար:

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերակցության անդամներն են՝

1. FINCA Microfinance Holding Company LLC սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ գրանցված ԱՄՆ-ի Դելավեր նահանգում, գրանցման հասցեն՝ ԱՄՆ, Դելավեր 19808, Վիլմինգտոն, բն. 400, Սենթըրվիլ խճուղի 2711: FINCA Microfinance Holding Company LLC-ն ունի 99% քվե՝ որպես Ընկերակցության A դասի անդամ և 1 քվե որպես Ընկերակցության Բ դասի անդամ:
2. FINCA International LLC՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ գրանցված ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգում, գրանցման հասցեն՝ ԱՄՆ, Մերիլենդ 21202, Բալթիմոր, 11 Իսթ Չեյս փողոց: FINCA International LLC-ն ունի 1% քվե Ընկերակցությունում:

2023 և 2022-թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA Microfinance Holding Company LLC-ի բաժնետերերն են հանդիսացել՝

Առաջին մակարդակի բաժնետերեր/թողարկված բաժնետիրական կապիտալի սեփականատերեր	%
FINCA International LLC	65.89
International Finance Corporation (Միջազգային ֆինանսական կորպորացիա)	14.27
KfW	8.87
Nederlandse Financierings Maatschappij voor Ontwikkelingslanden N.V.	7.25
ASN-NOVIB FONDS	1.66
Triodos Custody B.V.	1.03
Triodos SICAVI	1.03
Ընդամենը	100

FINCA International Inc. շահույթ չհետապնդող կորպորատիվ ընկերություն է, որը գործում է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենքների համաձայն, և որպես այդպիսին, դրա անդամները Ընկերությունում սեփականության իրավունք չունեն և չունեն տնտեսական իրավունքներ: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA International, Inc.-ի անդամները հետևյալն են. Ջուլի Հաուզերը, Ջոն Հեթչը, Ռոբերտ Հեթչը և Ռիչարդ Ուիլյամսոնը: FINCA International Inc.-ի ֆինանսական հաշվետվությունները հասանելի են հանրության համար:

FINCA International Inc.-ն ցածր եկամուտներ ունեցող անձանց տրամադրում է հաջողության հասնելու գործիքներ՝ նրանց առաջարկելով պատասխանատու ֆինանսական ծառայություններ, ինչպիսիք են փոքր վարկերը կամ խնայողական հաշիվները, հեռավոր համայնքների բնակիչների հետ տեխնոլոգիաների՝ բջջային հեռախոսների և պլանշետների միջոցով կապի հաստատում, ինչպես նաև մատչելի դարձնելով կյանքի որակը բարելավող ապրանքները: FINCA International Inc. իր գործունեությունը համայնքներում ծավալում է դուստր ընկերությունների միջոցով:

Դուստր ընկերությունները, սովորաբար, առանձին իրավաբանական անձինք են, որոնք մայր կազմակերպության հետ կնքել են համապատասխան համաձայնագրեր: Փոքր վարկերը հնարավորություն են տալիս ներդրումներ կատարել անհատական կամ համայնքային շահույթաբեր միկրո ձեռնարկություններում: Մասնակիցները բարելավում են իրենց վստահությունը սեփական հնարավորությունների նկատմամբ, արժանապատվության զգացումը և ստեղծում խնայողությունների ֆոնդ, որը պատկանում է համայնքին՝ որպես շարունակական ներդրումների մշտական աղբյուր:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

29 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ընկերության ներկայացվող դատական հայցերի առումով Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Ընկերությունը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

30 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու Էյ-ը:

Ընկերությունը իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը և այլ գործարքներ: Նշված գործարքները իրականացվել են շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

	2023		2022	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
<i>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</i>				
<i>Այլ փոխառու միջոցներ</i>				
Մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	401,906	-	887,177	-
Տարվա ընթացքում տրամադրված	19,972	-	1,104,019	-
Տարվա ընթացքում մարում	(421,878)	-	(1,589,290)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	401,906	-
<i>Այլ պարտավորություններ</i>				
Մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	-	-	-	-
Տարվա ընթացքում տրամադրված	42,356	-	18,744	-
Տարվա ընթացքում մարում	(36,793)	-	(18,744)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,563	-	-	-
<i>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</i>				
Տոկոսային ծախսեր փոխառությունների գծով	6,890	-	18,967	-
Այլ գործառնական ծախսեր (ռոյալթի և կառավարման վճարներ)	116,079	-	76,268	-
Կառավարման ծառայության վճարի ծախս	14,744	-	-	-
Այլ գործառնական ծախսեր (SS և այլ ծառայություններ)	228,015	-	204,694	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

	2023	2022
Աշխատավարձ և պարգևատրումներ	210,759	158,049
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	210,759	158,049

31 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված)։

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող)։

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ)։

31.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

				Ընդամենը	Ընդամենը
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	իրական արժեք	հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	881,703	-	881,703	881,703
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	3,560,735	-	3,560,735	3,560,735
Հաճախորդներին տրված վարկեր	-	23,487,823	-	23,487,823	21,060,430
Ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրվածները	-	1,673,058	-	1,673,058	1,663,483
Այլ ֆինանսական ակտիվներ	-	31,679	-	31,679	31,679
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,280,828	-	5,280,828	4,882,551
Հետգնման պայմանագրեր	-	1,499,262	-	1,499,262	1,499,262
Այլ փոխառու միջոցներ	-	14,031,309	-	14,031,309	14,031,309
Վարձակալության գծով պարտավորություններ	-	399,573	-	399,573	399,573
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	318,398	-	318,398	318,398

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	1,520,920	-	1,520,920	1,520,920
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	1,361,717	-	1,361,717	1,361,717
Հաճախորդներին տրված վարկեր	-	18,983,829	-	18,983,829	18,917,944
Ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրվածները	-	202,831	-	202,831	202,073
Այլ ֆինանսական ակտիվներ	-	38,338	-	38,338	38,338

Ֆինանսական պարտավորություններ

Թողարկված պարտքային արժեթղթեր	-	3,366,140	-	3,366,140	3,308,513
Հետգնման պայմանագրեր	-	199,329	-	199,329	199,329
Այլ փոխառու միջոցներ	-	12,505,104	-	12,505,104	12,505,104
Վարձակալության գծով պարտավորություններ	-	578,768	-	578,768	578,768
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	182,706	-	182,706	182,706

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի պարտքային ռիսկից և տատանվում են 11.2% մինչև 24% տարեկան (2022թ. 13.1% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք գեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք գեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Այլ փոխառու միջոցներ

Այլ փոխառու միջոցների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով գեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող փոխառու միջոցների համար առաջարկվող դրույքաչափերը:

31.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2022թ.

	<u>Մակարդակ 1</u>	<u>Մակարդակ 2</u>	<u>Մակարդակ 3</u>	<u>Ընդամենը</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	10,399	-	10,399
Ընդամենը	-	<u>10,399</u>	-	<u>10,399</u>
Զուտ իրական արժեք	-	<u>(10,399)</u>	-	<u>(10,399)</u>

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Ընկերությունը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Ընդհանրապես, Ընկերության կողմից իրականացվող ածանցյալները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Ընկերության կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժույթային սվոպ պայմանագրերից:

32 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների գուտ՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
			Ֆինանսական գործիքներ	Ստացված ոչ դրամական ապահովում	Զուտ
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Հետգնման պայմանագրեր (Օանոթ. 18, 24)	1,499,262	-	1,499,262	1,540,535	- (41,273)
Ընդամենը	1,499,262	-	1,499,262	1,540,535	- (41,273)

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2022թ.

Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների գուտ՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
			Ֆինանսական գործիքներ	Ստացված ոչ դրամական ապահովում	Զուտ
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Հետգնման պայմանագրեր (Օանոթ. 18, 24)	199,329	-	199,329	202,296	- (2,967)
Ընդամենը	199,329	-	199,329	202,296	- (2,967)

33 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չգեղջված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 34.3-ում:

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	881,703	-	881,703	-	-	-	881,703
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	3,560,735	3,560,735	-	-	-	3,560,735
Հաճախորդներին տրված վարկեր	1,462,525	8,429,872	9,892,397	11,079,972	88,061	11,168,033	21,060,430
Ամորտիզացված արժեքով չափվող գրավադրված ներդրումային արժեթղթեր	-	2,314	2,314	122,287	-	122,287	124,601
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,538,882	-	1,538,882	-	-	-	1,538,882
Այլ ֆինանսական ակտիվներ	31,679	-	31,679	-	-	-	31,679
	<u>3,914,789</u>	<u>11,992,921</u>	<u>15,907,710</u>	<u>11,202,259</u>	<u>88,061</u>	<u>11,290,320</u>	<u>27,198,030</u>
<i>Պարտավորություններ</i>							
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,877,610	1,877,610	3,004,941	-	3,004,941	4,882,551
Հետգնման պայմանագրեր	1,499,262	-	1,499,262	-	-	-	1,499,262
Այլ փոխառու միջոցներ	905,405	7,355,256	8,260,661	5,632,951	137,697	5,770,648	14,031,309
Վարձակալության գծով պարտավորություններ	17,179	172,652	189,831	209,742	-	209,742	399,573
Այլ ֆինանսական պարտավորություններ	52,236	266,162	318,398	-	-	-	318,398
	<u>2,474,082</u>	<u>9,671,680</u>	<u>12,145,762</u>	<u>8,847,634</u>	<u>137,697</u>	<u>8,985,331</u>	<u>21,131,093</u>
Զուտ դիրք	<u>1,440,707</u>	<u>2,321,241</u>	<u>3,761,948</u>	<u>2,354,625</u>	<u>(49,636)</u>	<u>2,304,989</u>	<u>6,066,937</u>
Կուտակված ճեղքվածք	<u>1,440,707</u>	<u>3,761,948</u>		<u>6,116,573</u>	<u>6,066,937</u>		

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,520,920	-	1,520,920	-	-	-	1,520,920
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	-	1,361,717	-	1,361,717	1,361,717
Հաճախորդներին տրված վարկեր	2,388,207	6,772,233	9,160,440	9,651,026	106,478	9,757,504	18,917,944
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	202,073	-	202,073	-	-	-	202,073
Այլ ֆինանսական ակտիվներ	727	37,611	38,338	-	-	-	38,338
	<u>4,111,927</u>	<u>6,809,844</u>	<u>10,921,771</u>	<u>11,012,743</u>	<u>106,478</u>	<u>11,119,221</u>	<u>22,040,992</u>
<i>Պարտավորություններ</i>							
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	84,989	84,989	3,223,524	-	3,223,524	3,308,513
Հետգնման պայմանագրեր	199,329	-	199,329	-	-	-	199,329
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	10,399	-	10,399	-	-	-	10,399
Այլ փոխառու միջոցներ	710,651	5,123,195	5,833,846	6,653,062	18,196	6,671,258	12,505,104
Վարձակալության գծով պարտավորություններ	14,943	178,822	193,765	379,153	5,850	385,003	578,768
Այլ ֆինանսական պարտավորություններ	30,878	151,828	182,706	-	-	-	182,706
	<u>966,200</u>	<u>5,538,834</u>	<u>6,505,034</u>	<u>10,255,739</u>	<u>24,046</u>	<u>10,279,785</u>	<u>16,784,819</u>
Զուտ դիրք	<u>3,145,727</u>	<u>1,271,010</u>	<u>4,416,737</u>	<u>757,004</u>	<u>82,432</u>	<u>839,436</u>	<u>5,256,173</u>
Կուտակված ճեղքվածք	<u>3,145,727</u>	<u>4,416,737</u>		<u>5,173,741</u>	<u>5,256,173</u>		

34 Ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Ընկերությունն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման

և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Ընկերության շահութաբերության կայունության ապահովման գործում, և Ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Ընկերությունը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Ընկերության կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Տնօրինության խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Ընկերության խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Վարչություն

Պատասխանատվություն է գործընթացների ներդրման և իրականացման համար, որոնք կապված են ռիսկերի կառավարման հետ, որպեսզի ապահովեն կառավարման անկախ գործընթացը: Իրականացնում է ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման աշխատանքները:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Ընկերության ռիսկի սահմանաչափերի համար: Յուրաքանչյուր բիզնես ստորաբաժանման կազմի մեջ մտնում է ապակենտրոնացված բաժին, որը պատասխանատու է ռիսկերի անկախ վերահսկման համար, այդ թվում սահմանված սահմանաչափերի համեմատ ռիսկի ենթարկվածության չափերի վերահսկումը, ինչպես նաև նոր արտադրանքների և համակարգված գործընթացների ռիսկի գնահատումը: Տվյալ բաժինը նաև ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքը:

Հաշվապահություն

Հաշվապահությունը պատասխանատու է Ընկերության ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ողջ ֆինանսական համակարգի համար: Հաշվապահական ստորաբաժանումը պատասխանատվություն է կրում նաև Ընկերության իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

Վերստուգող

Ընկերության կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում վերստուգողի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Ընկերության գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Վերստուգողի անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ընդհանուր ժողովին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Ընկերության ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Ընկերություն նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը, որոնք տեղի կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Ընկերության կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Ընկերության գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Ընկերությունը, ինչպես նաև Ընկերության համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Ընկերությունը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Ընկերությունը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Խորհրդին: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ կրեդիտային ռիսկի համապարփակ չափի, կանխատեսումային կրեդիտային ցուցանիշների, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, իրացվելիության ցուցանիշների և ռիսկի աստիճանի փոփոխության վերաբերյալ: Յուրաքանչյուր եռամսյակ տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ բնագավառների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների: Եռամսյակային կտրվածքով ավագ ղեկավարող անձնակազմը որոշում է պահուստի ստեղծման անհրաժեշտությունը վարկային կորուստների համար: Վարչությունը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Ընկերության ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Ընկերության բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Ընկերության բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Յուրաքանչյուր օր անց է կացվում կարճատև խորհրդակցություն ղեկավարության և Ընկերության այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, իրացվելիությունը, ինչպես նաև ռիսկի մակարդակում փոփոխությունները:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Ընկերության գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Ընկերության քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

34.1 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Ընկերությունն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Ընկերության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ընկերության Վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Ընկերության Խորհրդին:

Ընկերության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, պարտքային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսավորման կազմակերպությունների ռիսկերի կառավարման մեջ: Ջգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Ընկերությունը կիրառում է տարբեր մեթոդներ պարտքային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Միկրոֆինանսավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է պարտքային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի և բանկային ավանդների միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում: Այն մոնիտորինգի է ենթարկվում կանոնավորապես՝ պարտքային սահմանաչափերի և վարկունակության վերաբերյալ Ընկերության ռիսկի կառավարման քաղաքականությամբ սահմանված ուղենիշերի պահպանումն ապահովելու համար:

Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային Ռիսկերի բաժնի, Վարկային կոմիտեների և Ընկերության Վարչության կողմից: Նախքան որևէ հայտի կազմումը Վարկային կոմիտեի կողմից, վարկային գործընթացի վերաբերյալ բոլոր առաջարկությունները (վարկառուի սահմանաչափի հաստատում կամ վարկային պայմանագրերի մեջ փոփոխությունների կատարում և այլն) վերանայվում և հաստատվում են Վարկային ռիսկերի բաժնի կողմից: Ամենօրյա ռիսկերի կառավարումն իրականացվում է Վարկային Ռիսկերի բաժնի ղեկավարի կողմից:

Ընկերության պարտքային քաղաքականությունը սահմանված է մի շարք ներքին կանոնակարգերով, որտեղ հստակ սահմանված են բոլոր առնչվող պահանջները համապատասխան վերահսկողական մեխանիզմների հետ մեկտեղ, ներառյալ վարկի տրամադրումը, չվճարված վարկերի մոնիտորինգը և այլն:

Ընկերությունը շարունակաբար մոնիտորինգ է իրականացնում առանձին պարտքային ռիսկերի գծով և պարբերաբար վերանայում է իր հաճախորդների վարկունակությունը: Վերանայումը հիմնված է իրականացված ամենավերջին մոնիտորինգի և ֆինանսական վերլուծությունների վրա, ինչպես նաև փոխառուից, կամ որևէ այլ կերպ ստացված տեղեկությունների վրա:

Առանձին հաճախորդների վերլուծությունից բացի, վարկային պորտֆելը պարբերաբար վերլուծվում է Ներքին վերահսկողության բաժնի կողմից՝ կապված կենտրոնացման և շուկայական ռիսկերի հետ:

Վարկային կոմիտեն այն վերլուծող մարմինն է, որը պատասխանատու է վարկային հայտերում ամփոփված տեղեկատվությունը վերլուծելու և պարտքային ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար: Վարկային կոմիտեն Ընկերության ներսում անկախ մարմին է, որը լիազորված է կայացնելու վերջնական որոշում պարտքային հայտը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ:

Վարկային կոմիտե ներկայացվող տեղեկատվության ճշգրտությունը վարկային մասնագետի պատասխանատվությունն է, ով լրացնում է նախնական հայտը դիմողի բիզնեսի և պարտքային

ռիսկերի պատշաճ ուսումնասիրությունից հետո: Ի վերջո Վարկային կոմիտեի անդամները գնահատում են հայտի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (դիմողի վարկային պատմությունը, ֆինանսական վիճակը, մրցակցային ունակությունը և այլն):

Յուրաքանչյուր մասնաճյուղ պարտավոր է կիրառել Ընկերության վարկային քաղաքականությունը և ընթացակարգերը՝ Ընկերության ներքին կարգերում սահմանված վարկավորման լիազորությունների շրջանակներում: Յուրաքանչյուր մասնաճյուղի ղեկավար վարկային բոլոր տեսակի խնդիրների վերաբերյալ զեկուցում է ղեկավարությանը: Յուրաքանչյուր մասնաճյուղ պատասխանատու է իր վարկային պորտֆելի որակի և կատարողականի համար, ինչպես նաև իր պորտֆելի ներսում առկա ռիսկերի վերահսկողության և մոնիտորինգի համար: Ներքին աուդիտի և Ներքին վերահսկողության բաժիններն իրականացնում են մասնաճյուղերի և Ընկերության վարկային գործընթացների կանոնավոր ստուգումներ:

Ընկերության Վարկային ռիսկերի բաժինն ուսումնասիրում է ժամկետանց վարկերի վերլուծությունը և հետամուտ է լինում ժամկետանց մնացորդների հավաքագրմանը: Ղեկավարությունը, հետևաբար, տեղին է համարում ժամկետանց վարկերի և այլ պարտքային ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

Ընկերությունը կանոնավորում է պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանափակելով մեկ վարկառուի կամ վարկառուների խմբի գծով, ինչպես նաև ըստ տնտեսության և աշխարհագրական սեգմենտների ռիսկի ընդունելի մակարդակները: Պարտքային ռիսկի սահմանաչափերն ըստ վարկառուի և ըստ վարկատեսակի հաստատում է Վարչությունը:

Վարկառուի գծով ռիսկը հետագայում սահմանափակվում է ենթասահմանաչափերով, որոնք վերաբերում են հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերին և սահմանվում են վարկային կոմիտեի կողմից: Փաստացի ռիսկերի համապատասխանությունը սահմանաչափերին հսկվում է օրական կտրվածքով՝ ապահովելու համար, որ Ընկերության կողմից սահմանված վարկային սահմանաչափերը և վարկունակության ուղեցույցները չեն խախտվում:

Ըստ նպատակահարմարության, և վարկերի մեծ մասի դեպքերում, Ընկերությունը ընդունում է գրավ կամ անձնական երաշխավորություն: Այնուամենայնիվ, վարկերի զգալի մասը տրված է անհատներին, որոնք այսպիսի ապահովության միջոցներ չեն կարող ձեռք բերվել: Այսպիսի ռիսկերը մոնիտորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

34.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Ընկերության՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 34.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ներքին վարկանիշեր				
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</i>				
Բարձր	556,236	-	-	556,236
Ստանդարտ	325,472	-	-	325,472
Համախառն հաշվեկշռային արժեք	881,708	-	-	881,708
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(5)	-	-	(5)
Զուտ հաշվեկշռային արժեք	881,703	-	-	881,703
<i>Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</i>				
Ստանդարտ	3,569,775	-	-	3,569,775
Համախառն հաշվեկշռային արժեք	3,569,775	-	-	3,569,775
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(9,040)	-	-	(9,040)
Զուտ հաշվեկշռային արժեք	3,560,735	-	-	3,560,735
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
Բարձր	11,974,823	-	-	11,974,823
Ստանդարտ	-	225,331	-	225,331
Ցածր	-	104,888	-	104,888
Չաշխատող	-	-	782,011	782,011
Համախառն հաշվեկշռային արժեք	11,974,823	330,219	782,011	13,087,053
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(251,826)	(50,795)	(448,120)	(750,741)
Զուտ հաշվեկշռային արժեք	11,722,997	279,424	333,891	12,336,312
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Բարձր	3,109,300	-	-	3,109,300
Ստանդարտ	-	75,810	-	75,810
Ցածր	-	55,771	-	55,771
Չաշխատող	-	-	344,513	344,513
Համախառն հաշվեկշռային արժեք	3,109,300	131,581	344,513	3,585,394
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(107,119)	(32,098)	(226,515)	(365,732)
Զուտ հաշվեկշռային արժեք	3,002,181	99,483	117,998	3,219,662

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ներքին վարկանիշեր				
<i>Առևտրային վարկեր</i>				
Բարձր	5,218,575	-	-	5,218,575
Ստանդարտ	-	209,825	-	209,825
Ոչ ստանդարդ	-	47,536	-	47,536
Չաշխատող	-	-	237,099	237,099
Համախառն հաշվեկշռային արժեք	5,218,575	257,361	237,099	5,713,035
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(69,494)	(21,443)	(117,642)	(208,579)
Զուտ հաշվեկշռային արժեք	5,149,081	235,918	119,457	5,504,456
<i>Ամորտիզացված արժեքով չափվող գրավադրված ներդրումային արժեթղթեր</i>				
Ստանդարտ	124,735	-	-	124,735
Համախառն հաշվեկշռային արժեք	124,735	-	-	124,735
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(134)	-	-	(134)
Զուտ հաշվեկշռային արժեք	124,601	-	-	124,601
<i>Հետզնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր</i>				
Ստանդարտ	1,540,535	-	-	1,540,535
Համախառն հաշվեկշռային արժեք	1,540,535	-	-	1,540,535
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(1,653)	-	-	(1,653)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,538,882	-	-	1,538,882
<i>Այլ ֆինանսական ակտիվներ</i>				
Ստանդարտ	31,679	-	-	31,679
Համախառն հաշվեկշռային արժեք	31,679	-	-	31,679
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	31,679	-	-	31,679

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ներքին վարկանիշեր				
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</i>				
Բարձր	535,199	-	-	535,199
Ստանդարտ	985,742	-	-	985,742
Համախառն հաշվեկշռային արժեք	1,520,941	-	-	1,520,941
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(21)	-	-	(21)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,520,920	-	-	1,520,920
<i>Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</i>				
Ստանդարտ	1,378,599	-	-	1,378,599
Համախառն հաշվեկշռային արժեք	1,378,599	-	-	1,378,599
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(16,882)	-	-	(16,882)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,361,717	-	-	1,361,717
<i>Գյուղատնտեսական վարկեր</i>				
Բարձր	9,349,120	-	-	9,349,120
Ստանդարտ	-	345,772	-	345,772
Ցածր	-	78,066	-	78,066
Չաշխատող	-	-	2,134,315	2,134,315
Համախառն հաշվեկշռային արժեք	9,349,120	423,838	2,134,315	11,907,273
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(1,171,104)	(61,348)	(185,876)	(1,418,328)
Զուտ հաշվեկշռային արժեք	8,178,016	362,490	1,948,439	10,488,945
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>				
Բարձր	2,281,681	-	-	2,281,681
Ստանդարտ	-	78,677	-	78,677
Ցածր	-	37,367	-	37,367
Չաշխատող	-	-	830,609	830,609
Համախառն հաշվեկշռային արժեք	2,281,681	116,044	830,609	3,228,334
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(878,154)	(46,953)	(218,078)	(1,143,185)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,403,527	69,091	612,531	2,085,149

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ներքին վարկանիշեր				
<i>Առևտրային վարկեր</i>				
Բարձր	5,880,034	-	-	5,880,034
Ստանդարտ	-	134,169	-	134,169
Ցածր	-	38,525	-	38,525
Չաշխատող	-	-	638,326	638,326
Համախառն հաշվեկշռային արժեք	5,880,034	172,694	638,326	6,691,054
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(270,911)	(13,777)	(62,516)	(347,204)
Զուտ հաշվեկշռային արժեք	5,609,123	158,917	575,810	6,343,850
<i>Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր</i>				
Ստանդարտ	202,296	-	-	202,296
Համախառն հաշվեկշռային արժեք	202,296	-	-	202,296
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(223)	-	-	(223)
Զուտ հաշվեկշռային արժեք	202,073	-	-	202,073
<i>Այլ ֆինանսական ակտիվներ</i>				
Ստանդարտ	38,338	-	-	38,338
Համախառն հաշվեկշռային արժեք	38,338	-	-	38,338
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	38,338	-	-	38,338

34.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Ընկերության արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Ընկերությունը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում պարտազանցում տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի նշանակալի աճը որոշելիս Ընկերությունը օգտագործում է հետևյալ երեք հայտանիշները՝

- Քանակական թեստ՝ հիմնված պարտազանցման հավանականության շարժի վրա

- «Վերանայման» կարգավիճակը,
- և 30 օր ժամկետանց լինելու հանգամանքը:

«Վերանայում» առաջանում է վարկային պայմանագրի վերակառուցման ժամանակ, այսինքն՝ տոկոսագումարի և մայր գումարի վճարման ժամկետների երկարաձգում վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում, որը տարբերվում է վարկի տրամադրման ժամանակ եղած վիճակից, և վարկառուն դիմել է Ընկերությանը վարկի վճարման ժամանակացույցի փոփոխման համար: Վարկային պայմանագրի վերանայվում է միայն այն ժամանակ, երբ Ընկերության համապատասխան ստորաբաժանումը համոզված է, որ վարկառուն կկարողանա վճարումները կատարել նոր ժամանակացույցին համապատասխան:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Ընկերությունը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Ընկերությունը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտագանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտագանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտագանցման տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտագանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտագանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտագանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտագանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխառվածությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանիշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's և Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և Ընկերությունը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ:

- 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական

փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:

- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Ընկերությունը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's և Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած B2 մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և Ընկերությունը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Ընկերության կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցե մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Ընկերությունը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են պարտազանցում տեղի ունենալու ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված՝ ոչ ժամկետանց ֆինանսական ակտիվները սահմանվում են որպես բարձր վարկանիշ ունեցող, մինչև 30 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ստանդարտ վարկանիշ ունեցող, ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ոչ ստանդարտ կամ ցածր և ավելի քան 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ չաշխատող վարկանիշ ունեցող) գործոններով, որոնք մատնանշում են պատազանցում տեղի ունենալու ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հաճախորդներին տրված վարկերի, փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորությունների համար միջին 12-ամսյա PD-ները ըստ յուրաքանչյուր վարկանիշի.

Հազար ՀՀ դրամ	Վարկանիշ	2023	2022
		12-ամսյա PD –ի միջակայք	12-ամսյա PD –ի միջակայք
Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	0.001-1.829%	0.002-0.767%
	Ոչ ստանդարտ	0.003-64.799%	0.002-50.868%
	Չաշխատող	100%	100%
Հիփոթեքային և սպառողական վարկեր	Ստանդարտ	0.001-1.829%	0.002-0.769%
	Ոչ ստանդարտ	0.003-70.882%	0.055-47.041%
	Չաշխատող	100%	100%
Առևտրային վարկեր	Ստանդարտ	0.001-1.826%	0.002-0.769%
	Ոչ ստանդարտ	0.027-37.391%	0.02-45.295%
	Չաշխատող	100%	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Ընկերությունը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեթուղի/իրական արժեթուղի՝ այլ համապատասխան ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Ընկերությունը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Խմբավորում՝ ըստ համանման պարտքային ռիսկի հատկանիշների

Պարտագանգման հաշվարկի նպատակով ֆինանսական ակտիվները բաժանվում են երկու սեգմենտի՝

- Փոքր վարկեր (մինչև 500,000 ՀՀ դրամ (1,235 ԱՄՆ դոլարին համարժեք))
- Միջին և մեծ վարկեր (500,000 ՀՀ դրամից կամ 1,235 ԱՄՆ դոլարից ավել)

Վերոնշյալ սեգմենտներն արտացոլում են հաճախորդների վարկունակության գնահատման մակարդակը, ընդ որում՝ մեծ վարկեր սեգմենտի համար կիրառվում են համեմատաբար ավելի խիստ գնահատականի չափորոշիչներ: Պատմական պարտագանգման դրույքաչափը օգտագործվում է որպես խստության ցուցանիշ, այնպես որ սեգմենտների միջև պարտագանգման դրույքաչափերի տարբերությունն առավելագույնի է հասցվում:

Վարկանիշային մոդել

Ողջ հասանելի տեղեկատվությունը (ծառայությունների խմբեր, արտադրության որոշումներ և այլն) օգտագործվում են յուրաքանչյուր սեգմենտի համար ներքին վարկանիշային ցուցանիշ ստանալու համար: Այսպիսով, ստեղծվում են համանման ռիսկի հատկանիշներով խմբեր, որոնք այնուհետև օգտագործվում են սեգմենտի պարտագանգման հավանականության կորի ճշգրտման համար:

Պարտագանգման սահմանում

Ընկերությունը համարում է ֆինանսական գործիքը պարտագանգման ենթարկված, և, հետևաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Ընկերությունը միջբանկային հաշիվները համարում է պարտագանգման ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Ընկերությունը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Ընկերությունը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտագանգման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուի համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն պարտագանգման ենթարկված է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,

- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Վերանայված և փոփոխված վարկեր

Ընկերությունը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Ընկերությունը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Ընկերության վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Ընկերությունը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Ընկերությունը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.4 ծանոթագրությունում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Փուլ 2-ում և Փուլ 3-ում ներառված ակտիվները, որոնք փոփոխվել են, և, հետևաբար, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համարվում են վերանայված՝ Ընկերության կողմից փոփոխությունների գծով կրած կորուստների հետ միասին:

Հազար ՀՀ դրամ	2023	2022
Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեք	47,405	102,550
Փոփոխությունից գուտ եկամուտ	2,701	75,841

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում Ընկերությունը փոփոխել է հաճախորդների որոշ վարկերի գծով դրամական միջոցների պայմանագրային հոսքերը: Բոլոր այդպիսի վարկերը փոխանցվել են առնվազն 2-րդ փուլ՝ հնարավոր կորուստների պահուստով, որը գնահատվում է ակնկալվող պարտքային վնասներին հավասար չափով:

Տարվա ընթացքում փոփոխված վարկերի դեպքում ամորտիզացված արժեքը վարկի փոփոխությունից անմիջապես առաջ և փոփոխության արդյունքում առաջացած շահույթում կամ վնասում ներկայացված է ստորև՝

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ամորտիզացված արժեքը մինչև փոփոխությունը	617,142	209,774
Արժեզրկման պահուստ	(331,965)	(129,300)
Հաճախորդներին տրամադրված գուտ վարկեր	285,176	80,474

Վերանայված վարկեր և կանխավճարներ

Վարկերը և կանխավճարները, ընդհանուր առմամբ, վերանայվում են հաճախորդների հետ շարունակական փոխհարաբերությունների շրջանակներում, կամ վարկառուի դրության անբարենպաստ փոփոխության արդյունքում: Վերջինի դեպքում վերանայումը կարող է հանգեցնել մարման ժամկետի կամ մարման ժամանակացույցի երկարաձգման, համաձայն որի, Ընկերությունը իրապես անբարենպաստ վիճակում գտնվող վարկառուներին առաջարկում է զեղչային տոկոսադրույքներ: Արդյունքում՝ տվյալ ակտիվը շարունակում է մնալ ժամկետանց և անհատապես արժեզրկված, ընդ որում՝ տոկոսի և մայր գումարի վճարումը թույլ չի տալիս վերականգնել ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը: Այլ դեպքերում վերանայումը կհանգեցնի նոր պայմանագրի ստորագրման, որն, ըստ էության, կդիտվի որպես նոր վարկ:

Հաճախորդների տրված վերակայված վարկերի հաշվեկշռային արժեքը 1,541,310 հազար դրամ է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,769,214 հազար դրամ):

Միկրոֆինանսավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է պարտքային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում: Այն մոնիտորինգի է ենթարկվում կանոնավորապես՝ վարկային սահմանաչափերի և վարկունակության վերաբերյալ Ընկերության ռիսկի կառավարման քաղաքականությամբ սահմանված ուղենիշերի պահպանումն ապահովելու համար:

Պարտագանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի պարտագանցման տեղի ունենալու հավանականությունը՝ սկզբնական

ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Մա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Պարտազանցման հավանականությունը մոդելավորելիս օգտագործվել է վիճակագրական «գոյատևման» մեթոդը՝ կիրառելով ձախողման ցուցանիշը:

Ձախողման ցուցանիշը որոշվում է ըստ Կոքսի համամասնական ռիսկերի մոդելի, որը կիսահարաչափական (պարամետրիկ) մոդել է: Այն կովարիացիաների համար օգտագործում է ենթադրյալ պարզ ձևերը, իսկ ազատ ցուցանիշների ճշգրիտ արժեքը որոշվում է մասնակի հավանականությամբ: Ելակետային տվյալները ստացվում են հարաչափական (պարամետրիկ) մեթոդներով: Մակրոէկոնոմիկական մոդելը/ծրագրահատվածը (miacroeconoriic overlay) կարող է ուղղակիորեն ներառվել ռիսկերի գնահատման գործառնություն ժամանակակից կախյալ փոփոխականի միջոցով: Ձախողման ստացված ցուցանիշների հիման վրա որոշվում է տվյալ պահին ("PIT") պարտազանցման հավանականությունը (PD), այն է՝ սահմանային PD ցուցանիշները տվյալ ժամանակահատվածի համար:

Դիտարկման համար կիրառվել են հինգ տարվա տվյալներ:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

LGD-ն դեֆոլտի ժամանակ հավանական կորստի մեծությունն է:

Ընկերությունը գնահատում է LGD-ի պարամետրերը վճարումները չկատարող կոնտրագենտների նկատմամբ հայցերի վերականգնման դրույքաչափերի պատմության հիման վրա: LGD մոդելը հաշվի է առնում միայն դրամական միջոցների վերադարձը: LGD-ն հաշվարկվում է գեղջված դրամական հոսքերի հիման վրա՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը որպես գեղջման գործակից:

Գրավով ապահովված վարկերն օգտագործում են գրավի արժեքը, այնինչ գրավով չապահովված և երաշխավորված վարկերն օգտագործում են դեֆոլտից վերականգնման դրույքաչափը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Մա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար պարտազանցման տեղի ունենալու ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում պարտազանցման տեղի ունենալու պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Ընկերության պարտազանցումների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Ընկերությունը օգտագործում է տեղեկատվություն

երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Ընկերությունը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Ակնկալվող պարտքային կորուստների մակրոտնտեսական ճշգրտումը հաշվարկելու համար Ընկերությունն օգտագործում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակ՝ որպես իր մոդելների տնտեսական ներածություն, ներառյալ.

- ՀՆԱ-ի աճի իրական տեմպը

Ստորև աղյուսակում նկարագրված են տնտեսական սցենարներում ներառված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք օգտագործելվել են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2024-2028թթ. համար:

	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.	2028թ.
ՀՆԱ անվանական չիմնական աճի ցուցանիշ, %	9.94	9.18	9.07	8.87	9.34

34.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեզմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն ամբողջությամբ տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

34.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևյալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝ դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշտության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում:

Հաճախորդներին տրամադրված վարկերի գծով համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Անշարժ գույք	5,686,789	5,954,004
Ավտոմեքենա	2,362,343	2,387,089
Այլ գրավներ	37,462	105,045
Ոսկյա զարդեր և ոսկյա այլ իրեր	2,847	14,959
Առանց գրավ	14,296,041	13,365,564
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ (համախառն)	22,385,482	21,826,661

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես սահմանափակ արժեքով:

2023թ. դեկտեմբերի 31-ին հաճախորդներին տրամադրված վարկային ռիսկ պարունակող վարկեր առկա չեն (2022թ.՝ 4,478 հազար դրամ), որոնց գծով պահուստ չի ձևավորվել, քանի որ գրավի գեղչված արժեքը գերազանցում է վարկի գումարը և այդ վարկերը հիմնականում ապահովված են ավտոմեքենաներով:

34.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Ընկերության շուկայական ռիսկերը կենտրոնացված են միայն ոչ առևտրային պորտֆելում: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Ընկերությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

34.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույթի ռիսկ

Տոկոսադրույթի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Ընկերության Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2023թ. և 2022թ. դեկտեմբերի

31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2023		2022	
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլլար
<i>Տոկոսաբեր ակտիվներ</i>				
Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	-	3.7	-	3.3
Հաճախորդներին տրված վարկեր	30.9	23.9	27.1	20.6
Ամորտիզացված արժեքով չափվող գրավադրված ներդրումային արժեթղթեր	-	6.4	-	6.8
<i>Տոկոսակիր պարտավորություններ</i>				
Թողարկված պարտքային արժեթղթեր	13.0	7.4	12.7	7.2
Հետգնման պայմանագրեր	10.5	5.1	11.9	-
Այլ փոխառություններ	9.8	8.1	8.6	7.9

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժույթային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազամավարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հնկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			31 դեկտեմբերի 2022թ.		
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
ԱՄՆ դոլար	+10	(8,344)	(8,344)	+10	(432,830)	(432,830)
Եվրո	+10	2,308	2,308	+10	1,572	4,572
Ռուսական ռուբլի	+10	1	1	+10	4	4

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	281,777	588,145	11,781	881,703
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	3,560,735	-	3,560,735
Հաճախորդներին տրված վարկեր	19,387,184	1,673,246	-	21,060,430
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	1,663,483	-	1,663,483
Այլ ֆինանսական ակտիվներ	31,679	-	-	31,679
	19,700,640	7,485,609	11,781	27,198,030
<i>Պարտավորություններ</i>				
Թողարկված պարտքային արժեթղթեր	3,036,382	1,846,169	-	4,882,551
Հետգնման պայմանագրեր	988,499	510,763	-	1,499,262
Այլ փոխառություններ	8,859,182	5,172,127	-	14,031,309
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն	399,573	-	-	399,573
Այլ ֆինանսական պարտավորություններ	301,438	16,911	49	318,398
Ընդամենը	13,585,074	7,545,970	49	21,131,093
Զուտ դիրք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,115,566	(60,361)	11,732	6,066,937

	Ազատ փոխարկելի արժույթ		Ոչ փոխարկելի արժույթ	
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	16,914,450	5,086,755	39,787	22,040,992
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	9,555,447	7,218,949	24	16,774,420
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	(2,190,234)	2,180,378	(543)	(10,399)
Զուտ դիրք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,168,769	48,184	39,220	5,256,173

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

34.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 33-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար:

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	Ընդամենը		5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռա- յին արժեք
		1 - 12 ամիս	1-5 տարի			
<i>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</i>						
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,994,551	3,416,095	-	5,410,646	4,882,551
Հետգնման պայմանագրեր	1,499,965	-	-	-	1,499,965	1,499,262
Այլ փոխառու միջոցներ	986,202	7,718,629	6,270,796	221,857	15,197,484	14,031,309
Վարձակալության գծով պարտավորություններ	22,353	216,289	235,449	-	474,091	399,573
Այլ ֆինանսական պարտավորություններ	52,236	266,162	-	-	318,398	318,398
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,560,756	10,195,631	9,922,340	221,857	22,900,584	21,131,093

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2022թ.

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	Ընդամենը		5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռա- յին արժեք
		1 - 12 ամիս	1-5 տարի			
<i>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</i>						
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	251,186	3,696,280	-	3,947,466	3,308,513
Հետգնման պայմանագրեր	199,943	-	-	-	199,943	199,329
Այլ փոխառու միջոցներ	743,212	5,763,089	7,292,693	23,174	13,822,168	12,505,104
Վարձակալության գծով պարտավորություններ	21,195	255,955	416,100	6,080	699,330	578,768
Այլ ֆինանսական պարտավորություններ	30,878	151,828	-	-	182,706	182,706
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	995,228	6,422,058	11,405,073	29,254	18,851,613	16,774,420
<i>Ածանցյալ գործիքներ</i>						
Ներհոսք	34,115	-	-	-	34,115	-
Արտահոսք	(34,658)	-	-	-	(34,658)	543
<i>Արտարժույթի սվոպ պայմանագրեր</i>						
Ներհոսք	2,180,378	-	-	-	2,180,378	-
Արտահոսք	(2,190,234)	-	-	-	(2,190,234)	9,856
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	10,399	-	-	-	10,399	10,399

34.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Հնկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Հնկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Վարչությունը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Հնկերության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է վերստուգողի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Վերստուգողի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Հնկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

34.5 Կլիմայի հետ կապված ռիսկեր

Հնկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բխվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, երաշտը և ծովի մակարդակի բարձրացումը և վտանգները:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ գրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

35 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

	Թողարկված պարտքային արժեթղթեր	Հետգնման պայմանագրեր	Այլ փոխառու միջոցներ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ֆինանսավորման գործունեությունից ընդամենը պարտավորություններ
Հաշվեկշռային արժեք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,540,061	-	10,435,446	500,013	14,475,520
Մուտքեր	3,399,678	394,952	13,934,380	421,192	18,150,202
Մարումներ	(3,533,297)	(199,329)	(10,748,620)	(209,426)	(14,690,672)
Արտարժույթային փոխարկումներ	(97,929)	-	(1,112,638)	-	(1,210,567)
Այլ	-	3,706	(3,464)	(133,011)	(132,769)
Հաշվեկշռային արժեք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,308,513	199,329	12,505,104	578,768	16,591,714
Մուտքեր	1,994,915	5,308,216	13,436,317	14,265	20,753,713
Մարումներ	(484,365)	(4,010,714)	(12,062,377)	(255,841)	(16,813,297)
Արտարժույթային փոխարկումներ	63,488	2,431	150,859	-	216,778
Այլ	-	-	1,406	62,381	63,787
Հաշվեկշռային արժեք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,882,551	1,499,262	14,031,309	399,573	20,812,695

«Այլ» տողում ներառված են նոր ձևավորված վարձակալության գծով պարտավորությունները և անկանխիկ շարժում հանդիսացող վարձակալության վերանայումները: Այն նաև ներառում է թողարկված պարտքային արժեթղթերի, հետգնման պայմանագրերի, այլ փոխառու միջոցների և վարձակալության գծով պարտավորությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված

տոկոսները: Ընկերությունը դասակարգում է վճարված տոկոսները որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

36 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք Ընկերության գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվների միջոցով:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետիրոջը կամ բաժնետոմսեր թողարկել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 10%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է այլ պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Հիմնական կապիտալ	6,050,695	5,121,715
Ռիսկով կշռված ակտիվներ	21,758,479	17,682,890
Կապիտալի համարժեքության նորմատիվ	27.8%	28.9%

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտարժույթի առք ու վաճառք իրականացնող վարկային կազմակերպությունների համար սահմանվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,000,000 հազ. դրամ:

37 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

Ընկերությունը փոխատուից ստացել է ներում, որն ուժի մեջ է մտնում 2024 թվականի փետրվարի 20-ից, որի համաձայն փոխատուն ազատում է Ընկերությանը պայմանագրի խախտումներից 2023թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Այս ներումը իր բնույթով սահմանափակ է և չի համարվում որպես ներում որևէ այլ դեֆոլտի կամ վարկային պայմանագրի պայմանների նախկին, առկա կամ ապագա խախտման համար (տես Ծանոթագրություն 25):